



EUROPEAN  
ENDOWMENT  DEMOCRACY

«Հայաստանի քաղաքական գործընթացներում  
քաղաքացիական հասարակության դերի բարձրացում» ծրագիր

**ՀՀ Սահմանադրական  
բարեփոխումների վերաբերյալ  
հետազոտության արդյունքներ**



## Բովանդակություն

Ներածություն.....	4
Մեթոդաբանություն.....	6
Մաս 1. Որակական հետազոտության արդյունքներ.....	10
Սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը.....	10
Հայեցակարգի ընդհանուր բնույթի հարցերի շուրջ.....	28
Մարդու իրավունքներ.....	32
Կառավարման համակարգ.....	47
Ընտրական իրավունքը և ընտրական համակարգ.....	63
Դատական համակարգ.....	71
Հանրաքվեի սահմանադրական երաշխիքները.....	78
Տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական բարեփոխումների հայեցակարգային հիմնադրույթները.....	83
Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ.....	88
Սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը.....	88
Մարդու իրավունքներ.....	91
Կառավարման համակարգ.....	94
Ընտրական իրավունքը և ընտրական համակարգ.....	99
Դատական համակարգ.....	101
Հանրաքվեի սահմանադրական երաշխիքները.....	103
Տեղական ինքնակառավարման մարմինները.....	106
Ժողովրդավարություն.....	109
Բավարարվածություն երկրի սոցիալ-տնտեսական վիճակից.....	111
Սոցիալ-ժողովրդագրական տվյալներ.....	113
ԱՄՓՈՓՈՒՄ.....	118
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ.....	124
Հավելված 1. Սահմանադրական բարեփոխումների առաջարկներ՝ հիմնված հասարակական կարծիքի և փորձագիտական ուսումնասիրությունների վրա.....	129

## Ներածություն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունվել է 1995թ.: Դա ժողովրդավարության հաստատմանն ուղղված կարևորագույն գործողություններից մեկն էր: Սահմանադրությամբ քայլ է արվել դեպի պետական իշխանության ինստիտուտների աստիճանական կայացումը, մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքներ ապահովելուն և այլն: Սակայն հետագայում հասարակական պրակտիկայում առկա գործընթացները, սահմանադրական փորձի պակասը, հասարակական հարաբերությունների զարգացման ու ժողովրդավարության արմատավորման նոր խնդիրները, Եվրոպայի խորհրդին անդամակցելու առնչությամբ երկրի ստանձնած իրավական բարեփոխումների պարտավորությունները թելադրեցին սահմանադրական բարեփոխումների իրականացման անհրաժեշտություն: Այդ անհրաժեշտությունից ելնելով՝ 2005թ. Սահմանադրության մեջ մտցվեցին մի շարք փոփոխություններ:

2013թ. կարևորագույն քաղաքական գործընթացներից եղավ սահմանադրական բարեփոխումներ իրականացնելու՝ ՀՀ Նախագահի նախաձեռնությունը: Նախագահի 2013թ. սեպտեմբերի 4-ի հրամանագրով ձևավորվեց սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով, որի հիմնական գործառույթն է կատարել ՀՀ Սահմանադրության ամբողջական վերլուծություն և մշակել բարեփոխումների առաջարկներ: Հանձնաժողովը պարտավորություն վերցրեց իրականացնել իր այդ գործառույթը՝ ելնելով իրավունքի գերակայության սկզբունքի իրացման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերը կատարելագործելու, իշխանությունների հավասարակշռումն ապահովելու և հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից: Հանձնաժողովի կողմից մշակվել է ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծ, որը ներկայումս հանդիսանում է քննարկումների առարկա և դեռևս լրամշակման փուլում է:

2014թ. ապրիլից «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» (APR Group) հասարակական կազմակերպությունը **Հանուն ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի** աջակցությամբ սկսել է իրականացնել «Հայաստանի քաղաքական գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացում» ծրագիրը: Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՀՀ քաղաքացիների մասնակցությունը երկրում տեղի ունեցող քաղաքական գործընթացներում. մասնավորապես՝ ուսումնասիրությունների միջոցով ստանալ հասարակության տարբեր խմբերի կարծիքները և առաջարկները սահմանադրական բարեփոխումների առնչությամբ, ինչպես նաև բարձրացնել ժողովրդի իրազեկվածության մակարդակը նախաձեռնված փոփոխությունների վերաբերյալ:

Ծրագիրը բաղկացած է երկու հիմնական բաղադրիչներից՝ սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ **ուսումնասիրությունների անցկացում** և տեղեկատվության

ստացում, բարեփոխումների վերաբերյալ առաջարկների մշակում և ներկայացում և **իրագրելում**՝ հանրային միջոցառումների կազմակերպման, ՁԼՄ-ներով հեռարձակումների և այլ միջոցներով: Այսպիսով՝ ուսումնասիրությունների արդյունքները լայնորեն կշրջանառվեն ինչպես մասնագիտական, այնպես էլ հասարակական շրջանակներում, սահմանադրական բարեփոխումների թեմայով կիրականացվի շահերի պաշտպանության լայնածավալ քարոզարշավ:

Ծրագրում ներգրավված են այնպիսի փորձառու մասնագետներ, ինչպիսիք են իրավաբաններ Ա.Ղազարյանը, Հ.Տիգրանյանը, Տ.Մատինյանը, սոցիոլոգ Լ.Բալյանը և այլոք: Ծրագրի պատասխանատուն է APR Group ՀԿ-ի ղեկավար Ռ.Սարգսյանը:

*Այս հրապարակումը պատրաստվել է Հանուն Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի աջակցությամբ: Այստեղ ամփոփված են հեղինակների տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները, որոնց համար պատասխանատվություն է կրում Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ ՀԿ-ն և որոնք կարող են չհամընկնել Հանուն Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի տեսակետների հետ:*

## Մեթոդաբանություն

Ծրագրի շրջանակներում 2014թ-ի ապրիլ-հուլիս ամիսների ընթացքում իրականացվել են որակական և քանակական ուսումնասիրություններ: Ուսումնասիրության արդյունքները ենթարկվել են սոցիոլոգիական վերլուծության, ինչպես նաև դրանց տրվել է իրավական մեկնաբանություն և կազմվել է առաջարկների փաթեթ:

### Որակական ուսումնասիրություն

Որակական ուսումնասիրության հիմնական **նպատակն է պարզել մասնագետների կարծիքները սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ:**

**Խնդիրներն են՝** վերհանել ա) ներկայիս ՀՀ Սահմանադրության բացերը (եթե այդպիսիք կան), բ) ՀՀ նախագահին առընթեր Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակված «ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի» բացերը (եթե այդպիսիք կան), գ) դրանց հետ կապված անհրաժեշտ լրացումները, դ) փորձագետների առաջարկները:

Տեղեկատվության հավաքման աշխատանքները սկսվել են փորձագետների հետ խորին հարցազրույցների անցկացմամբ: Փորձագետների հետ տեղի են ունեցել դեմ առ դեմ հանդիպումներ, որոնց ընթացքում ազատ զրույցի արդյունքում ստացվել են վերջիններիս մասնագիտական գնահատականներն ու կարծիքները սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ: Որպես տեղեկատվության ստացման գործիք՝ կիրառվել են բաց հարցերով հարցաշարեր՝ բաղկացած մի քանի հարցախմբերից: Հարցաշարերը նախապես կազմվել են իրավաբան-փորձագետների և սոցիոլոգի համատեղ աշխատանքի արդյունքում՝ հիմնվելով ՀՀ Սահմանադրության վրա և հաշվի առնելով ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը: Հարցազրույցների ընթացքում հարցազրուցավարները հնարավորություն են ունեցել այս կամ այն հարցի շուրջ ավելի խորացնելու ստացվող տեղեկատվությունը՝ կախված այդ հարցերի շուրջ փորձագետների կոմպետենտության (քաջատեղյակության) աստիճանից:

Հարցազրույցները վարվել են հիմնական հետևյալ հարցախմբերի շրջանակներում՝

1. Սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը
2. Հայեցակարգի ընդհանուր բնույթի հարցերի շուրջ
3. Մարդու իրավունքներ
4. Կառավարման համակարգ
5. Ընտրական իրավունքը և ընտրական համակարգ
6. Դատական համակարգ
7. Հանրաքվեի սահմանադրական երաշխիքները

8. Տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական բարեփոխումների հայեցակարգային հիմնադրույթները
9. Ամփոփիչ հարցեր

**Փորձագետների ընտրությունը.** հարցազրույցներն իրականացվել են նախապես որոշված փորձագետների խմբերի հետ: Փորձագետների ընտրության համար որպես չափանիշ են վերցվել՝ մասնագիտական/աշխատանքային ոլորտը և կոմպետենտությունը: Ըստ ոլորտի՝ նախապես առանձնացվել են մասնագիտական հետևյալ 9 խմբերը՝

1. Սահմանադրական հանձնաժողով,
2. Դասախոսներ (ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոն, Սոցիոլոգիայի ֆակուլտետ և այլն),
3. Փաստաբանների պալատ,
4. Սահմանադրագետներ /անկախ փորձագետներ,
5. Իրավապաշտպան ՀԿ-ներ,
6. ՄԻՊ գրասենյակ,
7. ԱԺ խմբակցություններ և անկախ պատգամավորներ,
8. Դատավորներ,
9. ՏԻՄ ոլորտի փորձագետներ:

Նախատեսվել է փորձագետների յուրաքանչյուր խմբից միջինում 4 փորձագետի հետ անցկացնել հարցազրույց (բացառությամբ ԱԺ-ի՝ 7 պատգամավոր և ՄԻՊ-ի՝ 1 աշխատակից): Առավել տեղեկացված փորձագետներն ընտրվել են կոմպետենտության աստիճանի գնահատման միջոցով: Գնահատումը կատարվել է ա) այլ փորձագետների կողմից գործընկերոջ գնահատման և բ) կոնկրետ փորձագետի կողմից՝ ինքնագնահատման եղանակներով:

Պայմանավորված փորձագետների զբաղվածությամբ և/կամ նախատեսված ոլորտներից որոշների առանձնահատկություններով՝ չնայած հետազոտող կազմակերպության համառ ջանքերին, եղել են փորձագետներ (կառույցներ<sup>1</sup>), որոնց հետ հնարավոր չի եղել հարցազրույց անցկացնել: Վերջիններս փոխարինվել են այլ ոլորտներից փորձագետներով:

Արդյունքում իրականացվել են 36 խորին հարցազրույցներ՝ փորձագետների հետ:

Հարցազրույցների մեծ մասը ձայնագրվել է, ապա՝ սղագրվել: Այնուհետև որակական հարցազրույցների արդյունքները վերլուծվել են սոցիոլոգիական որակական վերլուծության եղանակներով: Որակական հետազոտության արդյունքների հիման վրա իրավաբան-փորձագետների կողմից մշակվել են առաջարկներ, որոնք ներկայացվել են Հանձնաժողովին<sup>2</sup>:

<sup>1</sup> Դատավորներ, ՄԻՊ գրասենյակ և ԱԺ մեկ պատգամավոր:

<sup>2</sup> Առաջարկները ներկայացված են Հավելված 1-ում:

Որակական ուսումնասիրությունը հիմք է հանդիսացել քանակական հարցազրույցների նախապատրաստման համար:

### **Քանակական ուսումնասիրություն**

Քանակական ուսումնասիրության հիմնական **նպատակն է պարզել Հայաստանի բնակչության կարծիքը սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ:**

**Խնդիրներն են՝** ա) բացահայտել բնակչության վերաբերմունքը երկրում տեղի ունեցող մի շարք գործընթացների, այդ թվում՝ սահմանադրության բարեփոխումների վերաբերյալ, բ) պարզել, թե որքանով են նրանք տեղեկացված այդ փոփոխությունների վերաբերյալ, գ) վերհանել նրանց ակնկալիքները այդ փոփոխությունների գործընթացից, դ) ստանալ նրանց առաջարկները և դրանով իսկ նրանց մասնակից դարձնել այնպիսի կարևորագույն քաղաքական գործընթացին, ինչպիսին երկրի Սահմանադրության փոփոխությունն է:

Քանակական հարցազրույցներ անցկացվել են Հայաստանում բնակվող 18 տարեկանից բարձր քաղաքացիների հետ: Հարցազրույցներն անցկացվել են տնայցերի արդյունքում՝ դեմ առ դեմ հանդիպումների միջոցով: Որպես տեղեկատվության ստացման գործիք՝ կիրառվել է փակ և կիսափակ հարցերով կիսաստանդարտացված հարցաթերթ: Հարցաթերթը նախապես կազմվել է իրավաբան-փորձագետների և սոցիոլոգի համատեղ աշխատանքի արդյունքում՝ հիմնվելով որակական հետազոտության ընթացքում պարզված խնդիրների ուսումնասիրելիության անհրաժեշտությունից: Հարցազրույցների ընթացքում հարցազրուցավարները բացառապես առաջնորդվել են նախապես մշակված հարցաթերթով:

Հարցաթերթում հարցերը ամփոփվել են հիմնական հետևյալ հարցախմբերի շրջանակներում՝

1. Բավարարվածություն երկրի սոցիալ-տնտեսական վիճակից
2. Սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը
3. Մարդու իրավունքներ
4. Կառավարման համակարգ
5. Ընտրական իրավունքը և ընտրական համակարգ
6. Դատական համակարգ
7. Հանրաքվեի սահմանադրական երաշխիքները
8. Տեղական ինքնակառավարման մարմինները
9. Ժողովրդավարություն
10. Սոցիալ-ժողովրդագրական տվյալներ

**Քանակական հետազոտության ընտրանքը.** Քանակական հարցազրույցներն անցկացվել են ՀՀ բոլոր մարզերում (այդ թվում նաև Երևանում): Հարցմանը մասնակցել են 18 տարեկանից բարձր անձիք: Հետազոտության ընտրանքը կառուցվել է վիճակագրական բանաձևերի կիրառմամբ: Արդյունքների 95% վստահության միջակայքում, ընտրանքի  $\pm 2.7\%$ -ի դեպքում

ընտրանքային համախմբությունը կազմել է 1300 հոգի: Կազմվել է ստրատիֆիկացված կլաստերային ընտրանք՝ հիմնված պատահականության սկզբունքի վրա:

Նախապես հաշվարկված ընտրանքային համախմբության ծավալը համամասնորեն բաշխվել է Հայաստանի մարզերի բնակչության թվին: Այնուհետև յուրաքանչյուր մարզում հարցվողների թիվը բաժանվել է հավասարաչափ կլաստերների: Յուրաքանչյուր մարզում հարցվողների և կլաստերների թիվը ներկայացված է ստորև՝ Աղյուսակ 1-ում:

Մարզ	Մարզում հարցվողների թիվ	Մարզում կլաստերների թիվ
Երևան	442	40
Արագածոտն	55	5
Արարատ	110	10
Արմավիր	110	10
Գեղարքունիք	88	8
Լոռի	121	11
Կոտայք	121	11
Շիրակ	121	11
Սյունիք	55	5
Վայոց Ձոր	22	2
Տավուշ	55	5
<b>Ընդամենը</b>	<b>1300</b>	<b>118</b>

Յուրաքանչյուր կլաստերում որոշակի սկզբնակետից աջակողմյան պտույտի մեթոդով համակարգված պատահական քայլի միջոցով ընտրվել են այն բնակարանները, որոնցում «ամենամոտ (առաջիկա) ծննդյան օրվա» սկզբունքով ընտրվել են նաև հարցվողները: Հարցազրույցները վարվել են հարցազրուցավարների կողմից: Դաշտային աշխատանքները վերահսկվել են խմբավարների, ապա որակի ստուգողների կողմից: Հարցազրույցների տվյալները ստուգվել են մի քանի եղանակներով՝

- 1) Անմիջապես հարցմանը ներկա գտնվելու միջոցով
- 2) Հարցումից հետո՝ հեռախոսազանգի միջոցով
- 3) Հարցումից հետո՝ տնայցերի միջոցով

Հարցաթերթերի ստուգումից և մշակումից (բաց հարցերի փակում, վերակողավորում և այլն) հետո հարցաթերթերը մուտքագրվել են SPSS վիճակագրական բազա: Կատարվել է բազայի ստուգում և տվյալների վերլուծություն: Քանակական տվյալների վերլուծությունը կատարվել է վիճակագրական եղանակներով՝ հաշվարկվել են հավանականություններ, կատարվել է խաչաձև, գործոնային վերլուծություն, հաշվարկվել են փոխկախվածություններ և այլն: Քանակական հետազոտության արդյունքները նույնպես հիմք են ծառայել իրավական վերլուծության համար: Իրավաբան-փորձագետների կողմից մշակվել է առաջարկների փաթեթ:



## Մաս 1. Որակական հետազոտության արդյունքներ

### Սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը

Որակական հարցազրույցների ընթացքում բացահայտվել է փորձագետների կարծիքը Սահմանադրական բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտության վերաբերյալ: Այն հարցին, թե **որքա՞ն հաճախ պետք է փոփոխել երկրի Սահմանադրությունը**, հարցվողների գրեթե բոլոր խմբերը համակարծիք էին այն հարցում, որ Սահմանադրության փոփոխությունը պետք է լինի համահունչ երկրի զարգացմանը և բխի դրա անհրաժեշտությունից: Այն դեպքում, երբ որևէ երկրի գործող սահմանադրությունը ոչ թե խթանում, այլ խոչընդոտում է երկրի զարգացմանը, առաջանում է փոփոխություն իրականացնելու անհրաժեշտություն: Սահմանադրության հաճախակի փոփոխությունն առավելապես բնորոշ է անցումային հասարակություններին և/կամ նոր ձևավորվող ժողովրդավարական երկրներին, ինչպիսին Հայաստանն է, քանի որ տեղի են ունենում մոտեցումների, արժեքների, ինչպես նաև կառուցվածքային փոփոխություններ, որոնց անհրաժեշտ է համապատասխան արձագանք: Այն երկրներում, որտեղ կան կայուն քաղաքական ավանդույթներ, քաղաքական մշակույթ, չի առաջանում սահմանադրության հաճախակի փոփոխությունների անհրաժեշտություն: Մեջբերենք հարցված փաստաբաններից մեկի խոսքերը. «... *ցանկացած ավանդույթ, մշակույթ կամ սովորույթ ունի պաշտպանության ավելի ուժեղ մեխանիզմներ, քան ցանկացած ինչ-որ գրված կանոն*»:

Այսպիսով՝ խիստ կարևոր է, թե ինչու է տեղի ունենում սահմանադրության փոփոխությունը, որն է փոփոխության անհրաժեշտությունը, ինչպես է հիմնավորվում փոփոխության անհրաժեշտությունը: Մարդու իրավունքների խնդրով զբաղված ՀԿ-ներից մեկի ղեկավարն իր հետ անցկացված հարցազրույցի ընթացքում նշել է սահմանադրության փոփոխության անհրաժեշտության պատճառները. «*Սահմանադրական փոփոխություններ անհրաժեշտ է կատարել հետևյալ դեպքերում. 1. եթե կան հարցեր, որոնց լուծումը պահանջում է սահմանադրական կարգավորում, 2. երբ կան կարգավորումներ, բայց դրանք հստակ չեն, 3. երբ կա բավարար փորձ, հասկանալու համար ամենաօպտիմալ լուծումները, 4. ֆինանսների առկայության պարագայում: Այսինքն՝ պետք է լինի երկու գործոնի միաժամանակյա առկայություն՝ փոփոխությունների օբյեկտիվ անհրաժեշտություն և դրա իրականացման համար կազմակերպչական, ֆինանսական հնարավորությունների առկայություն*»: Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամներից մեկի խոսքերով՝ «*Սահմանադրության փոփոխության նախադրյալները լինում են օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ են միջազգային իրավակարգի ժողովրդավարացման միտումները, որոշակի գաղափարախոսությունների անկումը կամ վերածնունդը, աշխարհաքաղաքական փոփոխությունները, որոշակի տեղեկատվական, մշակութային և իրավական դաշտի ստեղծումը, ինտեգրացիան և դեզինտեգրացիան*»: Ըստ հարցված սահմանադրագետներից մեկի՝ «*1. սահմանադրության փոփոխության հիմնական պատճառը կոնֆլիկտներն են, որոնք*

*առաջացել են սահմանադրության և իրականության միջև... 2. սահմանադրության փոփոխությունները, եթե դրանք իրականացվում են համաժողովրդական քվեարկությամբ, նաև ժամանակ առ ժամանակ հասարակական պայմանագիրը/պակտը թարմացնելու եղանակ են, երբ բոլորը մասնակցում են փոխադարձ վստահությունը վերահաստատելու, վերականգնելու պրոցեսին...»:*

Այսպիսով՝ սահմանադրության փոփոխությունը, մի կողմից, պետք է նպաստի երկրի զարգացմանը, մյուս կողմից, ապահովի կայունություն և հավասարակշռություն: Բացի այդ, մասնակցելով սահմանադրական փոփոխությունների հանրաքվեին՝ ժողովուրդը հնարավորություն է ունենում իշխանությունների նկատմամբ իր վերաբերմունքը և դիրքորոշումը հայտնելու, պահանջներ ներկայացնելու: Դրանով ապահովվում է նաև մասնակցային կառավարումը: Սակայն բնակչության իրազեկվածությունը սահմանադրական փոփոխություններից այնքան էլ բարձր չէ. ըստ բնակչության շրջանում կատարված հարցումների՝ միայն 46,8%-ն է տեղյակ, որ նախատեսվում է սահմանադրության փոփոխություն, 53,2%-ը տեղյակ չէ<sup>3</sup>:

Ըստ հարցվողների՝ սահմանադրությունը՝ որպես քաղաքական փաստաթուղթ, պետք է ունենա մի շատ կարևոր հատկանիշ: Դա նրա կայունությունն է: Հարցվողներն այն կարծիքին են, որ արագ փոփոխվող սահմանադրություններն ընդունելի չեն. «*սա սովորական օրենք չէ, որ հինգ տարին, տաս տարին մեկ փոխենք...*»<sup>4</sup>, «*սահմանադրությունը այն հիմնական փաստաթուղթն է, որի վրա հիմնված են բոլոր օրենքները, ուստի այն պետք է լինի կատարյալ և կայուն...*»<sup>5</sup>, «*Եթե հաճախակի փոխում ենք սահմանադրությունը, նշանակում է՝ մենք չենք կարողանում ապահովել նպատակները: Որովհետև հիմնական օրենքը, վերջին հաշվով, հիմք է մնացած բոլոր օրենքների և ենթաօրենսդրական ակտերի համար, որոնք ընդունելու համար որոշակի ողջամիտ ժամկետ է պետք, և, եթե մենք չենք տրամադրում այդ ժամկետը գործադիր մարմիններին, ապա ստացվում է, որ մենք ինչ-որ տեղ ձախողում ենք այդ մարմինների աշխատանքը*»<sup>6</sup>:

Ըստ հարցվողների՝ օբյեկտիվ նախադրյալներով պայմանավորված փոփոխությունները **դրական** են, իսկ սուբյեկտիվ շահի վրա հիմնված փոփոխությունները՝ **բացասական**: Սահմանադրության փոփոխությունը դրականորեն է ընկալվում այն ժամանակ, երբ կա իրականությունից բխող օբյեկտիվ անհրաժեշտություն, իսկ այն դեպքում, երբ դա թելադրվում, նախաձեռնվում և իրականացվում է վերևից՝ իշխանության կողմից, սեփական իշխանությունն ամրապնդելու նպատակով, դա հասարակական տարբեր խմբերի, ինչպես նաև մասնագետների շրջանում ստանում է բացասական արձագանք: Մեջբերում. «*Եթե սահմանադրական փոփոխությունները կատարվում են ընթացիկ իշխանության*

<sup>3</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 1:

<sup>4</sup> Աժ պատգամավորի խոսքերից:

<sup>5</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>6</sup> Սահմանադրական բերափոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

*հարմարավետությունն ապահովելու և շեղիտիմացնելու համար, դա բացասական է»<sup>7</sup>, «սահմանադրության փոփոխությանը կարող են ամեն անգամ հարմարեցնել իշխանության վերարտադրումը կամ իշխանություն պահելու մեխանիզմները դրա մեջ ամրագրել»<sup>8</sup>, «լավ չէ, երբ իշխանությունն իր կամքով փոփոխություններ է մտցնում իր իշխանությունը հավերժացնելու համար և ավելի շատ լիազորություններ ստանալու համար»<sup>9</sup>:*

Ըստ հարցվողների՝ շատ դեպքերում փոփոխությունները դրական չեն այն պատճառով, որ իրավական համակարգի կայունության և աստիճանական զարգացման խնդիր է առաջանում, հետևաբար հաճախ և ոչ տեղին ընթացող սահմանադրական բարեփոխումները կարող են անկայունության պատճառ հանդիսանալ: Հարցվողների գնահատմամբ՝ սահմանադրության փոփոխության բացասական կողմերից է նաև այն, որ անհրաժեշտ է որոշակի ժամանակ՝ փոփոխություններին ադապտացվելու համար:

Սահմանադրության փոփոխությունը դրական կամ բացասական որակելու համար էական է ոչ միայն այն հանգամանքը, թե ինչու է իրականացվում փոփոխությունը, այլ նաև՝ ինչպես է դա կատարվում: Սահմանադրության փոփոխությունն իր ամբողջության մեջ կարող է բացասական էլք ունենալ այն դեպքում, երբ հանրաքվեի արդյունքները ընդունելի և վստահելի չեն հանրության կողմից: Կեղծված հանրաքվեի արդյունքները հասարակության մեջ կարող են ձևավորել անվստահության մթնոլորտ, և հակառակը, երբ հասարակության անդամները համոզված են, որ սահմանադրությունը ընդունվել է մեծամասնության կողմից՝ անկախ այն հանգամանքից, որ իրենք դրան դեմ են քվեարկել, կարող է ձևավորվել միասնականություն՝ անկախ դրա անդամների տարբեր գաղափարների նկատմամբ ունեցած տարակարծություններից:

Այդպիսով առաջ է քաշվում ընտրական համակարգի նկատմամբ վստահության պակասի հանգամանքը: Ըստ հարցվողներից շատերի՝ այն դեպքում, երբ չկա վստահություն ընտրությունների, հանրաքվեի և նմանատիպ այլ գործընթացների նկատմամբ, կասկածի տակ է տրվում սահմանադրության փոփոխության անհրաժեշտության հարցը: **Հետևաբար, նախ՝ անհրաժեշտ է բարելավել ընտրական համակարգը, քանի որ հանրաքվեն իրականացվելու և արդյունքներն ամփոփվելու են Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:** Ուստի պետք է վերացնել քվեարկության արդյունքների նկատմամբ կասկած հարուցող հիմքերը, այդ թվում օրենսդրական անհարկի սահմանափակումները, մասնավորապես, ստորագրված ցուցակների հրապարակայնացման արգելքը: Ինչպես նաև խիստ կարևորվում է ընտրությունների կազմակերպման և անցկացման պատասխանատու մարմնի՝ ԿԸՀ-ի նկատմամբ վստահության բարձրացումը, այլապես սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի անցկացումը լուրջ վտանգի տակ կարող է դրվել:

<sup>7</sup> ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոսի խոսքերից:

<sup>8</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>9</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

Եթե սահմանադրություն կիրառողների որակական հատկանիշների բարձրացման ուղղությամբ աշխատանքներ չկատարվեցին, դարձյալ այս սահմանադրական փոփոխությունների հետ կապված որևէ դրական ակնկալիք լինել չի կարող:

Այն հարցին, թե ներկայումս անհրաժեշտ է փոփոխել ՀՀ գործող Սահմանադրությունը, փորձագետների կարծիքը առավել հակված է ժխտողական լինելուն՝ ելնելով որոշ կոնկրետ հանգամանքներից, իսկ ընդհանուր առմամբ հիմնականում հնչեցված կարծիքները հարում են այն համոզմունքին, որ ներկայիս սահմանադրությունը լրացնելու և բարելավելու կարիք ունի:

Նրանք, ովքեր կարծում են, թե անհրաժեշտ է փոփոխել Սահմանադրությունը, համեմատելով ներկայումս գործող Սահմանադրությունը այլ զարգացած երկրների սահմանադրությունների հետ, նշում են, որ անհրաժեշտություն կա այն առավել առաջադեմ դաձնելու և «... որպես փաստաթուղթ դա փոփոխման կարիք ունի ձևական առումով, նաև կառուցվածքային և բովանդակային առումով»<sup>10</sup>: Փոփոխությունները անհրաժեշտ են «...քաղաքական և տնտեսական զարգացումների համար իրավական հիմքեր ստեղծելու»<sup>11</sup>, «...հասարակական հարաբերությունների զարգացմանը համընթաց առաջ գնալու»<sup>12</sup> համար, ինչպես նաև նշվել է, որ «...հասարակական հարաբերությունները զարգացել են, և պետությունը ունի նոր նպատակներ, համապատասխան կարգավորումներ են անհրաժեշտ, որպեսզի հարաբերությունները ինքը բերի համապատասխանեցնի դրանց»<sup>13</sup>:

Պատգամավորներից մեկը, կողմ լինելով գործող Սահմանադրության փոփոխմանը, նշում է, որ «...անցումային ժողովրդավարություն ունեցող երկրներին ավելի հաճախ հատուկ է սահմանադրական համակարգերի խեղաթյուրումները», իսկ «...փոփոխությունը դա ուղղակի ժողովրդավարության մեխանիզմների գործադրումն է»<sup>14</sup>:

Մի շարք հիմնահարցերի կարգավորման և հստակեցման համար փոփոխությունը նպաստավոր կլինի, մասնավորապես նշվել է «...փոխզույգման և հավասարակշռման մեխանիզմների»<sup>15</sup> ոչ հստակ սահմանված լինելը ներկայիս գործող սահմանադրության մեջ:

Հարցված փորձագետներից հիմնականում մեջբերված ԱԺ պատգամավորն ու սահմանադրագետներն են դեմ արտահայտվել սահմանադրության փոփոխություններին և իրենց դիրքորոշումը հիմնավորել են հետևյալով..

<sup>10</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>11</sup> Սահմանադրական բերափոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>12</sup> Սահմանադրական բերափոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>13</sup> Փաստաբանի խոսքերից:

<sup>14</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

<sup>15</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

- ներկայացված հայեցակարգի նախագծով կատարվող փոփոխությունները հիմնականում անընդունելի են,
- ներկայիս սահմանադրությունը էականորեն չի խոչընդոտում և անելանելի իրավիճակի առջև չի կանգնեցրել երկրում ընթացող գործընթացները,
- Սահմանադրական փոփոխությունները լուրջ կազմակերպչական ջանքեր են պահանջում և ծախսատար են,
- նախորդ՝ 2005թ.-ի սահմանադրական փոփոխությունները չեն բարելավել Սահմանադրությունը, և նման մտավախություն կա նաև ներկայիս փոփոխության նկատմամբ,
- ընտրական համակարգի նկատմամբ վստահության բացակայությունը և իրավական ոչ կայուն իրավիճակը նպաստավոր չեն փոփոխություն կատարելու համար:

Այսպես, փորձագետները նախ և առաջ պնդում են, որ ներկայացված հայեցակարգի նախագծով կատարվող փոփոխությունները հիմնականում անընդունելի են, և որ «...*էդ ֆորմատով հաստատ կարիք չկա*»<sup>16</sup>, «...*էդ կոնստեքստով բարեփոխում անել... պետք չէ*»<sup>17</sup>, «...*Հայեցակարգի նախագծում ըստ էության հայեցակարգ չկա*»<sup>18</sup>, «...*դեռ դրա անհրաժեշտությունը չկա*»<sup>19</sup>, «...*Սահմանադրությունները մեր երկրում փոփոխվում են գրեթե ավելի հաճախ, քան որոշ անպետքական օրենքներ*»<sup>20</sup> և այլն: Սահմանադրագետներից մեկը նշում է, որ Սահմանադրությունը պետք է փոխվի միայն այն դեպքում, երբ «...*ոչ թե չի նպաստում երկրի զարգացմանը, ոչ թե չի նպաստում հասարակության զարգացմանը կամ մարդու ինքնաարտահայտմանը կամ պաշտպանվածությանը, այլ խոչընդոտում է... լրջորեն խոչընդոտում է երկրի զարգացմանը*»: Մեկ այլ սահմանադրագետ դեմ է փոփոխմանը, քանի որ «...*Եթե փոփոխության անհրաժեշտություն կա, այդ անհրաժեշտությունը պիտի պայմանավորված լինի նաև ժողովրդի կամ հասարակության կամ անհատի դժգոհությամբ: Պետությունն այս կոնկրետ դեպքում առանձնանում և իրանից (հեղ. ժողովրդից), երբ սկսում է իր կորստորատիվ շահը հետապնդել: Ու էդ դեպքում հաստատ պետությունը չի նախաձեռնելու մի սահմանադրական փոփոխություն, որն ավելի շատ ընդարձակի իր պարտավորությունները, այլ խոսքով՝ որը կընդարձակի դիմացինի՝ ժողովրդի իրավունքները, այլ էդ ամենը տրամաբանորեն հանգեցնելու է մի վիճակի, որ հեշտացվելու և պետության կողմից իր կորստորատիվ շահի հետապնդումը, նոր հնարավորություններ են ստեղծվելու դրա համար, որը միշտ կատարվում և ժողովրդի կամ անհատի իրավունքների ու հնարավորությունների հաշվին*»: Իշխանությունների նախաձեռնած սահմանադրական փոփոխությունների նկատմամբ իր թերահավատությունը առավել հիմնավորելու համար սահմանադրագետը բերում է պատկերավոր համեմատություն. «*Դա լուրջ սպառնալիք և,*

<sup>16</sup> Փաստաբանի խոսքերից:

<sup>17</sup> Փաստաբանի խոսքերից:

<sup>18</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

<sup>19</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>20</sup> Սահմանադրագետի խոսքերից:

նույն բանն ա, ինչ դու ունենաս մի արկածախնդիր վարորդ, որը բավականին երկար ժամանակ մեքենան աջուձախ ա խփել, ու հիմա առաջարկում ա լեռներով, վտանգավոր ճանապարհով քեզ տանի, հասցնի մի տեղ, որը ինքն էլ չգիտի՝ ինչքանով ա լավ քո համար, ընդ որում՝ մեքենադ արգելակներ չունի»։ Փաստորեն, սահմանադրության փոփոխության նկատմամբ փորձագետներից ոմանց ժխտողական դիրքորոշումը պայմանավորված է իշխանությունների վարած քաղաքականությամբ, որը վստահություն և հավատ չի ներշնչում որևէ բարեփոխումների և դրանց նախաձեռնման անկեղծ մղումների նկատմամբ։ Այս իսկ պատճառով սահմանադրական փոփոխությունը որակվում է անգամ որպես սպառնալիք, և դրա նախաձեռնման պատճառները տարբեր մեկնաբանությունների տեղիք են տալիս։ Մի խումբ փորձագետներ անդրադառնում են 2005 թվականի Սահմանադրության փոփոխությանը և նշում, որ վերջինիս շնորհիվ Սահմանադրությունը չբարելավվեց, մասնավորապես նշելով նախորդ սահմանադրության որոշ դրույթներ. «...Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավական ակտերը և օրենքները իրավական ուժ չունեն։ Նախորդ սահմանադրական փոփոխություններով (հեղ.2005թ.) հանվեց դա, և էսօր ունենք էդ կուտակային կենսաթոշակների հետ կապված էս արսուրդ վիճակը»<sup>21</sup>։

Փորձագետների մի խումբ, ովքեր ըստ էության կողմ են սահմանադրությունում փոփոխությունն ու ավելացումներ կատարվուն, նշում են, որ բացակայում է ընտրական համակարգի նկատմամբ վստահությունը, որի պարագայում իմաստազրկվում է հանրաքվեով փոփոխությունը։ Ավելին «... էսօրվա սահմանադրության շրջանակներում հազարավոր խնդիրներ կարելի ա լուծել, որոնք չեն արվում։ ...երբ էդ վստահությունը կլինի, նոր էդ ժամանակ կարելի է խոսել սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ»<sup>22</sup>։

Իսկ թե երբ է առավել նպատակահարմար սահմանադրական փոփոխություններ կատարելը, փորձագետները նշում են և՛ ներկայիս մարտահրավերները, և՛ այն իրավիճակները, որոնք անխուսափելի կդարձնեն փոփոխությունը, մասնավորապես նրանց խոսքերով «...ներկայումս կտրուկ հակացուցված ա նման բան անելը, որովհետև մենք իրավական կայունության լուրջ խնդիր ունենք»<sup>23</sup>, «...սահմանադրական փոփոխություն կատարելու համար փոփոխության հիմնավորման ծայրահեղ բարձր շեմ պիտի բավարարել։ Էդ շեմը սահմանագծվում ա նրա հետ, որ եղած Սահմանադրությունը խոչընդոտում ա երկրի զարգացմանը»<sup>24</sup>, «...երբ Սահմանադրությունը թույլ չի տալիս մեզ շնչել, թույլ չի տալիս մեզ նորմալ ապրել, ոչ էլ զարգանալ»<sup>25</sup>, «...Սահմանադրական փոփոխությունը կարևոր քայլ է այն դեպքում, երբ մենք բոլորս հանգում ենք մի իրավիճակի, որ հանրային զարգացման պրոցեսը կանգնել է, հանդիպել է ինչ-որ սահմանադրական խոչընդոտի։ Էդ պարագայում

<sup>21</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:  
<sup>22</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:  
<sup>23</sup> Սահմանադրագետի խոսքերից:  
<sup>24</sup> Սահմանադրագետի խոսքերից:  
<sup>25</sup> Սահմանադրագետի խոսքերից:

*արվում են սահմանադրական փոփոխություններ»<sup>26</sup>: Ըստ էության, փորձագետների այս խումբը, կտրականապես չժխտելով սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը, այդուհանդերձ ներկայումս նման նախաձեռնությունը համարում են ժամանակավրեպ և հանրային պահանջով չհիմնավորված:*

Այն փորձագետները, ովքեր դրականորեն են տրամադրված սահմանադրական փոփոխություններին, մանրամասնել են իրենց մոտեցումները, մասնավորապես նշելով, թե ի՞նչ չափով պետք է լինեն փոփոխությունները՝ ամբողջական, թե՞ միայն որոշակի մասի փոփոխություն պետք է արվի: Եթե ամբողջական, ապա ինչու: Եթե մասնակի՝ ապա որո՞նք են փոփոխման ենթակա բաժինները, հողվածները կամ դրույթները: Գրեթե բոլորը նախընտրությունը տվել են մասնակի փոփոխություններին՝ միաժամանակ կոնկրետանալով այն մասերի (բաժինների, հողվածների և դրույթների) վրա, որոնք, ըստ իրենց, կարիք ունեն փոփոխության, բարեփոխման:

Սահմանադրության ամբողջական փոփոխությանը կողմնակից եզակի փորձագետներ իրենց դիրքորոշումը հիմնավորել են հետևյալ փաստարկներով. «...*ներկայիս սահմանադրության փիլիսոփայությունը պետք է փոփոխվի*»<sup>27</sup>, ինչպես նաև «...*ամբողջական/կառուցվածքային փոփոխությամբ պետք է ստանալ այն կառուցվածքը, որը համապատասխանում է ժամանակակից սահմանադրությունների տրամաբանությանը*»<sup>28</sup>:

Մասնակի փոփոխության կողմնակիցները գտնում են, որ փոփոխությունները պետք է կատարել այն ոլորտներում, որտեղ խնդիրներն ակնառու են, գլոբալ և լայնամասշտաբ, ինչպես նաև այն վերանայել այն դրույթները, որոնք այլ դրույթների հետ ակնհայտ հակասության մեջ են:

Դասախոսների կարծիքով փոփոխությունները պետք է նպաստեն «...*սահմանադրական օրյեկտների միանշանակ ձևակերպմանը*»<sup>29</sup>, դրույթները որոշակի տրամաբանության մեջ պետք է տեղավորվեն:

Իրավապաշտպան ՀԿ-ների ներկայացուցիչները առավել շեշտադրել են փոփոխման ենթակա այն բաժինները, որոնք առնչվում են մարդու իրավունքներին, կապված են մարդու և քաղաքացու հիմնական ազատությունների հետ: Նրանք կարևորում են նաև կառավարման մեխանիզմների փոփոխությունը, մասնավորապես «...*իշխանության ճյուղերի առավել տարանջատումը, փոխադարձ զսպումների մեխանիզմ ամրագրելը, իշխանություն ձևավորելու մեխանիզմները դարձնել հնարավորինս պաշտպանված և ինտերվենցիայի քիչ*

<sup>26</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

<sup>27</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>28</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>29</sup> Դասախոսի խոսքերից:

ենթակա»<sup>30</sup>: Ստորև ներկայացվում է փոփոխման ենթակա կոնկրետ թվարկված դրույթները և առաջարկությունները.

- *Հանել Հայ Եկեղեցու մասին դրույթը, որը հակասության մեջ է խղճի ազատության մասին դրույթի հետ,*
- *Բարելավել դատական իշխանության մասը, որ այն անկախ լինի, և իշխանության մյուս թևերը ունենան հայեցողական և ոչ թե վճռորոշ դեր նրա ձևավորման գործում,*
- *Ընտրությունները կազմակերպող մարմինը (կենտրոնական ընտրական հանձնաժողովը) ունենա սահմանադրական կարգավիճակ,*
- *Ամրագրել և ապահովել միջպետական պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարումը,*
- *Տալ սահմանադրական լուծումներ շահերի բախման խնդրին, հատկապես ԱԺ պատգամավորների՝ բիզնեսով չգրադվելու մասին,*
- *Հստակեցնել ՏԻՄ տարածքային կառավարման բլոկը,*
- *Ամրագրել հանրաքվեների մասին բլոկը,*
- *Դարձնել ԱԺ-ն երկպալատանի՝ Սենատը ընտրվի մեծամասնական, իսկ Ստորին պալատը համամասնական ընտրակարգով՝ ըստ տարածքային բաժանման սկզբունքի:*

Սահմանադրագետները ևս անդրադարձել են մարդու իրավունքների, ՏԻՄ-երի, դատական համակարգում և կառավարման ձևի հետ կապված խնդիրներին, որոնցում փոփոխություններն անհրաժեշտ են: Նրանք նաև կարևորել են հանրաքվեի հարցը:

Փաստաբանները առավել քննադատաբար են մոտեցել հայեցակարգի նախագծին «...այն ձևափոխում ա ուղղակի, այստեղ բարեփոխում կամ համակարգափոխություն չկա»<sup>31</sup>: Նրանք նաև նշել են պրակտիկայում խնդրահարույց դրույթները, որոնք արդյունավետ չեն գործում, հատկապես դրույթներ, որոնք կապված են մարդու հիմնական ազատությունների հետ, կամ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի ոչ կոնկրետ լինելու հետ: Մասնավորապես, «... Գրված է, որ անձի որոշակի իրավունքներ կարող են օրենքով սահմանափակվել: Օրենքով սահմանափակվեց, բայց սահմանադրական այդ իրավունքը ի՞նչ ծավալով կարող է սահմանափակվել օրենքով: ... կարելի է Սահմանադրության մեջ որոշակի սահմաններ դնել, որից այն կողմ այդ հայեցողական իրավունքը, ընդհանրապես պետական իշխանություն իրականացնող մարմինները չեն կարող կիրառել»<sup>32</sup>: Մեկ այլ փաստաբան նշել է, որ «...որոշակի կատարելագործման կարիք կա Սահմանադրությամբ ամրագրված նորմերի իրագործելիության ուղղությամբ: Մասնավորապես, Սահմանադրությունը, նշելով հիմնական իրավունքները, երաշխիքները չի նախատեսում, անմիջական գործողությունը չի

<sup>30</sup> Բրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>31</sup> Փաստաբանի խոսքերից:

<sup>32</sup> Փաստաբանի խոսքերից:



*ապահովում: ...իշխանությունների բաժանման սահմանադրական հակակշռի ապահովման հետ կապված նույնպես կարիք կա կատարելագործել սահմանադրական լուծումները»<sup>33</sup>:*

Սահմանադրական բերափոխումների հանձնաժողովի անդամները անդրադարձել են այն փոփոխություններին, որոնք արդեն իսկ իրենց արտացոլումն են գտել հայեցակարգի նախագծում, մասնավորապես՝ իրավունքի գերակայություն և դրա իրացման երաշխիքներ, մարդու իրավունքներ և սոցիալական պետության կայացմանն ուղղված նախադրյալներ, իշխանությունների տարանջատում և կառավարման ձևին վերաբերվող հոդված, ընտրական համակարգ, ընտրական իրավունք, հանրաքվե, տեղական ինքնակառավարում և դատական իշխանություն, նաև արդարադատության իրականացման որոշ ընթացակարգեր և սահմանադրության ամբողջ կառուցվածքը:

Նրանցից մեկն անդրադարձել է որոշ հարցերի, որոնք այդ նախագծում չկան, սակայն նրա անձնական կարծիքով պետք է լինեին, օրինակ «...արդյոք սահմանադրությունը պետք է փոփոխվի միայն հանրաքվեի միջոցով, թե պետք է լինի տարբերակված մոտեցում, կախված թե որ գլուխների մասին է խոսքը, դա կարո՞ղ է արդյոք նաև փոփոխվել օրինակ ազգային ժողովում մեծամասնությամբ, ասենք երկու երրորդով, մի շտ է արդյոք անհրաժեշտ որպեսզի ցանկացած, նույնիսկ տեխնիկական փոփոխություն, դրվի հանրաքվեի»<sup>34</sup>:

**Փաստորեն հարցվածների տեսակետները և տրամադրվածությունները խիստ տարբեր են. դա անշուշտ, պայմանավորված է նրանց զբաղմունքով, պրակտիկ գործունեությամբ և անձնական փորձով: Մեկ բան սակայն ակնհայտ է, որ փոփոխությունը, որը կնպաստի բարելավմանը, բարեփոխմանը ողջունելի է, մանավանդ, եթե դրա շուրջ ձևավորվել է հանրային պահանջ: Հետաքար, այս փոփոխությունների նախաձեռնության նկատմամբ հիմնական դժգոհությունը պայմանավորված է հանրային պահանջի բացակայությամբ: Այդ մասին են վկայում նաև բնակչության շրջանում կատարված հարցումների արդյունքները՝ հարցվածների 60,1%-ը պատասխանել է, որ չկա սահմանադրության փոփոխության անհրաժեշտություն, 25,4 % -ը գտնում է, որ կա անհրաժեշտություն, իսկ 14,5 % -ը դժվարացել է պատասխանել<sup>35</sup>:**

Բացի այդ գործող սահմանադրությունը երբևէ չի առաջացրել կառավարման ճգնաժամ կամ նման վտանգ, ուստի Սահմանադրության անկատարության վերաբերյալ իշխանությունների կամ նրանց կողմից ձևավորված հանձնաժողովի հայտարարությունները համոզիչ չեն: Այդ է պատճառը, որ ըստ կատարված քանակական հարցազրույցների արդյունքների՝ հարցվածների 48%-ը պատասխանել է, որ բոլորովին չի վստահում սահմանադրական փոփոխությունների գործընթացին, 33%-ը պատասխանել է՝ ավելի շուտ չեմ վստահում, ավելի շուտ վստահում եմ՝ 15% է կազմել և միայն 3 %-ն է լիովին վստահել:

<sup>33</sup> Փաստաբանի խոսքերից:

<sup>34</sup> Սահմանադրական բերափոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>35</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 4:

Այս պատկերից հետևությունն այն է, որ իշխանությունների համար առաջնահերթությունը վստահության ճգնաժամը հաղթահարելու խնդիրն է, իսկ սահմանադրական փոփոխությունները ժամանակավրեպ են այնքանով, որքանով չկա ձևավորված հասարակական պահանջ:

Պատասխանելով այն հարցին, թե ովքե՞ր պետք է ներգրավվեն Սահմանադրության փոփոխության գործընթացում, կամ Սահմանադրական բարեփոխումների նախագիծն ու՞մ կողմից պետք է մշակվի և ինչո՞ւ են նրանք այդպես կարծում, փորձագետները Սահմանադրության փոփոխության գործընթացը բաժանել են փոփոխության նախաձեռնության և մշակման փուլերի: Իրավաբանները նշում են, որ «...*համաձայն ՀՀ օրենսդրության, Սահմանադրության փոփոխության նախաձեռնության իրավունք ունի 2 մարմին՝ ՀՀ Նախագահը և ՀՀ ԱԺ-ն*»<sup>36</sup> և տվյալ պարագայում ՀՀ նախագահն է այն նախաձեռնել՝ ստեղծելով Սահմանադրական փոփոխությունների հանձնաժողով: Իրավապաշտպան ՀԿ-ների բոլոր փորձագետները և որոշ սահմանադրագետներ կարծում են, որ այդ նախաձեռնությունը պետք է գա ներքևից՝ հանրությունը պետք է պահանջ ներկայացնի: Ինչ վերաբերում է մշակման գործընթացին, ապա բոլոր փորձագետները միանշանակ պնդում են, որ սահմանադրական փոփոխությունները պետք է լինեն մասնակցային և ժողովրդի կողմից լայն ներկայացուցչություն ապահովվեն:

Փորձագետները միանշանակ կարծում են, որ նախագիծը պետք է մշակվի անկախ, անկողմնակալ մասնագիտական խմբերի կողմից, ովքեր որևէ բանով կաշկանդված չեն, մասնավորապես չունեն քաղաքական կաշկանդվածություն: Հանրային քննարկումների, առաջարկությունների առաջընթացում հասարակության լայն շերտերին/խմբերին մասնակցության հնարավորություն պետք է տրվի և քննարկումը չպետք է լինի ձևական, այլ առաջարկությունները պետք է հաշվի առնվեն՝ մասնագետների կողմից դրանց համապատասխան ընթացք ու իրավական ձևակերպում տալով: «...*մասնագիտական խումբը պետք է կարողանա հանրային կարծիքը մասնագիտական ձևակերպումների վերածի*»<sup>37</sup>:

Տարբեր փորձագետներ նշել են, թե ովքեր պետք է ներգրավված լինեն Սահմանադրության փոփոխության գործընթացում և ինչպիսի որակավորում պետք է ունենան նրանք.

- քաղաքական գործիչներ,
- հասարակական գործիչներ,
- իրավաբաններ, իրավագետներ, փաստաբաններ, սահմանադրագետներ,
- հասարակագետներ, քաղաքագետներ, փիլիսոփաներ,
- սոցիոլոգներ, հոգեբաններ, պատմաբաններ, տնտեսագետներ,
- բիզնես ոլորտի ներկայացուցիչներ,
- մշակույթի ոլորտի մասնագետներ,

<sup>36</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

<sup>37</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

- գիտության ներկայացուցիչներ՝ ակադեմիական շրջանակներից,
- տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ,
- ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, հատկապես ընդդիմադիր մամուլի ներկայացուցիչներ,
- ակտիվ քաղաքացիներ /քաղաքացիական խմբեր,
- միջազգային հանրությունից փորձագետներ,
- think tank-ներ:

Սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովի անդամի որակներից կարևորվել է պրակտիկ փորձի, նաև միջազգային փորձի առկայությունը, ինչպես նաև «...անդամ իրավունք ունի լինելու ակադեմիական գիտական ունակություններ ունեցող և սերունդների առաջ պատմական պատասխանատվության գիտակցում ունեցող մարդը: ...անհրաժեշտ է կոնցեպտուալ և համակարգային մտածողություն»<sup>38</sup>:

### **Տվյալ հարցը հարկավոր է դիտարկել մի քանի հարթություններում՝**

- **անհրաժեշտության առաջացման հիմքերն ու պատճառը,**
- **նախաձեռնողներ,**
- **ընթացակարգը:**

**Անհրաժեշտության առաջացման հիմքերն ու պատճառը:** Հետաքրքրական է, որ մի շարք ընդդիմադիր կուսակցություններ, որոնց ներկայացուցիչներն այսօր հայտարարում են, որ Սահմանադրական բարեփոխումների կարիք չկա, իրենց տարբեր թվականների նախընտրական ծրագրերում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ամրագրել են որպես ծրագրային դրույթ Սահմանադրության բարեփոխումները<sup>39</sup> կամ պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը<sup>40</sup>: Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կուսակցություններն իրենց նախընտրական ծրագրերում ամրագրում են այն ամենը, ինչն արդիական է հասարակության համար այդ պահին, իսկ սահմանադրական փոփոխությունների հարցն ամրագրվել է որպես հասարակության պահանջ, դա ձևական առումով կարող է ընկալվել որպես ներքին առաջացող պահանջարկ: Ավելին, ակտիվ քաղաքացիական հասարակությունը ներկա փուլում հնարավորություն ունենալով մասնակցել Սահմանադրության նոր նախագծի մշակմանը, կարող է իր համար ընդունելի ձևակերպումներ և առաջարկություններ «առաջ մղել»:

**Նախաձեռնողները:** Այս հարցի վերաբերյալ առանցքային է ընդգծել այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության հոդված 11-ում ամրագրված է, որ «Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով՝ Հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի նախաձեռնությամբ»: Հետևաբար, սահմանադրական

<sup>38</sup> Դասախոսների խոսքից:

<sup>39</sup> <http://www.heritage.am/hy/about/program?start=1>

<sup>40</sup> <http://www.bhk.am/datas/media/elections2012/Pages1-16.pdf>

փոփոխությունների նախաձեռնող այլ մարմին, քան այս երկու մարմիններից որևէ մեկն է, չի կարող լինել:

**Ընթացակարգ:** ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծված հանձնաժողովը հանդիսանում է մասնագիտական, ինչը, բնականաբար, ողջունելի է, սակայն լիովին ընդունելի է այն մտահոգությունը, որ այդ հանձնաժողովում ընդգրկված չեն իրապես ներկայիս իշխանություններից որևէ կախում կամ փոխկապակցվածություն չունեցող անկախ մասնագետներ, ովքեր իրենց անկողմնակալ ու ոչ քաղաքականացված ու վերկուսակցական տեսակետներով ու առաջարկություններով կարող էին առավել արժանահավատ ու վստահություն վայելող դարձնել հանձնաժողովի աշխատանքի վերջնական արդյունքը:

Փորձագետների գնահատականը **նախագահին առընթեր ստեղծված Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի և դրա անհրաժեշտության վերաբերյալ** այսպիսին է. փորձագետների մեծամասնությունը բացասաբար է վերաբերվում այն փաստին, որ հանձնաժողովի ստեղծումը նախաձեռնվել է նախագահի կողմից և անդամների մեծամասնությունը պետական պաշտոնյաներ են: Ինչ վերաբերվում է նախաձեռնությանը, ըստ էության «...*նախագահը սահմանադրորեն այդ իրավունքն ունի և իրացրել է*»<sup>41</sup>, սակայն իրավապաշտպան ՀԿ-ների, ԱԺ պատգամավորների և սահմանադրագետների ճնշող մեծամասնությունը այն կարծիքին է, որ «...*նախագահի նախաձեռնությամբ լինում է փոփոխությունների ցանկություն, և իր նախաձեռնությամբ ստեղծվում է հանձնաժողով, և իր նախաձեռնությամբ՝ իր ցանկությամբ, իր կամքով այնտեղ նշանակում են անդամները, այսինքն սա չի արտահայտում հանրության շերտերը, և ի վերջո պետք է հաղթի նախագահի կամքը...*»<sup>42</sup> ավելին, այդ ամենն այն պարագայում, երբ «...*իշխանությունը լեզբիտիմ չէ*»<sup>43</sup>: Բազմիցս նշվել է այն կարծիքը, որ այնուամենայնիվ, այդ նախաձեռնությունը պետք է գա հանրությունից: Ինչ վերաբերվում է հանձնաժողովի կազմին, այն ևս վստահություն չի ներշնչել փորձագետների շրջանում, նախ «...*9 անդամներից 7-ը պետական պաշտոնյաներ են, միայն 2-ն են, որ պետական պաշտոնյա չեն*»<sup>44</sup>, այն դեպքում, երբ «...*բարոյահոգեբանական մթնոլորտը բարենպաստ չի: ...երկրում քաղաքական իշխանության նկատմամբ կա վստահության դեֆիցիտ*»<sup>45</sup>: Ապա, մյուս բացասական վերաբերմունք ունեցող փորձագետները շահերի բախում են տեսնում հանձնաժողովի նախագահի պաշտոնում Գազիկ Հարությունյանի նշանակվելը: Մեկ այլ փորձագետ կարծում է, որ «...*չի կարող Սահմանադրական դատարանի նախագահը զբաղվի իր ոլորտի բարեփոխումների խնդրով: Պետք է կողքից այլ աչք լինի, որովհետև, բնականաբար, ինքն ունենում է իր ինստիտուցիոնալ շահերը, որոնք տարբեր ազդեցություն են*

<sup>41</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>42</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>43</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>44</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>45</sup> Սահմանադրագետի խոսքերից:

*ունենում»<sup>46</sup>: Նրանք, ով ավելի դրական են գնահատում հանձնաժողովի ստեղծումը, խնդրի տեխնիկական կողմին չեն անդրադառնում, այլ շեշտադրում են բովանդակային, կամ ինչպես իրենք են նշում «...գործընթացը, թե ոնց ա տեղի ունենում սահմանադրական փոփոխությունների քննարկման ողջ ընթացքը»<sup>47</sup>: «...կարևոր չէ, թե մասնագիտական խումբն ով է ստեղծել, կարևորը թե այդ փոփոխություններն ինչ բովանդակությամբ ու խորությամբ են, և եթե դրանք լիարժեքորեն քննարկվի հանրային լայն մասնակցությամբ, ի վերջո մենք կարող ենք ունենալ հենց հանրության պահանջների վրա հիմնված սահմանադրական փոփոխությունների առաջարկ»<sup>48</sup>:*

Դրական են վերաբերվում Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի բոլոր հարցված անդամները և դասախոսները: Հարցին չեն պատասխանել այն փորձագետները, ովքեր կարծում էին, որ ներկայիս սահմանադրության փոփոխությունների անհրաժեշտություն չկա:

**Այսպիսով՝ հանձնաժողովի կազմում անկախ փորձագետների ներգրավումը, ովքեր իրենց զբաղեցրած պաշտոնով կամ քաղաքական-կուսակցական պատկանելությամբ կաշկանդված չեն, կարող էր մեծապես նպաստել Հանձնաժողովի գործունեության և առաջարկությունների նկատմամբ հանրային վստահությանը:**

Այստեղ ուշագրավ են քանակական հարցման արդյունքները տվյալ հարցի շուրջ: Հարցվողների 33%-ը նշել է, որ փոփոխությունների առաջարկը պետք է մշակվի հատուկ հանձնաժողովի կողմից (որը կազմված կլինի իրավաբաններից, դատավորներից, գիտնականներից և այլ փորձագետներից), ներկայացվի քաղաքացիներին, քննարկվի և ստացվի վերջիններիս կարծիքը, 31%-ը՝ փոփոխությունները պետք է մշակվեն մասնագետների կողմից, իսկ քաղաքացիներն իրենց կարծիքը արտահայտեն հանրաքվեի միջոցով, 16%-ը՝ փոփոխությունները պատրաստ լինելուն պես պետք է հեռուստատեսությամբ և այլ միջոցներով պետք է տեղեկացվեն քաղաքացիները, հետո հասարակական կարծիքի ուսումնասիրությունների միջոցով պետք է ստանալ քաղաքացիների կարծիքը առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ, 12%-ը՝ ժողովուրդը պետք է մշակի փոփոխությունների առաջարկ և ներկայացնի նախագահին, 4%-ը՝ ժողովուրդը չպետք է մասնակցի սահմանադրության փոփոխության գործընթացին. դա մասնագետների գործն է<sup>49</sup>:

Հետաքրքիր է, որ հասարակության լայն շերտերը համոզմունք են արտահայտել որ նման լուրջ և մասնագիտական փաստաթղթի կազմումը պետք է վստահվի պրոֆեսիոնալ հանձնաժողովին:

<sup>46</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

<sup>47</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>48</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

<sup>49</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 7:

Այն հարցին, թե որոնք են գործող Սահմանադրության ուժեղ կողմերը և որոնք են թույլ կողմերը և արդյոք Սահմանադրության բարեփոխումները կլուծեն թվարկած թույլ կողմերը, փորձագետները որպես ուժեղ կողմ նշել են.

- առաջին երկու հոդվածները, որոնք փոփոխման ենթակա չեն,
- մարդու իրավունքների բաժինը, որը հարմարեցվել է մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին, «...նախորդի համեմատ բավականին լրացվեց, ուժեղացվեց: Վերցրեցին միջազգային փաստաթղթերից, դաշնագրից, կոնվեցիաներից...»<sup>50</sup>:
- Սահմանադրական դատարանում անհատական դիմումների ինստիտուտի հիմնադրումը
- նախագահի ինստիտուտը
- սահմանադրական ճգնաժամի բացակայությունը և սահմանադրության հայեցի՝ ընկալելի լեզվով է գրված լինելը:

Որոշ փորձագետներ պնդում են, որ սահմանադրությունը ուժեղ կամ թույլ կողմեր չի կարող ունենալ, որը բացատրվել է այսպես. «...սահմանադրության մեջ ամրագրել ենք դրույթներ, որոնք իրենց արդարացնում են, դրանք լավ են: Եթե չեն աշխատում, ոչ թե վատն են, այլ ճիշտ չեն ընտրված տվյալ հասարակարգի համար: Այս պարագայում պետք է ասել, որ սահմանադրության մի քանի դրույթներ վեր են ածվել հռչակագրի, չեն աշխատում: Նշանակում է՝ դրանք ոչ թե թույլ են, այլ ճիշտ ժամանակին չեն ընտրվել և հաշվի չեն առնվել հասարակության զարգացման օրինաչափությունները»<sup>51</sup>: Սա լավագույն դեպքում, իսկ մի շարք փաստաբաններ և սահմանադրագետներ կարծում են, որ մեր սահմանադրությունը նորմալ է, խնդիրները կամ «...աղավաղումները գալիս են կամ օրենսդրական կամ ենթօրենսդրական ակտերի մակարդակում»<sup>52</sup>, ինչպես նաև վատ կատարողներից «...Սահմանադրությունը չէր գործում ոչ թե էն պատճառով, որովհետև դրանում Սահմանադրության կիրառման, իրագործման գործուն մեխանիզմներ չէին նախատեսված, այլ որովհետև էդ գործուն մեխանիզմները կիրառողները մի կողմից՝ չէին հասկանում, բայց ամենակարևորը՝ չէին ցանկանում դրանք կիրառել»<sup>53</sup>:

Որպես թույլ կողմ փորձագետները նշել են.

- գործադիր իշխանության ձևավորման կարգը, կառավարման համակարգը
- իրավունքների սահմանափակումները
- դատական համակարգը
- հանրաքվեն
- քաղաքական համակարգը

<sup>50</sup> Դասախոսի խոսքից:

<sup>51</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>52</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>53</sup> Սահմանադրագետի խոսքերից:

- ընտրական համակարգը
- թերի կարգավորումները
- սահմանադրությունը թույլ է տալիս դրույթների ընտրողական կիրառում և ընտրողական վերաբերմունք
- կառուցվածքը չի համապատասխանում բովանդակությանը
- շատ լիազորություններ, պարտականություններ չեն համապատասխանում մեկը մյուսին
- չեն համապատասխանում իրավունքները ապահովելու և պաշտպանելու տրամաբանությանը
- բավարար նորմեր չկան, որոնք կապահովեն բալանսը, որ հասարակությունը պետության հետ կարողանա հարաբերակցվել: «...Սահմանադրությունը չունի նորմեր, որոնք ինքն իրեն կաշխատացնեն: Մենք միշտ կախված ենք մի նախարարի կամ նախագահի, ասենք, խոսքից կամ գործողությունից»<sup>54</sup>:
- հենապոնային նշանակություն ունեցող հասկացությունները հստակ սահմանված չեն (ինքնիշխանություն, հայ ժողովուրդ, քաղաքացի, կրոն, և այլն), որը վեճերի առարկա են դառնում
- փոխզույգման և հավասարակշռման մեխանիզմների ոչ հստակ լինելը:

Փորձագետների մեծամասնությունը կարծում է, որ «... սահմանադրական բարեփոխումները չեն կարող հաղթահարել խնդիրները» կամ մասնակիորեն կլուծեն որոշ խնդիրներ: Նրանք խնդրի լուծումը տեսնում են ռեժիմի, իշխող կարգերի և/կամ հասարակական իրավագիտակցության փոփոխման մեջ: «...Սահմանադրությունը, եթե փոխվի դա չի նշանակելու, որ սահմանադրությունը ավտոմատ կյանքի է կոչվելու: ...ինստիտուտները գործում են մարդկանց միջոցով և շատ բան կախված է նրանից, թե այդ ինստիտուտներում գործող մարդիկ, տվյալ դեպքում՝ նախագահ, կառավարություն, ազգային ժողով, դատական իշխանություն, ինչպես են կիրառելու այդ սահմանադրությունը»<sup>55</sup>:

Սահմանադրության ուժեղ և թույլ կողմերն անհրաժեշտ է դիտարկել այն տեսանկյունից, թե մասնավորապես ինչն է, որ այս ներկայումս բավարար լավ է ամրագրված և երաշխավորված (արդյունքում՝ հարկավոր է նոր նախագծում թողնել ինչպես որ կա), և մյուս կողմից, թե ինչն է հարկավոր արմատականորեն փոփոխել կամ լրացնել հավելյալ երաշխիքներով: Գործող Սահմանադրության ձեռքբերումներից է Սահմանադրական դատարան անհատական գանգատներով դիմելու ինստիտուտի ներդրումը: Այն իրապես գործուն մեխանիզմ է նախադեպային իրավունքի միջոցով իրավունքի զարգացմանը նպաստելու համար: Մարդու իրավունքների գլուխը բավականին հաջող ձևակերպված է, որը, սակայն, համալրելով սահմանափակումներով, կարելի է համարել լիարժեքորեն հաջողված: Լուրջ վերանայման կարիք է զգում իշխանության թերի հավասարակշռման և փոխզույգման ինստիտուտը, ինչպես նաև դատական համակարգի անկախության երաշխիքների ամրագրումը: Այնուամենայնիվ,

<sup>54</sup> Փաստաբանի խոսքերից:

<sup>55</sup> Սահմանադրական բերափոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

չափազանց կարևոր է ընդգծել, որ ցանկացած փոփոխություն կարող է գնահատվել դրական և արդյունավետ միմիայն այն դեպքում, եթե լինի քաղաքական կամք՝ դրանք հավուր պատշաճի կյանքի կոչելու և առաջնորդվելու այդ երաշխիքներով:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք սահմանադրական բարեփոխումները կնպաստեն վերհանված խնդիրների լուծմանը, ապա դրանց հետագա կիրառելիությունը մեծապես կախված է մի շարք հանգամանքներից, որոնք նույնպես բխում են քաղաքական կամքից:

Չնայած փորձագետների ճնշող մեծամասնությունը հակված է այն կարծիքին, որ սահմանադրական բարեփոխումները չեն կարող լիարժեքորեն լուծել գործող սահմանադրության թույլ կողմերը, այնուամենայնիվ հաջորդ հարցով փորձ է արվել ճշտել, արդյոք դրանք կլուծեն երկրի առջև ծառայած հիմնախնդիրները և եթե այո, ապա **հասկապես ո՞ր խնդիրները կլուծվեն և ովքե՞ր (հանրություն, իշխանություններ, պետություն) կշահեն և ինչպե՞ս կշահեն:**

Դասախոսներն ու իրավապաշտպան ՀԿ-ների փորձագետները համակարծիք են, որ սահմանադրական բարեփոխումները ի գորու չեն լուծելու երկրի առջև ծառայած հիմնախնդիրները՝ ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ ներկայացված հայեցակարգի նախագծի բովանդակությունից ելնելով: Նրանք նաև շեշտել են, որ հիմնախնդիրների լուծման գործում էական դեր ունի ոչ թե սահմանադրության «իդեալական տեքստը», այլ այն աշխատեցնողները, ինչպես նաև ժողովրդի իրավագիտակցությունը:

Փորձագետների մեկ այլ խումբ չնայած վստահ չէ, որ կոնկրետ այս բարեփոխումները կկարողանան լուծել հիմնախնդիրներ, սակայն հույս են հայտնել, որ «...*հնարավոր է ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվի որոշակի խնդիրներ լուծելու համար*»<sup>56</sup>:

Նրանք, ով կարծում է, որ այս բարեփոխումները իրենց դրական արդյունքը կունենան երկրի առջև ծառայած հիմնախնդիրների լուծման գործում, մասնավորապես առանձնացրել են հետևյալ խնդիրները/ուրրտները.

- իշխանությունների տարանջատման, հակակշռման, հավասարակշռման խնդիրները
- իշխանության իրավունքով սահմանափակման խնդիրները
- ընտրական ինստիտուտների նկատմամբ բացասական վերաբերմունքի և հավատի բացակայության խնդիրը
- դատական իշխանության անկախության խնդիրը
- ընտրակեղծիքների վերացում/քչացում՝ պառլամենտական համակարգի ներդրման շնորհիվ
- իրավունքի գերակայության սկզբունքի ապահովման խնդիրը

<sup>56</sup> Սահմանադրագետի խոսքերից:



- արտաքին և ներքին խնդիրներ, սկսած սոցիալ-տնտեսականից, ավարտած քաղաքականով:

Իսկ թե ովքեր կշահեն, փորձագետների մեծամասնությունը կարծում է՝ կշահի նա, ով նախաձեռնել է սահմանադրական փոփոխությունները, այսինքն իշխանությունները: Ըստ նրանց հանրությունը չի շահի, քանի որ փոփոխությունը նախաձեռնվել է առանց հանրության պահանջի, և ժողովուրդը առանձնապես մասնակից չի բարեփոխումների գործընթացներին, նաև իշխանությունների նկատմամբ բացարձակ անվստահության մթնոլորտով պայմանավորված՝ առնվազն չի ընդունվի հանրության կողմից: Դատելով հայեցակարգի նախագծից, փորձագետները կարծում են, որ կառավարման ձևի փոխելը քաղաքական շահ է հետապնդում, այն *«...միտված է իշխանությունների կողմից որոշակի դիվիդենդներ ստանալուն: ... Իրենց վերարտադրվելը ավելի հեշտացնելով՝ իշխանության մենիշխանական ոճը ավելի է ամրապնդվելու»*<sup>57</sup>: Սահմանադրագետներից մեկը լուրջ մտավախություն ունի հանրության ավելի վատ վիճակում հայտնվելու՝ չշահելու ուղղությամբ, *«...կոնկրետ ՄԻՊ ոլորտում սարսափելի վտանգավոր բաներ են նախաձեռնում: Էականորեն նվազեցվելու է մարդու իրավունքի պաշտպանության ստանդարտը, ինչը նշանակում է՝ մեր իրավունքները սահմանափակվելու են: ... Էն ժամանակ (հեղ. բարեփոխումից հետո) նույնն ա լինելու, մի քիչ ավելի վատ, բայց մենք էլ չենք կարողանալու ասել, որ Սահմանադրություն ա խախտվում»*<sup>58</sup>:

Փորձագետների մի խումբ էլ ձեռնպահ է մնացել կարծիք հայտնել, քանի դեռ հայեցակարգը նախագծի մակարդակով է *«...վերջնական տեքստը դեռ չկա, դժվար է ասել, հնարավոր է տեքստի պատրաստ լինելուց հետո տեսնենք, որ թաքնված բաներ կան»*<sup>59</sup>: Նրանք պնդում են, որ ՊԵՏՔ է նախնառաջ հանրությունը շահի՝ հետևաբար պետությունն էլ կշահի, իսկ վերջնական փոփոխությունները պետք է առաջնորդվեն միմիայն հանրային շահի գիտակցությամբ:

Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի հարցված անդամները միաբերան պնդում են, որ *«...կշահի ամբողջ հանրությունը, եթե իրականացվի այն ուղղությամբ, ինչ որ առաջարկվում է առնվազն այս հայեցակարգի նախագծով»*<sup>60</sup>: Նրանք նշում են, որ ոչ միայն կշահի հանրությունն ու պետությունը, այլև հավելում են, որ շահող կողմ է նաև իշխանությունը *«...եթե կարողանում ա հասարակության խնդիրները լուծել կամ սպասարկել, ինքը հենց դրանով ա շահում»*<sup>61</sup>, ինչպես նաև *«...Իշխանությունները կշահեն այնքանով, որքանով որ պարտադրված կլինեն շատ ավելի արդյունավետ աշխատել»*<sup>62</sup>: Իրականությունից կտրվելով, հանձնաժողովի անդամներից մեկը նշել է, որ մտայնություն կա,

<sup>57</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>58</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>59</sup> Փաստաբանի խոսքերից:

<sup>60</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>61</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից

<sup>62</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

որ «...հիմնական օրենքը գրվում կամ փոփոխվում է որևէ պաշտոնյայի համար»<sup>63</sup>, սակայն հիմնվելով հայեցակարգի նախագծի վրա, փաստել են, որ «...չեմ տեսնում որևէ դրույթ, որը կոնկրետ միտված ա իշխանության որևէ թնի կամ անձի շահերի սպասարկմանը և դրանով իսկ փաստաթուղթը հավասարակշռված և օբյեկտիվ փաստաթուղթ է»<sup>64</sup>:

Այն հարցում, թե ովքեր կշահեն փոփոխությունների արդյունքում, առանցքային է, թե որքանով են դրանք մարդակենտրոն և իրապես միտված երկրում ժողովրդավարության և իրավունքի գերակայության ամրապնդմանը: Բնականաբար, ցանկացած նախաձեռնություն, որը բխում է իշխանություններից՝ անկախ դրանց իրական նպատակայնության, հասարակության կողմից հաճախ ընդունվում է սուր քննադատությամբ, քանի որ հասարակությունում տիրում է իշխանությունների նկատմամբ վստահության պակաս: Այնուամենայնիվ, դատելով տեքստային ձևակերպումներից՝ շահելու է ողջ հասարակությունը, եթե, իհարկե, իշխանությունը քաղաքական կամք դրսևորի այդ փոփոխություններն իրական բարեփոխումների վերածելու համար:

Անդրադառնալով նրան, թե **ինչպես կարող են ՀՀ քաղաքացիները մասնակցել սահմանադրական բարեփոխման գործընթացին**, փորձագետները հիմնականում նշում են՝ քննարկումներին նրանց մասնակցությամբ և առաջարկություններով, ինչպես նաև առնվազն մասնակցելով հանրաքվեին: Սահմանադրագետները նշում են, որ քաղաքացիների մասնակցության գործուն ֆորմատ չկա, և հետևաբար, նրանց մասնակցությունն առավել արդյունավետ կլինի միջնորդավորված կերպով իրականացնելիս, այսինքն ինստիտուտների՝ «...քաղաքացիական հասարակության, հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների և ներկայացուցիչների միջոցով»<sup>65</sup>: Անհատ քաղաքացիները կարող են իրենց առաջարկություններն ուղղակիորեն ներկայացնել հանձնաժողով, սակայն դա պասիվ պրոցես է, տեսական հնարավորություն է՝ այս պահի դրությամբ: Այդ պասիվությունը կարող է նաև պայմանավորված լինել նրանով, որ «...քաղաքացին վստահություն չունի նախաձեռնողի հանդեպ»<sup>66</sup>: Փաստաբաններից մեկն էլ նշել է, հանձնաժողովը պատրաստ է ընդունել քաղաքացիների ցանկացած առաջարկ, սակայն «... որևէ երաշխիք չկա, որ էդ առաջարկները կընդունվեն կամ կներառվեն»<sup>67</sup>:

Որոշ փորձագետներ կարծում են, որ «...Սահմանադրությունը անհամեմատ ավելի բարդ փաստաթուղթ է, և դա ամենևին էլ հասարակության խելքի բանը չէ»<sup>68</sup>, իսկ իրավապաշտպան ՀԿ-ների ներկայացուցիչները այն կարծիքին են, որ «... քաղաքացիական գիտակցությունը

<sup>63</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>64</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>65</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>66</sup> Բրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի:

<sup>67</sup> Փաստաբանի խոսքերից:

<sup>68</sup> Դասախոսի խոսքից:

*մեր հասարակության, ժողովրդի մեջ, ցավոք սրտի չկա*»: Այս պարագայում, փորձագետները տեսնում են «...փորձագիտական հանրության մոբիլիզացիայի կարիք»<sup>69</sup>:

Ամեն դեպքում, փորձագետները կարևորելով մասնակցային գործընթացները, կարծում են, որ հանրությունը պետք է իրազեկվի փոփոխությունների վերաբերյալ, կազմակերպվի հրապարակային քննարկումներ, իսկ հասարակությունը հնարավորինս ներգրավվի, նախաձեռնություն դրսևորի և առաջարկներ ներկայացնի: Հանձնաժողովի անդամները կարծում են՝ այս գործընթացներին հասարակության մասնակցության ցանկալի ակտիվությունը դեռ չի ձևավորվել:

Հարկ է նկատել, որ ՀՀ նորագույն օրինաստեղծ պատմության մեջ առաջին անգամն է, որ հասարակությանը մասնակից են դարձնում Սահմանադրության մշակմանը դեռևս սաղմնային փուլում: 1995թ.-ի Սահմանադրությունը հասարակությանը լիովին պատրաստի վերջնական փաստաթղթի տեսքով է հրամցվել հանրաքվեի ժամանակ, 2005թ.-ի փոփոխությունների ժամանակ հիշարժան է տարբեր՝ այլընտրանքային նախագծերի շրջանառությունը, սակայն առաջին անգամ է, որ հասարակության լայն հարվածին հրավեր է ուղարկված ակտիվ քաղաքացիական մտածողություն դրսևորելով, մասնակցել սահմանադրության նոր նախագծի կազմմանը: Բնականաբար քայլը ողջունելի է և հուսադրող, որ եթե հասարակությունը ցանկություն ունենա մասնակցել, ապա մի շարք հասարակական կազմակերպությունների և խմբերի միջոցով կարող է իր մտքերն ու առաջարկությունները լսելի դարձնել:

**Սույն ծրագրի նախաձեռնող և փորձագիտական խումբը վստահություն և հույս է հայտնում, որ հասարակական և փորձագիտական խորքային ուսումնասիրություններն ու վերլուծություններն անպայման կհետազոտվեն Հանձնաժողովի կողմից և հաշվի կառնվեն Հայեցակարգի հիման վրա Սահմանադրության նոր նախագծի կազմման ժամանակ:**

## **Հայեցակարգի ընդհանուր բնույթի հարցերի շուրջ**

Խոսելով ՀՀ նախագահին առընթեր Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից մշակված Սահմանադրության բարեփոխումների հայեցակարգի մասին և, պատասխանելով այն հարցին, թե **արդյո՞ք ներկայացված նախագիծն ավելի լավն է և համահունչ ՀՀ առկա իրավիճակին, քան գործող Սահմանադրությունը՝** փորձագետներից ոմանք կարծիք են հայտնել, որ այդ երկու փաստաթղթերը չի կարելի համեմատել, որովհետև

<sup>69</sup> Սահմանադրագետի խոսքերից:

«...սահմանադրությունը նորմատիվ փաստաթուղթ է, իսկ սա միայն հայեցակարգ»<sup>70</sup>, իսկ նրանցից ոմանք մանրակրկիտ համեմատական վերլուծություններ չէին կատարել:

Իրավապաշտպան ՀԿ-ների ներկայացուցիչները և որոշ սահմանադրագետներ միանշանակ բացասաբար են գնահատել հայեցակարգի նախագիծը, և եթե այդ նախագծի առաջարկները ներկա ձևով ի վերջո իրենց տեղը գտնեն նոր սահմանադրության մեջ, ապա որոշ հարցերում լուրջ մտավախության տեղիք կտան: Մասնավորապես, նրանք ովքեր կարծում են, որ հայեցակարգի նախագիծը շատ վատն է, համոզված են, որ այն հարմարեցվում է իշխանության վերարտադրմանը, այսինքն «...ավելի կամրապնդեն ներկա իշխանությունների դիրքերը և իշխանությունների վերարտադրման տենդենցը»<sup>71</sup>: Ընդդիմախոսները կարծում են, որ «...Հայեցակարգը լուծումներ չի տալիս, այնտեղ կան պրոբլեմներ, իսկ լուծումների հետ կապված շատ մշուշոտ ս»<sup>72</sup>, ինչպես նաև խորհրդարանական համակարգին անցումը և ընտրությունների համատեղումը այսօր նպատակահարմար չէ, ավելին՝ «...Հայեցակարգը համահունչ ա դե ֆակտո սահմանադրական կարգին, դե ֆակտոյին տալ դե յուրե կարգավիճակ, փաթեթավորել իրավաբանական այնպիսի տեսքով, որպեսզի դե ֆակտո վիճակը հավերժ շարունակվի»<sup>73</sup>:

Իսկ փորձագետների մեկ այլ խումբ, ով կողմնակից է սահմանադրական փոփոխություններին, կարծում է, որ հայեցակարգի նախագծում «...փոփոխությունները որոշ վերապահումներով արտացոլված են»<sup>74</sup>: Ըստ նրանց, այդ փոփոխությունների կարիքն իրոք կա ներկայումս:

**Քանի որ հայեցակարգի նախագիծը միայն մատնանշում է առկա խնդիրները, ուրվագծում է հնարավոր սահմանադրական զարգացումները և չի տալիս բարձրացված հիմնախնդիրների լուծումները, ուստի բնական է փորձագետների տարակարծություններն այս հարցում: Թեև նախագծում որոշ ինստիտուտների վերաբերյալ առկա են կանխորոշվող լուծումները, սակայն դրանք հստակ սահմանված չեն որպես վերջնական կարգավորումներ: Բացի այդ մեծ է մտավախությունն այն հարցում, որ հայեցակարգը պարունակում է իշխանության վերարտադրման «թաքնված» գործիքներ, որոնք հետագայում կամրագրվեն սահմանադրության տեքստում:**

Այն հարցին, թե ներկայիս Սահմանադրության գործողության ընթացքում ի հայտ եկած բոլոր բացթողումներն ու թերություններն են արդյոք հաշվի առնված ներկայացված հայեցակարգում, փորձագետները կարծում են, որ հիմնականում գրեթե բոլոր պրոբլեմները ներկայացված են և հաշվի են առնված հայեցակարգի նախագծում, սակայն «...լուծումներն

<sup>70</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>71</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>72</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>73</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>74</sup> Սահմանադրագետի խոսքերից:

*անհասկանալի են, ...մշուշոտ վախվորած առաջարկություններ են»<sup>75</sup>, ինչպես նաև խնդիրը նրանում է, թե դրանք ինչպես «...կվերարտադրվեն կոնկրետ հոդվածներում: ...հայեցակարգն ընդամենը ուղղություն է», այսինքն «... մինչև փոփոխությունների տեքստը չլինի, դատողություններ անելն անիմաստ կլինի»<sup>76</sup>: Սահմանադրագետներից մեկը կարծում է, որ «...Հայեցակարգում լավ բացահայտվել են ներկայիս գործող քաղաքական համակարգի թերությունները, որոնք սահմանադրության հետ էղբան կապ չունեն...»:*

Որոշ փորձագետներ, հատկապես շեշտել են այն գաղափարը, որ այս փոփոխություններից ոչինչ չի փոփոխվելու, քանի որ «... փորձում են ... կյանքի իրավիճակը վերցնել, տենց էլ ամրագրել Սահմանադրության մեջ...»<sup>77</sup>: Այս պարագայում բարեփոխում չի կարելի ասել, քանի որ «...ոչ թե դե ֆակտո սահմանադրական կարգն է փոփոխվելու, այլ գոյություն ունեցող այդ իրավական փաստաթուղթը համապատասխանեցվելու է դե ֆակտո վիճակին»<sup>78</sup>:

Սահմանադրագետներից մեկն էլ, տրամագծորեն այլ կարծիք է հայտնել, ըստ որի «...սահմանադրությունը պետք է մեկնաբանվի կյանքի լույսի ներքո, իրականության լույսի ներքո և մեկնաբանությամբ պիտի որոշակի փոփոխություններ կրի...»<sup>79</sup>:

Նրանք, ով կարծում են, որ հայեցակարգը քիչ թե շատ արտացոլում է ներկայիս Սահմանադրության գործողության ընթացքում ի հայտ եկած բացթողումներն ու թերությունները, նշել են նաև այն ոլորտները/բացթողումները, որոնց անդրադարձ չի կատարվել. մասնավորապես,

- կարգավորված չէ իշխանության թևերի տարանջատման հարցը,
- չեն նվազեցվել իշխանության վերարտադրման ռիսկերը,
- լուծված չէ սահմանադրական դատարանի անկախության հարցը,
- կարգավորված չէ շահերի բախումները, մասնավորապես սահմանադրական դատարանի անդամների համար,
- ապահովված չէ դատարանի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների անկախության մեխանիզմը:

Հայեցակարգով առաջարկվող և փորձագետների կողմից դրական գնահատված փոփոխությունները վերաբերում են հետևյալին.

- Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների բաժինը,
- դատախազության դերը,
- դատական համակարգում արդարադատության խորհրդի դերը:

<sup>75</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>76</sup> Դասախոսի խոսքերից:

<sup>77</sup> Փաստաբանի խոսքերից:

<sup>78</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>79</sup> Սահմանադրագետի խոսքերից:

Փաստորեն փորձագետները համակարծիք են այն հարցում, որ հայեցակարգի նախագծով ներկայացված են գործող սահմանադրության գրեթե բոլոր թերությունները, սակայն կարծիքները կիսվում են, թե որքանով են դրանք ներառված հայեցակարգում և ինչպիսի լուծում է առաջարկվում: Անշուշտ, հայեցակարգում թերությունները հստակ են մատնանշված, քանի որ իրավակիրառ պրակտիկան նաև ապացուցել է որոշ կարգավորումների անկատարությունը, սակայն քանի դեռ բացակայում է սահմանադրության նախագծի տեքստը, դժվար է դատողություններ անել, թե որքանով դրանք կշտկվեն բարեփոխումների արդյունքում:

Փորձագետներին ուղղված այն հարցը, թե արդյոք ամբողջովին նոր Սահմանադրության ընդունմամբ, որը նախատեսում է մի շարք նոր համակարգերի և մոտեցումների ներդրում, չեն առաջանա՞ մեծ թվով ռիսկեր<sup>80</sup>, նրանցից ոմանք կարծում են՝ ռիսկեր, այնուամենայնիվ, կլինեն, մասնավորապես «...ծախսեր, ժամանակ, վարչական ռեսուրսի օգտագործում, որը, ...Հայաստանում սահմանադրական կարգի վերականգնման չի բերելու»<sup>81</sup>: Որպես ռիսկ նշվել է այն, որ «...դառնում ա միակուսակցական համակարգ՝ պառլամենտական հիմնավորմամբ: Երբ որ սահմանադրական փոփոխությունների տրամանաբանությունն ուղղված ա դե ֆակտո սահմանադրական կարգի իրավական հիմնավորմանը, որն արդեն իսկ վտանգավոր ա»<sup>82</sup>: Փորձագետներից մեկն էլ բոլորովի այլ տեսակետից է դիտարկում իրավիճակը և նշում է «...ռիսկն այն է, որ մեր ժողովրդի մտածողությունը իներցիոն մտածողություն է, և դեռ պատրաստ չէ նման սահմանադրությանը, ինքնուրույնության պատրաստ չի, վախենում է, մի կողմից դժգոհ է իշխանությունից, մյուս կողմից էլ, իմ կարծիքով վախենում է փոփոխություններից»<sup>83</sup>:

Սահմանադրագետներից մեկը օրինակով է ներկայացրել ռիսկերը, «...Խորհրդարանական համակարգի անցումից ռիսկերը, մեկ՝ ժողովրդավարական տենդենցների, ժողովրդավարական կոնսոլիդացիայի, ժողովրդավարացման համար նպաստավոր պայմանների ավելի մեկ քայլ ետ կկատարենք, երկրորդ՝ իշխանությունների բաժանման համար ավելի նվազ նպաստավոր պայմաններ կստեղծվեն խորհրդարանական պայմաններում, երեք՝ գուտ իշխանության կայունության տեսակետից ես կարծում եմ և վստահ եմ, որ ևս մեկ հետքայլ կլինի մեզ մոտ»<sup>84</sup>:

Որպես այդ ռիսկերի հաղթահարման երաշխիք՝ նրանք կարծում են «...այդ ռիսկին չգնայն է» կամ «...անհրաժեշտ է ժողովրդի ինքնիշխանության անմիջականորեն իրացում, դրսևորում»,

<sup>80</sup> Անհրաժեշտություն է առաջանալու մեծ թվով օրենքների և օրենսգրքի վերանայում, պետական մարմինների ստեղծում, ինչը օրինակ նաև պետական բյուջեից հավելյալ ծախսեր է պահանջում և այլն:

<sup>81</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>82</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>83</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>84</sup> Սահմանադրագետի խոսքերից:

որն էլ կարելի է իրականացնել «...համաժողովրդական ընդվզումով, քաղաքացիական անհնազանդությամբ, ապստամբությամբ»<sup>85</sup>:

Ռիսկ կարելի է համարել նաև հնարավոր անկայունությունը, որը կարող է անցումային շրջանի հետևանք լինել: Նոր համակարգերի, ինստիտուտների ներդնումը անխուսափելիորեն կառաջացնի ժամանակի և միջոցների լրացուցիչ ծախսեր, ինչը գուցե այս ժամանակահատվածում այնքան էլ նպատակահարմար չէ՝ ելնելով երկրի սոցիալ-տնտեսական վիճակից:

## Մարդու իրավունքներ

Փորձագետներն այն հարցին, թե ըստ նրանց՝ **ինչ է նշանակում իրավունքի գերակայությունը**, այն ներկայացրել են որպես մի իրավիճակ, երբ հասարակական հարաբերություններում գերակայում է իրավունքի սկզբունքը, այսինքն ցանկացած հարաբերություններ կառուցվում են մարդու իրավունքի առաջնահերթության հիման վրա կամ երբ բնական իրավունքը գերակա է ֆորմալ իրավունքի նկատմամբ: Եթե ֆորմալ իրավունքը հակասում է բնական իրավունքին, ապա գործում է բնական իրավունքը:

*Իրավապաշտպանները* իրավունքի գերակայությունը ներկայացրել են այնպես, որ հնարավոր է օրենքներում լինեն մարդու իրավունքները ոտնահարող դրույթներ, բայց իրավունքը պետք է վեր լինի օրենքով սահմանվածից: Հայաստանում, դժբախտաբար, նախկինում և հիմա էլ հնարավորություն կա պարբերաբար կամ գրեթե մշտապես ապօրինաբար սահմանափակել մարդու իրավունքները:

Դասախոսներից մեկը կարծիք է հայտնել, որ «*Իրավունքի գերակայությունը դա իրավունքի ուժի գերակայությունն է և չթույլատրելը, որպեսզի գերակայի ուժի իրավունքը: Իրավունքի ուժը պետք է բացառի ուժի իրավունքի գերակայությունը: Մյուս կողմից էլ, իրավունքի գերակայության համար պետք է ճիշտ ընդունենք մեր սահմանադրության տրամաբանական հարթակը, քանի որ սահմանադրությունն ինքը իրավունքի խտացումն է, նյութականացված ձևը: Իրավունքի գերակայություն. առաջինը որ ուժի իրավունքը բացառի, և երկրորդ, որպեսզի իրավական համակարգը լինի բնական իրավունքի տրամաբանական հարթության մեջ...*»<sup>86</sup>:

<sup>85</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>86</sup> Դասախոսի խոսքերից:

Ըստ էության՝ հարցված փորձագետների կողմից հնարավորինս մատչելի կերպով բացատրվել է իրավունքի գերակայության սկզբունքի էությունը: Ամփոփելով՝ կարելի է ասել, որ. «Իրավունքի գերակայություն» ձևակերպումը ենթադրում է հետևյալ պահանջները. ա) իրավունքի առաջնայնությունն սոցիալական այլ կարգավորիչների նկատմամբ, բ) օրենքի՝ որպես իրավունքի արտահայտման ձևի, համապատասխանությունն իրավունքին, դրա բուն էությանը:

Այն հարցին թե **արդյոք հարկավոր է սահմանադրության մակարդակում նախատեսել հավելյալ երաշխիքներ իրավունքների անմիջական գործողությունն ապահովելու համար**, փորձագետների կարծիքները բաժանվել են: Փորձագետներին միևնույն ժամանակ հիշեցվել է, որ նախագծով առաջարկվող տարբերակը չի տարբերվում գործողից<sup>87</sup>: Նրանց մի մասը գտել է, որ Սահմանադրության մակարդակով հավելյալ երաշխիքների ապահովման կենսական անհրաժեշտություն չկա, ներկայումս ամրագրված երաշխիքները բավարար են՝ դրանք կիրառելու ցանկություն և կամք ունենալու պարագայում: Սահմանադրագետներից մեկը կարծիք էր հայտնել, որ. «...*Իրականում իրավունքի գերակայությունը հրաշալիորեն ամրագրված է Սահմանադրության մեջ, իրավունքի գերակայության իրագործումը մեր ամենօրյա կյանքում պայմանավորված է կոնկրետ մարդկանց գործունեությամբ, կոնկրետ մարդկանց կողմից Սահմանադրության նկատմամբ ունեցած հարգանքի աստիճանով, այդ հարգանքի դրսևորմամբ*»:

Որոշ փորձագետների կարծիքով՝ «...*այդ հանձնաժողովի որոշ անդամներ եղել են նախորդ սահմանադրության մշակողների մեջ: Բա ինչո՞ւ են ամեն անգամ սխալներ թույլ տալիս: Կարելի է 400 էջ գրել այդ երաշխիքների մասին սահմանադրության մեջ, բայց դրա կարիքը չկա*», այնուհետև առաջարկվել է, որ «...*Հարկավոր է տարանջատել իշխանության բնեղները, ունենալ անկախ դատական համակարգ և խախտումների դեպքում կոնկրետ սանկցիաներն ավելի հստակ արտահայտված լինեն և վերջ*»<sup>88</sup>:

Փորձագետների մյուս մասը, ովքեր գտնում են, որ այդպիսի երաշխիքների ամրագրման անհրաժեշտություն կա, բերել են հետևյալ հիմնավորումները. «... *մենք սահմանադրության մեջ ունենք մեծագույն խնդիրներ, բոլոր իրավունքները՝ քաղաքական, քաղաքացիական, սոցիալական, նույն ձևով են շարադրված, դրանց սահմանափակումները, պաշտպանությունը, ինչն անհրատեսական է դարձնում դրանց ապահովումը: Այդ պատճառով հարկավոր է տարանջատել դրանք իրարից, առաջինների պարագայում՝ միայն սահմանադրությամբ նշվածները, դրանց սահմանափակումները, հնարավորությունները,*

<sup>87</sup> Նախագծում հատուկ ընդգծված է, որ Սահմանադրությունն անհրաժեշտ ու բավարար սահմանադրաիրավական երաշխիքներ պետք է նախատեսի իրավունքների անմիջական գործողությունն ապահովելու համար: Այնինչ, գործող Սահմանադրության հոդված 3-ում ամրագրված է «...Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

<sup>88</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:



*երկրորդների պարագայում՝ նշված լինեն շրջանակները, որոնց տիրույթում օրենսդիրը կարող է սահմանափակումներ ու երաշխիքներ ապահովել, ընթացակարգեր նախատեսել, երրորդի պարագայում՝ ավելի լայն հնարավորություն տրվի օրենսդրին՝ պայմանավորված երկրի սոցալ-տնտեսական հնարավորություններից»<sup>89</sup>:*

Դասախոսներից մեկն էլ որպես երաշխիքների ամրագրման անհրաժեշտության փաստարկ՝ պարզաբանել է, որ «...գործող սահմանադրության մեջ ամրագրված է, որ պետությունը սահմանափակված է մարդու իրավունքներով, ազատություններով՝ որպես անմիջական գործող իրավունք: Սա, ըստ էության, դեկլարատիվ բնույթ ունի: Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը ոչ թե սա է ուզում փոխել, այլ այս դեկլարատիվ բնույթի մեխանիզմներն է ուզում ապահովել: Բհարկե, սահմանադրական մակարդակով անհրաժեշտ է ամրագրել երաշխիքներ»:

Մենք համակարծիք ենք փորձագետների մեծամասնության հետ այն հարցում, որ այս պահին գործող Սահմանադրությունն էլ բավականաչափ ամրագրում է իրավունքների անմիջական գործողությունն ապահովման երաշխիքներ: Այս պահին դժվար է անգամ պատկերացնել, թե Հանձնաժողովը մասնավորապես ինչ է առաջարկում այս ոլորտում: Միննույն ժամանակ գիտակցելով, որ ցանկացած լրացուցիչ երաշխիքի ամրագրումը սահմանադրության մակարդակում միայն կարող է ի օգուտ անհատի ծառայել, բնականաբար, այն դրական է գնահատվում, սակայն հարկ է ընդգել, որ առանձնապես էական փոփոխությունների ակնկալիք կունկրես այդ փոփոխությունից չի կարող լինել:

Այն հարցին թե, ըստ փորձագետների, **ինչ է նշանակում մարդու հիմնական իրավունքների անմիջական գործողություն**, հղում կատարելով Հայեցակարգում ամրագրված այն մտքին, որ. «մարդու հիմնական իրավունքները և ազատությունները անմիջապես չեն գործում և որ պետք է ապահովել դրանց անմիջական գործողությունը», սահմանադրագետները հիշեցրել են, որ դա սկզբունք է և նշանակում է, որ անկախ այն հանգամանքից, թե տվյալ իրավունքը նախատեսված է օրենքով թե ոչ, այդ օրենքը գործում է այնքանով, որքանով դա նախատեսված է սահմանադրությամբ: Նրանք հավելել են, որ սահմանադրությամբ ամրագրված իրավունքները պետք է գործեն անմիջականորեն, այսինքն՝ պետությունը, դատարանները որոշում ընդունելուց պետք է անմիջականորեն հղում կատարեն սահմանադրությամբ ամրագրված իրավունքներին ու ազատություններին:

Սահմանադրագետներից մեկը, բերելով բավականին պատկերավոր օրինակներ, նաև մանրամասնել է, թե ինչպես է անհրաժեշտ տարբեր կողմերը դիտարկել և հասկանալ իրավունքների անմիջական գործունեության սկզբունքը: Այսպես. «Սահմանադրությունն ամրագրում է, որ անձն ունի արտահայտվելու ազատության իրավունք: Իրականացնելով այս իրավունքը՝ անձը կարող է կանգնել հրապարակում և գոռոզալ իր քաղաքական

<sup>89</sup> Սահմանադրագետի խոսքերից:

հայացքները: Իրավիճակ 1-ում ընդունելով, որ որևէ օրենք չկա, որը կարգավորի անձի քաղաքական հայացքներն արտահայտելու իրավունքի իրականացումը և այդ իրավիճակում ոստիկանության գործողությունները, Սահմանադրության մեջ 27-րդ հոդվածի առկայությունը բավարար է, որ ոստիկանը չմտենա իր քաղաքական կարծիքներն արտահայտող անձին: Այսինքն՝ անկախ նրանից՝ դա օրենքով նախատեսված է, թե՛ ոչ, դա գործում է, որովհետև անմիջականորեն սահմանադրական է: Իրավիճակ 2-ում ընդունենք, որ գոյություն ունի որևէ օրենք, որում նախատեսված է, որ եթե անձը հրապարակավ արտահայտում է իր օրինակ քաղաքական դիրքորոշումը, իրավապահ մարմնի աշխատակիցները, որոշակի օրենքով լիազորված լինելով, կարող են նրան ձերբակալել, ապա երբ տվյալ անձը ներկայացվի դատարան, որտեղ ոստիկանները մատնանշելով օրենքի դրույթը պնդեն, որ իրենք իրականացրել են օրենքի պահանջները, անձը պարզապես պետք է հղում կատարի ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածին՝ ընդգծելով, որ այն կիրառվում է անմիջականորեն, չի պայմանավորված որևէ օրենքի կատարմամբ, այդ իրավունքն իրականացնելու համար չի պահանջվում որևէ օրենքի առկայություն: Արդյունքում, դատարանը ներկայացված գործին անդրադառնալիս պիտի սկսի ոչ թե օրենքի վերլուծությունից, այլ Սահմանադրության մակարդակից՝ պարզաբանելով, թե արդյո՞ք սա սահմանադրական իրավունք է, թե՞ ոչ: Եթե սահմանադրական իրավունք է, ուրեմն պիտի պաշտպանվի»:

Կարևոր է նաև այն, որ փորձագետների կողմից դիտարկվել է իրավունքի գործողության ուղղահայացությունը, այն է՝ իրավունքի գերակայությունը և սահմանադրական իրավունքի գործողության անմիջականությունը նշանակում է, որ դա ուղղահայաց և առանց որևէ պայմանականությունների կիրառելի է ցանկացած քաղաքացու գործով՝ ընդդեմ պետության, ո՛չ ընդդեմ երկրորդ քաղաքացու կամ ո՛չ ընդդեմ որևէ իրավաբանական անձի: Սահմանադրության մեծագույն քաղաքակրթական արժեքներից մեկն էլ այն է, որ դա պետության և քաղաքացու միջև եղած պայմանագիրն է, որը չի տարածվում երրորդ անձի նկատմամբ ուղղակիորեն և էական չէ, թե արդյոք հանրաքվեի ժամանակ առանձին վերցրած անհատը կողմ է քվեարկել այդ «պայմանագրին», թե դեմ: Այդ պայմանագիրը ստորագրված է համարվում և պարտադիր է դառնում յուրաքանչյուրի համար, եթե ստացել է պետության քաղաքացիների մեծամասնության հավանությունը:

Ամփոփելով փորձագետների կարծիքները՝ հարկ ենք համարում ավելացնել, որ իրավունքների և ազատությունների անմիջական գործողությունը ենթադրում է նաև անձի, հասարակության և պետության միջև որոշակի կապերի առկայություն, որը երաշխավորում է անհատի՝ ինքնաիրացման իրավաբանական անհարժեշտ ու բավարար նախադրյալներ: Այս առումով մարդու իրավունքների անմիջական գործողությունն ուղղորդում է պետական իշխանական գործառույթների, այդ թվում՝ օրենսդիր գործառույթի իրականացումը: Օրենսդիր մարմինն իր գործառույթներն իրականացնելիս պարտավոր է, հիմնվելով անմիջականորեն գործող մարդու իրավունքների և ազատությունների վրա, ընդունել

**այնպիսի օրենքներ, որոնք անհարկի չեն սահմանափակի մարդու իրավունքները և չեն հակասի պետության Սահմանադրության պահանջներին:**

Ի պատասխան Հայեցակարգում ամրագրված այն տեսակետի, ըստ որի **մարդու ազատությունները, իրավունքները չեն գործում և պետք է ապահովել դրանց անմիջական գործողությունը՝** հարցվողները հիմնականում համակարծիք էին այն առումով, որ ազատությունների և իրավունքների անմիջական ապահովումը հնարավոր է նաև գործող Սահմանադրության պարագայում՝ քաղաքական կամքի և ցանկության պայմաններում՝ օրինակ բերելով Սահմանադրությամբ ամրագրված կյանքի իրավունքի ապահովումը, ինչը, ըստ փորձագետների, խախտվում է ոչ թե իրավունքի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմների բացակայության, այլ ոչ իրավաչափ հրամանների և գործողությունների արդյունքում:

Այստեղ ևս կարևոր է նկատել, որ **հենց Սահմանադրության 3-րդ հոդվածն ամրագրում է որ. «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»,** ինչը բավարար հիմք է և երաշխիք դրանց ապահովման համար, իսկ թե ինչու չեն հարգվում և պահպանվում սահմանադրորեն ամրագրված սկզբունքներն ու երաշխիքները, դա արդեն բոլորովին այլ **հարթության վրա գտնվող խնդիր է:**

Այն հարցադրմանը, թե **ո՞րն է պատճառը, որ մարդու իրավունքները և ազատությունները մեր երկրում անմիջապես չեն գործում,** փորձագետները թվարկել են այնպիսի գործոններ ինչպիսիք են.

- քաղաքացիական գիտակցության ցածր մակարդակը,
- քաղաքական իրականությունը, երբ մարդու իրավունքների պաշտպանությունը որպես արժեք առաջնային չէ,
- մշակութային և քաղաքակրթական խնդիրներ,
- այն իրավիճակը, որ գործադիր և օրենսդիր իշխանությունը լեգիտիմ չեն:

Որպես պատճառ նշվել է նաև այն, որ պաշտոնյաները, զավթելով իշխանությունը, անկեղծորեն չեն հավատում, որ երկրի զարգացման լավագույն ճանապարհը ժողովրդի իշխանությունն է՝ ժողովրդավարությունը: Ըստ իրավապաշտպան ՀԿ-ներից մեկի ղեկավարի՝ պատճառը դատական համակարգն է. *«...Իրավունք ունեն, օրենքով գրված է, բայց չեն կարող անել, չկան մեխանիզմներ...»:* Սահմանադրագետներից մեկը գտնում է, որ մարդու իրավունքները և ազատությունները մեր երկրում անմիջապես չեն գործում, քանի որ քաղաքացիների մեծ մասն անտեղյակ է իր իրավունքներից և ազատություններից, իսկ մյուսը պնդում է, որ. *«...բարդ է ասելը, որ անմիջապես չեն գործում: Կարելի է ասել, որ բավարար*

*չափով չեն գործում: Ուղղակի ինձ թվում է, որ քանի որ բավարար մեխանիզմներ չկան, դա հնարավորություն չի տալիս, որ այդ իրավունքներն անմիջականորեն գործեն...»<sup>90</sup>:*

Ըստ իրականացված քանակական հարցազրույցների՝ Հայաստանում իրավունքների չպաշտպանվածության հիմնական պատճառներն են<sup>91</sup>. 56%-ի կարծիքով՝ Պատճառն այն է, որ օրենքները չեն կիրառվում, 53%-ի՝ Պատճառը իշխանություններն են, քանի որ նրանք չեն հարգում այդ իրավունքները, 34%-ի՝ Պատճառը մարդիկ են, քանի որ նրանք տեր չեն կանգնում իրենց իրավունքներին, 12%-ի՝ Պատճառը պետական կառավարման համակարգն է, 7%-ի՝ Պատճառը գործող Սահմանադրությունն է, քանի որ մարդու իրավունքները և ազատությունները թերի ու վատ են սահմանված դրանում, 5%-ի՝ Պատճառն այն է, որ դատարաններն անկախ չեն, 3%-ի՝ Պատճառը ոստիկանության կամայականություններն են և 2%-ը նշել է պատասխանի այլ տարբերակ<sup>92</sup>: Այսպիսով՝ տվյալ հարցի շուրջ քաղաքացիների և փորձագետների կարծիքները համընկնում են:

*Այն հարցին, թե արդյո՞ք փորձագետները գտնում են, որ կա անհրաժեշտություն իրավունքների, ազատությունների և պարտականությունների բովանդակային, կառուցվածքային և խմբագրական հստակեցումներ իրականացնել, ստացվել են տարբեր կարծիքներ. հարցվողների մի մասը պնդում է, որ կա դրա անհրաժեշտությունը, սակայն մինևույն ժամանակ ընդգծում են, որ դրանք էական ազդեցություն չեն կարող ունենալ իրավունքների պաշտպանման գործընթացի վրա: Մասնավորապես, սահմանադրագետներից մեկը նշել է, որ. «բովանդակային, խմբագրական այդ խնդիրները ընդամենը հեշտացնելու են սահմանադրությունը կիրարկողների խնդիրը: Ոչ թե գլոբալ ինչ-որ բան, այլ ուղղակի գրագետ խմբավորված լինեն՝ անձնական իրավունքները մի հատվածում, սոցիալականը՝ մեկում, այսինքն՝ ավելի համակարգված դարձնելու համար: Չնայած դա գլոբալ խնդիր չի լուծում, ուղղակի դա ավելի շատ տեխնիկական բնույթ ունի»<sup>93</sup>:*

Հարցված փորձագետների մի մասն էլ նշել է, որ նման անհրաժեշտություն չկա, քանի որ պետք չէ կյանքի զարգացմանը զուգահեռ անընդհատ սահմանադրություն փոխել: Սահմանադրությունն ընդհամենը ֆիքսում է սկզբունքներ, մնացածը կարգավորվում է իրավական ակտերով (սակայն մեծապես այդ պարտականությունը դրվում է դատական համակարգի՝ նախադեպերի վրա):

Հարցված իրավապաշտպան ՀԿ-ներից մեկի ղեկավարի կողմից առաջարկվել է սահմանադրության իրավունքներ և ազատություններ բաժինը գրել Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի համաձայն: Մեր կարծիքով՝ դա այդքան էլ ընդունելի տարբերակ

<sup>90</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>91</sup> Հարցվողները հնարավորություն են ունեցել ընտրելու մի քանի պատասխանի տարբերակ:

<sup>92</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 10:

<sup>93</sup> Սահմանադրագետի խոսքերից:

չէ, քանի որ Կոնվենցիան սահմանում է նվազագույն պահանջները, իսկ Սահմանադրությունն առավել լայն է և համապարփակ:

**Ամփոփելով ներկայացվածը՝ նշենք, որ Սահմանադրությունում մարդու իրավունքների և ազատությունների գլուխը բավականին լավ է սահմանված և ուղղակի հերթականություն փոխելը կամ ձևակերպումներ (ոչ բովանդակային) փոփոխելը որևէ ազդեցություն չի կարող ունենալ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանվածության մակարդակի բարձրացման վրա:**

Փորձագետներին ներկայացվել է այն, որ նախագծով առաջարկվում է մարդու հիմնական իրավունքները սահմանել մնացած (օրինակ՝ սոցիալական) իրավունքներից առանձին, ինչպես նաև հիմնական իրավունքներից յուրաքանչյուրի սահմանափակումները սահմանել առանձին, այլ ոչ թե հավաքական կերպով, ինչպես ներկայումս է: Ինչի վերաբերյալ փորձագետներին հարց է ուղղվել, թե **արդյո՞ք նրանք կարծում են, որ դա կնպաստի, որպեսզի մարդու իրավունքները գործեն արդյունավետ կերպով և ուղղակիորեն**: Փորձագետների կարծիքները խիստ տարբերվում են միմյանցից. մասնավորապես, մի մասը պնդում է, որ նման անհրաժեշտություն չկա, քանի որ դա ձևական բնույթ է կրում և էապես որևէ կերպ չի կարող անդրադառնալ իրավունքների և ազատությունների ապահովման կամ կիրառման վրա: Հարցված փորձագետների մի մասն էլ գտնում է, որ նման անհրաժեշտությունն առկա է և հիմնավորում են հետևյալ կերպ. *«...մեր ընդհանուր իրավունքների ցանկը վերցնում է Սահմանադրությունը և, ըստ էության, սահմանափակման հիմքերը տալիս է օրենսդիր իշխանության մարմինը՝ ԱԺ-ն: Իսկ առաջարկված տարբերակում դնում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի» մեթոդաբանությունը: Այսինքն՝ կոնկրետ հոդվածը սահմանում է կոնկրետ իրավունքը ու կոնկրետ այդ հոդվածում սպառիչ թվարկվում են սահմանափակման հիմքերը, որպեսզի օրենսդիր մարմինը կամայական միջամտության հնարավորություն չունենա»<sup>94</sup>:*

Սույն հարցի վերաբերյալ հարկավոր է համաձայնել փորձագետների այն հաստատվածի հետ, ովքեր գտնում են, որ Հայեցակարգով առաջարկվող տարբերակը լիովին ընդունելի է և անհրաժեշտ, քանի որ պրակտիկական ցույց է տալիս, որ իրավունքի գերակայության սկզբունքը հաճախ անտեսվում է և երկրի օրենսդիր մարմինը կամ անգամ գործադիր մարմինն իր ենթաօրենսդրական ակտերով իրավունքի այնպիսի սահմանափակումներ է նախատեսում, որոնք հանգեցնում են իրավունքի տեսանկյունից լուրջ հետևանքների: Ներկայիս Սահմանադրության տրամաբանությամբ՝ որոշ հոդվածներ պարունակում են այնպիսի իրավիճակների թվարկումը, երբ թույլատրելի է ամրագրված իրավունքի սահմանափակումը (օրինակ՝ հոդված 16՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում

<sup>94</sup> Սահմանադրագետի խոսքերից:

միայն հետևյալ դեպքերում՝...»), այնինչ այլոք՝ օրինակ կյանքի իրավունքն ամրագրող հոդվածը («Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի») չունի սահմանափակումների թվարկում:

Այն հարցին, թե մարդու հիմնարար իրավունքներից որո՞ւմ էք կիսալուծված կամ չլուծված խնդիրներ տեսնում և խնդրահարույց ոլորտներից յուրաքանչյուրի վերաբերյալ ինչպիսի՞ փոփոխություններ պետք է իրականացնել, հարցված փորձագետների կարծիքները թեև տարբեր են եղել, սակայն առկա է մեկ ընդհանրություն, այն է՝ խնդիրը ոչ թե Սահմանադրությամբ իրավունքների լավ կամ վատ ամրագրվածությունն է, այլ իրավակիրառ պրակտիկան. «...որևէ իրավունքի ձևակերպման խնդիր չեմ տեսնում, իսկ գործողության մեջ դնելու հետ մենք բոլորի հետ խնդիրներ ունենք»<sup>95</sup>: Բոլոր հարցվածներն էլ այն կարծիքին են, որ պրակտիկան բարելավման կարիք ունի, ինչին կնպաստի ամբողջական երաշխիքների համակարգի ներդրումը: Որպես մարդու իրավունքների չլուծված խնդիր, հարցվածները նշել են ազատագրվածների ընտրական իրավունքի սահմանափակումները, քրեակատարողական հիմնարկներում կյանքի իրավունքի խնդիրները, իրավունքների մասին իրազեկության պակասը, ինչպես նաև դատական համակարգի անկախության բացակայությունը, որի պարագայում անհնարին է դառնում իրավունքի խախտման դեպքերի պատշաճ քննությունը, իրավունքի վերականգնումը և պաշտպանությունն ընդհանրապես: Հարցվածներից մեկը նշել է մարդու իրավունքների խնդիրները քրեակատարողական հիմնարկներում՝ «...որտեղ ծանր հիվանդությունները, մահերը և այլն պատշաճ չեն հետաքննվում, որովհետև դա պետության վերահսկողության տակ է»<sup>96</sup>:

Կյանքի իրավունքի հետ կապված հարցվածների տեսակետները համընկնում են այն առումով, որ թեև մահապատիժը վերացվեց, սակայն դրանով չլուծվեց կյանքի իրավունքի ապահովման հարցը: Պետությունը մահվան յուրաքանչյուր դեպքով, որպես պոզիտիվ պարտավորություն, պետք է հիմնավոր և բազմակողմանի օբյեկտիվ քննություն կատարի և դա ամրագրվի որպես նրա Սահմանադրական պարտականություն:<sup>97</sup>

**Կյանքի իրավունքի հետ կապված մեր դիտարկումը հետևյալն է.** ՀՀ Սահմանադրության հոդված 15-ը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի»: Այնուամենայնիվ, այս իրավունքի ապահովման համար չափազանց կարևոր է պրակտիկայի վերանայումն ու պետության պոզիտիվ պարտականության, այն է՝ իր մարմիններում, կառույցներում և հաստատություններում (բոլոր տեսակի փակ և կիսափակ հաստատություններում, ինպիսիք են օրինակ քրեակատարողական հիմնարկ, բանակ, բուժ. հաստատություններ, հատուկ դպրոցներ և այլն, ինչպես նաև իրավապահ մարմինների գործողությունների արդյունքում) տեղի ունեցած յուրաքանչյուր մահվան դեպքի կապակցությամբ իրականացնել

<sup>95</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>96</sup> Իրավապաշտպանի ՀԿ-ի ներկայացուցչի խոսքերից:

<sup>97</sup> Իրավապաշտպանի ՀԿ-ի ներկայացուցչի խոսքերից:

համակողմանի և օբյեկտիվ քննություն: Յավոք սրտի, այսօր Հայաստանը լուրջ խնդիրներ ունի հենց այս ոլորտում, երբ ամեն օր ոստիկանության գործողությունների արդյունքում կամ ոչ պատշաճ բժշկական օգնության արդյունքում կամ վերադասի անփութության արդյունքում պատճառված մահվան ելքի առնչությամբ արժանահավատ քննություն չի իրականացվում: Արդյունքում, Հայաստանի դեմ մի շարք գործեր կյանքի իրավունքի վերաբերյալ<sup>98</sup> ուղարկվել են Մարդու իրավունքների Եվրոպական դատարան և մեծ է հավանականությունը, որ ՄԻԵԴ-ն այս հողվածով կամրագրի պետության կողմից թույլ տրված խախտում:

Սահմանադրական փոփոխություններով մարդու իրավունքների ոլորտի խնդիրները լուծելուն ավելի ժխտողական տրամադրվածները գտնում են, որ ոչինչ փոխել պետք չէ, *«բոլոր իրավունքներն էլ պատշաճ կերպով ներկայացված են մարդու իրավունքներ գլխի մեջ»<sup>99</sup>*: Պարզապես պետությունը պետք է երաշխավորի այդ իրավունքների ապահովումը և իրացումը, մինչդեռ հաճախ պետությունն է ապօրինաբար խախտում այդ իրավունքները:

Սահմանադրական փոփոխությունները չիսրախուսելու հիմնավորումներից մեկն էլ, ըստ հարցվածների, այն է, որ որոշ իրավունքներ, օրինակ՝ բնակարանի իրավունքը ամրագրված է Սահմանադրությամբ, սակայն պետությունը չի կարողանում կատարել այդ իրավունքի ապահովման իր պարտականությունը, ուստի հնարավոր է նախատեսվի այդ իրավունքի սահմանափակում՝ *«Սահմանադրությամբ նախատեսված է բնակարանի իրավունք, մինչդեռ պետությունն ի վիճակի չի էդ բնակարանը տալ: Բայց դա չի նշանակում, որ դու պիտի Սահմանադրությունը փոխես, որ սահմանափակես էդ իրավունքը, դա նշանակում է, որ դու պիտի զարգացնես տնտեսությունդ այնպես, որ էդ սահմանադրական իրավունքն ապահովես»<sup>100</sup>*:

Խոսելով խոշտանգումների արգելքի մասին՝ փորձագետներից մեկն այն կարծիքն է հայտնել, որ սահմանադրական փոփոխություններով խոշտանգումների արգելքը չի կարող ամրագրել նաև պրակտիկայում, անհրաժեշտ է պրակտիկական վերանայել: Մի քանիսն էլ, համադրելով միջազգային փաստաթղթերը և ներպետական օրենսդրությունը, պնդում են այն տեսակետը, որ օրենսդրական ձևակերպման առումով անգամ խնդիր ունենք, քանի որ ներպետական օրենսդրությամբ սահմանված խոշտանգման ձևակերպումը չի համապատասխանում ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման դրույթներին, քանի որ խոշտանգումը վերաբերում է պաշտոնատար անձանց կողմից կատարվող խոշտանգումներին կամ պետական մարմինների կողմից կամ նրանց հովանավորությամբ այլ անձանց կողմից կատարված խոշտանգումներին, մինչդեռ Հայաստանում մեր օրենսդրությամբ սահմանված է այնպես, որ դա պետական մարմիններին չի վերաբերում: Հարցվածները համակարծիք են այն առումով, որ խոշտանգումների նկատմամբ պետք է ձևավորվի զրո հանդուրժողականություն:

<sup>98</sup> 2008թվականի մարտի 1-ի գոհերի գործերով, Ենգիբարյանն ընդդեմ Հայաստանի, Ոսկանյանն ընդդեմ Հայաստանի, Այվազյանն ընդդեմ Հայաստանի և այլն:

<sup>99</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>100</sup> Սահմանադրագետի խոսքերից:

Այստեղ պետք է հաշվի առնել, որ խոշտանգումների արգելումը դասվում է բացարձակ իրավունքների շարքին, այսինքն այս իրավունքի սահմանափակման որևէ դեպք չի կարող սահմանվել: Հետևաբար և՛ անկախ հանգամանքներից, և՛ ստեղծված իրավիճակից՝ արգելվում է անձին ենթարկել վատ վերաբերմունքի կամ խոշտանգումների: Ցավոք սրտի, խոշտանգումները այսօր էլ շարունակում են մնալ իրավապահ համակարգի աշխատանքի հիմնական մեթոդներից մեկը, ինչի արդյունքում Հայաստանն արդեն իսկ ՄԻԵԴ-ում ունի պարտված 30 գործեր, որտեղ դատարանն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը թույլ է տվել «Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» 3-րդ հոդվածի խախտում: Սա բավականին խոսուն փաստ է այն մասին, որ Հայաստանում լայն տարածում գտած պրակտիկա է խոշտանգումների կիրառումը, չնայած այն հանգամանքին, որ վերջինիս ամրագրումը Սահմանադրության մեջ լիովին ընդունելի է:

**Մեր գնահատմամբ՝ խոշտանգման վերաբերյալ դրույթը Սահմանադրության մեջ բավականին լողված է և չի համապատասխանում «Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ (տանջանքների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի տեսակների դեմ)» ՄԱԿ-ի կոնվենցիային, որը վավերացվել է նաև Հայաստանի կողմից:** Համաձայն սույն Կոնվենցիայի նպատակների, «խոշտանգում» սահմանումը նշանակում է ցանկացած գործողություն, որի միջոցով պետական պաշտոնյա անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որևէ անձի մտածված կերպով հասցնում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այնինչ ՀՀ Քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածում ամրագրված է, որ Խոշտանգումը՝ ցանկացած այնպիսի գործողություն է, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք: Ինչպես հստակ երևում է ՀՀ օրենսդրությունը չի մատնանշում թե՛ «խոշտանգում» կատարողի ով լինելը, և թե՛ ինչ նպատակի համար է դա իրականացվում: Իսկ գործնականում, բոլոր այն դեպքերում, երբ իրավապաշտպաններն ու քաղաքացիները փաստում են իրենց հաջողությունն ըստ իրենց խոշտանգումների հետ կապված գործերի վերաբերյալ, դրանք այն իրավիճակներն են, երբ խոշտանգում թույլ տված պաշտոնյայի գործողությունները որակվել են որպես պաշտոնեական լիազորությունների սահմանազանցում:

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի պաշտպանվածության հարցին անդրադառնալով՝ հարցվածները հիմնականում 2 եշտել են, որ կարևորը իրավական



ձևակերպումը չէ, այլ գործող պրակտիկան: Ինչպես նաև իրավունքների տեքստից չի կախված դրանց ապահովելու խնդիրը, ավելին՝ «...ազատության անձոնմխելիության իրավունքի պարագայում կարծում եմ այսօրվա սահմանադրության ձևակերպումները վատը չեն, սակայն դատական իշխանության ոչ անկախ լինելու պարագայում՝ ներքին անկախություն, ֆինանսական անկախության, օրենսդրական անկախության պարագայում, դրանք չեն գործում կամ շատ վատ են գործում»<sup>101</sup>:

**Հատկանշական է, որ թեև այս իրավունքի սահմանադրական ձևակերպումը կարելի է որակել որպես բավականին հաջող, այնուամենայնիվ, այս իրավունքի ապահովումը Հայաստանում լրջագույն անհանգստության պատճառ է հանդիսանում: Այս իրավունքի ապահովման համար իրականում սահմանադրական մակարդակում որևէ փոփոխության անհրաժեշտություն չկա, բոլոր խնդիրները պրակտիկայում են:**

Անձնական և քնտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին հարցվածները հիմնականում չեն անդրադարձել կամ նշել են, որ այս խնդիրը կապված է մյուս համակարգերի հետ: **Մեր կարծիքով՝ այս իրավունքը սահմանադրորեն բավարար է ամրագրված:**

Փորձագետներից երկուսը, խոսելով արդար դատաբնության իրավունքի մասին, կարծիք են հայտնել, որ մի դեպքում դա սահմանադրության հետ կապված խնդիր չէ, նորից պրակտիկայի խնդիր է, իսկ մյուս դեպքում նշվել է, որ դատական համակարգը պետք է անկախ լինի ամբողջությամբ, ընդհանուր առմամբ լինի մրցակցային, որպեսզի ապահովի անմեղության կանխավարկածի և մրցակցության սկզբունքի իրացումը ամբողջ ծավալով: **Այս իրավունքի լիարժեք ապահովման համար հարկավոր է վերանայել ողջ դատական համակարգը՝ ապահովելով վերջինիս անկախությունը:**

Արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքի ապահովման հարցի հետ կապված հարցվածներից մեկը նշել է, որ այնուամենայնիվ որոշ խնդիրներ կան՝ չմանրամասնելով դրանք: Եղել է նաև տեսակետ այն մասին, որ գործադիր իշխանության մարմիններն իրականում ամբողջությամբ նախատեսված լինեն սահմանադրությամբ, քանի որ նրանք դե ֆակտո գործնականում նորմատիվ իրավական ակտեր են ընդունում, որոնք միջամտում են անձանց իրավունքներին: Փորձագետի կարծիքով, որպեսզի գործի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցը, շատ կարևոր է քաղաքական իշխանության հաշվետվողականությունը, անմիջական ժողովրդավարության իրացումը, անձանց՝ պետական կառավարմանն ու տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքի ապահովումը, որոշումների կայացմանը միջամտելն ու դրանց մասնակցություն ցուցաբերելը: Որպես խնդրի լուծում հարցվածներից մեկն առաջարկել է զարգացնել հանրային պաշտպանի ինստիտուտը, պատրաստել որակյալ փաստաբաններ, իսկ փաստացի

<sup>101</sup> Սահմանադրագետի խոսքերից:

ազատագրկման պահից անձին օրենսդրորեն տալ փաստաբան ունենալու հնարավորություն: Ներկայիս իրականության պայմաններում հաճախ են իրավիճակներ, երբ անձին «հրավիրում են» ոստիկանություն բացատրություն վերցնելու նպատակով, անձը ներկայանում է փաստաբանի ուղեկցությամբ, իսկ քննիչը հայտարարում է, որ քանի որ օրենքն ուղղակիորեն չի նախատեսում տվյալ կատեգորիայի համար փաստաբանի մասնակցություն, ապա դա թողնված է իմ հայեցողությանը, իսկ ես թույլ չեմ տալիս, որպեսզի փաստաբանը մասնակցի բացատրություն վերցնելուն: **Նմանատիպ իրավիճակների բացառման նպատակով, հարկավոր է սահմանել իմպերատիվ դրույթ, որով ցանկացած ոք կարող է իրականացնել արդյունավետ իրավական պաշտպանություն:**

Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի հարցի վերաբերյալ փորձագետների տեսակետները հիմնականում համընկնում են այն առումով, որ թեև սահմանադրությամբ հռչակված է, որ եկեղեցին անջատ է պետությունից, բայց իրականում այդպես չէ, «...եկեղեցին անջատ չի իրականում և շատ է խառնվում աշխարհիկ կյանքին, համը հանելու աստիճան»<sup>102</sup>: Հնչել է նաև տեսակետ այն մասին, որ պետությունը չպետք է խառնվի կրոնական կազմակերպությունների գործերին և պետք է ոչ խտրական վերաբերմունք ցուցաբերի բոլոր կրոնական կազմակերպությունների նկատմամբ: Այդուհանդերձ փորձագետները չեն բացառել պետության կողմից որոշ սահմանափակումների հնարավորությունը՝ մարդու կյանքին և առողջության սպառնացող վտանգի դեպքում, օրինակ մարդկանց զոհաբերությունների կամ ինքնազոհաբերությունների քարոզման դեպքում: **Մեր կարծիքով՝ այստեղ իրավանորմի սահմանման հետ չեն կապված առաջացող խնդիրները, այլ նույնպես պրակտիկայի:**

Ազատ արտահայտվելու իրավունքի հարցին անդրադառնալով՝ սահմանադրագետներից մեկը, ով ընդհանրապես ժխտում է սահմանադրական փոփոխություններով բարեփոխումների հասնելու հնարավորությունը, գտնում է, որ սահմանադրությունը չի կարող որևէ ազդեցություն ունենալ: Մինչդեռ մեկ այլ փորձագետ գտնում է, որ սա անմիջականորեն գործող իրավունք է և պիտի ապահովվի: Հարցված իրավապաշտպան ՀԿ-ներից մեկի ղեկավարի կարծիքն էլ այն է, որ մեր երկրի համար սա այնքան էլ մեծ հիմնախնդիր չէ, չնայած քաղաքական լարվածությունների ժամանակ որոշ սահմանափակումներ լինում են, հատկապես հանրային հեռուստատեսության ոլորտում որոշ խնդիրներ ենթակա են վերանայման: **Մենք գտնում ենք, որ ներկայիս Սահմանադրությունը տալիս է ազատ արտահայտվելու իրավունքի բավականին հաջող ձևակերպում, սակայն չի նախատեսում սահմանափակումների շրջանակը:** Ինչպես նշվել է փորձագետների կողմից, այս իրավունքի անխափան իրականացման հետ կապված խնդիրները ՀՀ-ում հիմնականում առաջանում են քաղաքական լարվածությունների ժամանակաշրջանում և հիմնականում դրսևորվում են այլ

<sup>102</sup> Սահմանադրագետի խոսքերից:

իրավունքների սահմանափակմամբ, օրինակ՝ տեղաշարժի ազատության և հավաքների ազատության սահմանափակմամբ:

Օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի անհամապատասխանությանն են անդրադարձել փորձագետները, նշելով, որ հավաքների և միությունների ազատության իրավունքի հետ կապված օրենքը հիանալի է, որը սակայն նույնպես չի գործում: **Այսպիսով՝ այստեղ իրավանորմի սահմանման հետ չեն կապված առաջացող խնդիրները, այլ պրակտիկայի:**

Խոսելով խտրականության բացառման մասին՝ հարցվածների կարծիքները կիսվել են, նրանց մի մասը տվել է ժխտողական պատասխան՝ «... խտրականություն չկա», մյուս մասն՝ ընդհանրացրել է այլ իրավունքների խնդիրների հետ: Մասնավորապես նրանք մատնանշել են խտրականության տարբեր դրսևորումներ՝ կրոնական կազմակերպությունների նկատմամբ, հաշմանդամների նկատմամբ՝ հատկապես աշխատատեղի հավասար մատչելիության սկզբունքի խախտումը, խտրականության խնդիրը կա սոցիալապես անապահովների, սեռական փոքրամասնությունների նկատմամբ: Խտրականության բացառման նպատակով իշխանությունն իր օրինակով, իր պահվածքով պետք է բացառի խտրական վերաբերմունքը՝ այսինքն՝ ոչ միայն օրենսդրական, այլև գործնական քայլերով:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան նախատեսում է այն հանգամանքները, որոնցից անկախ արգելվում է խտրարանություն	ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է այն հանգամանքները, որոնցից անկախ արգելվում է խտրարանություն
<ol style="list-style-type: none"> <li>1. անկախ ռասայից,</li> <li>2. մաշկի գույնից,</li> <li>3. լեզվից,</li> <li>4. կրոնից,</li> <li>5. քաղաքական կամ այլ համոզմունքներից,</li> <li>6. ազգային կամ</li> <li>7. սոցիալական ծագումից,</li> <li>8. ազգային փոքրամասնության պատկանելիությունից,</li> <li>9. կարողությունից,</li> <li>10. գույքային վիճակից,</li> <li>11. ծնունդից</li> <li>12. այլ հանգամանքից:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. <i>կախված սեռից,</i></li> <li>2. ռասայից,</li> <li>3. մաշկի գույնից,</li> <li>4. <i>էթնիկական կամ</i></li> <li>5. սոցիալական ծագումից,</li> <li>6. <i>գենետիկական հատկանիշներից,</i></li> <li>7. լեզվից,</li> <li>8. կրոնից,</li> <li>9. <i>աշխարհայացքից,</i></li> <li>10. քաղաքական կամ այլ հայացքներից,</li> <li>11. ազգային փոքրամասնությանը պատկանելությունից,</li> <li>12. գույքային վիճակից,</li> <li>13. ծնունդից,</li> <li>14. <i>հաշմանդամությունից,</i></li> <li>15. <i>տարիքից կամ</i></li> <li>16. <i>անձնական կամ</i></li> <li>17. սոցիալական բնույթի այլ հանգամանքներից</li> </ol>

Ինչպես երևում է համեմատական ցանկից, ՀՀ Սահմանադրությունը մասնավորեցնում է նաև մի շարք հավելյալ հանգամանքներ, որոնք հաշվի են առնվում խտրականության բացառման

գործընթացում: Այսպիսով՝ ներպետական իրավական նորմն այս առումով շատ լավն է, սակայն դրա գործնականում ապահովումն է, որ հանգեցնում է խնդիրների:

Բոլոր հարցվածներն էլ խնդիրներ են տեսել գույքից անարգել օգտվելու իրավունքի ապահովման հարցում, որոնք, դարձյալ կառուցակարգերով են պայմանավորված: Հարցվածներից մեկն էլ կտրուկ տեսակետ է հայտնել, որ «սեփականության իրավունքը ժողովրդավարական ու իրավական պետության մեջ դա ամենախիստ իրավունքն է, որը Հայաստանում չի գործում, և ավելին ասեմ, Հայաստանում իշխանության համար կոիվը և կեղծիքներով իշխանություն պահելը հենց սրա խնդիրն աս, այսինքն որևէ մեկը ապահովագրված չի իրա բիզնեսը, սեփականությունը կորցնելուց, սա շատ լուրջ հարց աս»<sup>103</sup>:

ՀՀ Սահմանադրության հոդված 8-րդը սահմանում է, որ. «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը»: Սակայն բոլորին հայտնի է, որ օրենսդիրը, սահմանելով այս իրավունքի սահմանափակումներ, տարածք է ստեղծել այս իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումների համար (մասնավորապես հանրային գերակա շահ և այլն): Այսօր Հայաստանում ստեղծվել է օրենսդրության մակարդակում մի այնպիսի իրավիճակ, երբ անգամ արտադատական կարգով մարդու սեփականության՝ դրամական միջոցների վրա կարող է տարածվել կալանք, խախտելով սեփականության իրավունքի պաշտպանության սկզբունքը:

Հարցվածները գրեթե միասնական են եղել այն կարծիքում, որ ընտրելու և ընտրվելու իրավունքի հետ կապված կան շատ խնդիրներ՝ և՛ օրենսդրական, և՛ գործնական: Առկա են որոշակի օրենսդրական արգելքներ, օրինակ՝ պասիվ ընտրական իրավունքի իրացման համար բարձր ընտրագրավը, ստորագրված ցուցակների հրապարակման արգելքը, որոնք անհարկի են և վերանայման կարիք ունեն: Փորձագետներից մեկն էլ նշել է, որ այդ իրավունքը համատարած չի գործում, համատարած կեղծ ընտրություններ են: Անգամ դժվարացել է լուծում առաջարկել: **Մեր կարծիքով՝ ընտրելու և ընտրվելու իրավունքի հետ կապված խնդիրները բազում են, սակայն դրանք բխում են օրենսդրությունից կամ դատական նախադեպային իրավունքից: Սահմանադրության մակարդակում խնդրահարույց է միայն դատապարտյալների ընտրելու իրավունքի սահմանափակումը:** Բնականաբար, որևէ փաստարկված հիմնավորում գոյություն չունի այն թեմայի շուրջ, թե ինչու է հարկավոր սահմանափակել դատապարտյալների ընտրական իրավունքը՝ անձի քաղաքական իրավունքի իրացման համար նախատեսելով ոչ իրավաչափ սահմանափակումներ: Ընտրագրավի անհամաչափության, ստորագրված ընտրողների ցուցակի հրապարակման

<sup>103</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

խնդիրներն իհարկե մեծապես խոչընդոտներ և անվստահություն է առաջացնում, սակայն սրանք արդեն իսկ դրված են օրենքի մակարդակում:

Կրթության իրավունքի հետ կապված թեև փորձագետներն իրենց չեն համարել նեղ մասնագետներ, այդուհանդերձ նշել են ոլորտում առկա որոշ խնդիրներ՝ կապված կրթության հավասար պայմանների ապահովման և պետության անտեղի միջամտության վերացման հետ: Պետք է հավասար պայմաններ ապահովվի բուհերի համար՝ լինի պետական, թե մասնավոր: Հարցվածներից մեկը անհրաժեշտ է համարել նաև կրթության ինստիտուտի առանձնացումը իշխանություններից. «...կրթությունը պետք է ոչ թե դիպլոմ տվող լինի, այլ ուսում տվող և գիտություն տվող»<sup>104</sup>:

Խոսելով աշխատանքի իրավունքի մասին՝ բոլոր փորձագետները նշել են, որ այստեղ կան խնդիրներ, այդ թվում՝ օրենսդրական ձևակերպումների առումով: Հարցվածներից մեկն անդրադարձել է նաև արհմիությունների խնդրին, դրանց ձևական բնույթին, որոնք իրականում չեն գրծում և չեն կատարում իրենց հիմնական ֆունկցիան: Հնչել է նաև տեսակետ, որ սահմանադրությամբ պետք է ամրագրվի, որ «*յուրաքանչյուր քաղաքացի ունի նվազագույն կենսական պայմանների ապահովման իրավունք և այդ նվազագույն կենսական պայմանները պետք է համապատասխանեցնել արժանապատիվ կենսական մակարդակին: Դա սահմանադրորեն պետք է ամրագրել, որովհետև դա բխում է սոցիալական պետության գաղափարից*»<sup>105</sup>: **Այստեղ նույնպես իրավանորմի սահմանման հետ չեն կապված առաջացող խնդիրները, այլ պրակտիկայի:**

Հարցվածները խնդիրներ են տեսել նաև ազատ տեղաշարժի իրավունքի հետ կապված, որոնք համակարգային բնույթ են կրում մարդու այլ իրավունքների համակարգում: Գործող Սահմանադրության հոդված 25-ը սահմանում է, որ. «Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք», սակայն սահմանադրորեն չեն նախատեսվում սույն իրավունքի սահմանափակման ձևերն ու դեպքերը, այնինչ հատկապես նախընտրական և հետընտրական ժամանակահատվածներում լայնորեն կիրառվող պրակտիկայի համաձայն սահմանափակվում է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը:

Մարդու իրավունքների վերաբերյալ հետաքրքրական է նաև քանակական հետազոտության արդյունքների դիտարկումը<sup>106</sup>:

<sup>104</sup> Փաստաբանի խոսքերից:

<sup>105</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>106</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, սկսած Գծապատկեր 10-ից:

## Կառավարման համակարգ

Փորձագիտական հարցազրույցների ընթացքում քննարկվել են կառավարման համակարգին առնչվող սահմանադրական դրույթները և այդ ուղղությամբ հայեցակարգային փոփոխությունների առաջարկները: Այն հարցին, թե **ժողովուրդն ավելի լավ է ներկայացված նախագահական, կիսանախագահական, թե խորհրդարանական կառավարման համակարգում**, հարցվողները նշել են, որ չկա որևէ հստակ սահմանում կամ տարբերակում, թե որ համակարգն է ավելի ժողովրդավարական կամ լավ աշխատող: Միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ երկրի զարգացումը կամ զարգացվածությունը պայմանավորված չեն երկրի կառավարման ձևով: *«Կան երկրներ, որտեղ մեծ տնտեսական աճ է նկատվում նախագահական կառավարման դեպքում, և հակառակը: Կան զարգացած երկրներ, որտեղ նախագահական համակարգ է կամ միապետություն: Ուստի դժվար է ասել, կառավարման որ մի համակարգն է արդյունավետ կամ ժողովրդավարական...»*<sup>107</sup>: Արտահայտվել է տեսակետ, որ նախագահական համակարգում ժողովուրդը ընտրում է նախագահ, խորհրդարան, այդպիսով նաև վարչապետ, քաղաքապետ, ավագանի և այլն, ուստի և նախագահականում ժողովուրդն ավելի լավ է ներկայացված: Այս կարծիքը արտահայտվել է նաև քանակական հարցման արդյունքներով, համաձայն որի հարցին, թե հանրապետության նախագահին ով պետք է ընտրի, հարցվողների 94% պատասխանել է քաղաքացիները, իսկ 5.6%-ը նշել է Ազգային ժողովը<sup>108</sup>: Հակառակ տեսակետը պնդողներն էլ նշում են, որ նախագահական կառավարման համակարգում երկրի նախագահը քաղաքական պատասխանատվություն չունի ժողովրդի առջև, մինչդեռ պառլամենտականում երկրի վարչապետն ուղղակի պատասխանատվություն է կրում պառլամենտի առաջ, այսինքն՝ ժողովրդի ներկայացուցիչների առաջ: Այդպիսով առաջ է քաշվում այն գաղափարը, որ ժողովրդի ներկայացուցչականության ինստիտուտի զարգացման համար անհրաժեշտ է զարգացնել ընտրությունների կազմակերպման մեխանիզմները, ինչպես նաև կապը հասարակության և իշխանության միջև: *«Ժողովուրդը ավելի լավ է ներկայացված ա այն իշխանությունների օրոք, որին ինքն ընտրել ա, պատրաստ է երկրին տեր կանգնել, իսկ իր կողմից ընտրված իշխանությունն էլ հավատարիմ իրեն ծառայում ա: Մնացած համակարգերը որևէ կապ չունեն»*<sup>109</sup>:

Ըստ հարցվողների՝ այս կամ այն մոդելի ընտրությունը շատ դեպքերում կախված է նաև քաղաքական ուժերի սուբյեկտիվ մոտեցումից, թե կոնկրետ տվյալ ժամանակահատվածում ինչ խնդիրներ պետք է լուծվեն և այլն:

<sup>107</sup> ԱԾ պատգամավորի խոսքերից:

<sup>108</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 24:

<sup>109</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

Կառավարման այս կամ այն համակարգին անցնելու համար նշանակություն ունի ոչ այնքան մեխանիզմը, որը ներդրվում է, որքան այն գործոնները, որոնք ներագրում են երկրի վրա պատմական տվյալ ժամանակահատվածում: Այդ գործոնների թվում հարցվողները նշել են արտաքին գործոնները, մշակութային գործոնը, հասարակության իրավագիտակցությունը, քաղաքական ավանդույթները և այլն: Ուստի և այս կամ այն համակարգին անցնելու համար, ըստ փորձագետների, անհրաժեշտ է ելնել ոչ թե այն հանգամանքից, թե որն է ամենաիդեալական մոդելը, այլ հասկանալ, թե գոյություն ունեցող խնդիրների լուծումը որ կառավարման ձևի պարագայում է հնարավոր:

Այսպիսով, փորձագետների կարծիքը կառավարման նախագահական և խորհրդարանական համակարգի վեաբերյալ միասնական չէ և նրանց կարծիքները բաժանվել են: Մոտավորապես նույնանման պատասխաններ են ստացվել նաև քանական հարցումների արդյունքում: Հարցվողների 35%-ը կառավարման ցանկալի համակարգը նշել է նախագահական համակարգը, իսկ 31%-ը՝ խորհրդարանականը: Հատկանշական է, որ միայն 9%-է նշել կիսանախագահականը որպես ցանկալի կառավարման համակարգ<sup>110</sup>: **Քանակական նման տվյալները սակայն միանշանակ մատնանշում են այն հանգամանքը, որ հանրությունը մեծամասամբ կարծում է, որ կիսանախագահական համակարգը Հայաստանում չի կայացել և որ իրականում տիրում է նախագահական կառավարման համակարգ:**

Հարցվողներն անրադարձել են այն հարցին, թե **ինչպիսի՞ն պետք է լինի նախագահի, խորհրդարանի և կառավարության հարաբերակցումը**: Ըստ փորձագետների՝ իշխանության տարբեր թևերի հարաբերակցության հարցը մեծապես պայմանավորված է ընտրական համակարգի թերություններով: Ըստ նրանց՝ քանի որ երկրում ընտրությունները չեն կազմակերպվում պատշաճ կերպով, իսկ ընտրությունների արդյունքները վստահություն չեն ներշնչում, իշխանությունն իրականում չի ձևավորվում ընտրությամբ: Արդյունքում ստացվում է իրավիճակ, երբ պետք է նախագահ, խորհրդարան և կառավարություն լինեն առանձին մարմիններ, փոխադարձաբար պատասխանատվություն կրեն, երբեմն հակադրվեն և այլն, սակայն իրականում բոլորը մեկ համակարգ են կազմում: *«Այսօր նախագահը, կառավարությունը և պառլամենտական մեծամասնությունը մեկ քաղաքական ուժի ձեռքում են: Արդյունքում ամբողջ սահմանադրական ինստիտուտները նսեմանում են, բոլոր որոշումները, որոնք նախատեսված են օրինակ պառլամենտում ընդունելու, կառավարությունում ընդունելու կամ նախագահի կողմից ընդունելու, կայացվում են մեկ տեղում՝ կուսակցության գրասենյակում: Հետևաբար սա բերում է նրան, որ ձևախեղվում են սահմանադրական ինստիտուտները՝ պառլամենտ, կառավարությունը, նախագահական ինստիտուտը»*<sup>111</sup>: Ի տարբերություն փորձագետների վերը նշված կարծիքի, վերևում մենք արդեն նշել ենք, որ ստեղծված իրավիճակի պատճառը մենք տեսնում ենք ոչ թե թերի ընտրական օրենսդրության կամ դատական պրակտիկայի, այլ ընտրական գործընթացների

<sup>110</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 20:

<sup>111</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

**վրա քաղաքական մարմինների անիրավաչափ միջամտության մեջ, որի արդյունքում ընտրությունների արդյունքները ճիշտ չարտահայտեցին ընտրագանգվածների իրական պատկերը և նրանց դիրքորոշումը:**

Ըստ հանձնաժողովի անդամների՝ ստեղծված իրավիճակում անցումը պառլամենտական համակարգին կարող է դրականորեն անդրադառնալ քաղաքական համակարգի զարգացման վրա՝ ապահովելով իշխանության կողմերի հակակշիռ: Նրանց խոսքերով՝ անհրաժեշտ է սահմանադրությամբ ստեղծել հնարավորություն, որ իշխանական կառույցների միջև թույլ տրվեն ողջամիտ հակասություններ, միաժամանակ ձգտելով, որ այդ հակասությունները չքայքայեն երկիրը, այլ բերեն համագործակցության և համախմբման:

Հարցված փորձագետները գտնում են, որ հայեցակարգում ներկայացված են պառլամենտական համակարգին անցման հիմնավորումները, սակայն բացակայում են իրականացման մանրամասնությունները: Հարցազրույցի ընթացքում հարցվողները փորձել են ներկայացնել, թե ինչպես են պատկերացնում տվյալ գործընթացի իրականացումը: Ամփոփ կերպով դա ենթադրում է հետևյալը. ելնելով այն անհրաժեշտությունից, որ *իշխանության 3 թևերի միջև անհրաժեշտ է ստեղծել փոխադարձ զսպումների և հակակշիռների համակարգ*, պետք է բոլոր մարմինները հնարավորություն ունենան մասնակցելու մյուսների կազմավորմանը: Տվյալ դեպքում, նախ, ժողովրդական ընտրությունների արդյունքում ձևավորվում է պառլամենտը՝ որպես բարձրագույն օրենսդիր մարմին: Այն ձևավորում է կառավարություն, միաժամանակ պառլամենտը և կառավարությունը ձևավորում են դատական իշխանությունը՝ ի դեմս Արդարադատության խորհրդի: Այստեղ մեխանիզմների հստակության և անաչառության համար պետք է դատական իշխանության ձևավորմանը մասնակցեն ինչպես պառլամենտի փոքրամասնությունը և մեծամասնությունը, այնպես էլ գործադիր իշխանությունը: Իշխանության երեք թևերը ձևավորում են չորրորդ օղակը՝ նախագահի ինստիտուտը, որը ոչ թե ինչ-որ մեկի ղեկավարն է, այլ հաշտարար գործառնությունի և ապահովում է սահմանադրական կոնֆլիկտի հաղթահարում այդ երեքի միջև: Համաձայն առաջարկվող մոդելի՝ նախագահի ինստիտուտը պետք է լինի վերկուսակցական՝ բացառելու համար հնարավոր կոնֆլիկտները: Նախագահի ինստիտուտի ձևավորմանը պետք է մասնակցեն 3 օղակները հետևյալ կարգով. երեքի համատեղ նիստը 2/3ով կամ 3/5-ով ընտրում է որոշակի չափանիշներին բավարարող նախագահի: Նախագահի առաջադրման իրավունք ունեն ինչպես այս 3 օղակներից յուրաքանչյուրը, այնպես էլ հասարակությունը: Օրինակ՝ 100 000 ստորագրություններով կարող են առաջարկել նախագահի թեկնածու: Ահա այսպես են պատկերացնում հարցվողները նախագահի, խորհրդարանի և կառավարության հարաբերակցության հարցը՝ միմյանցից անկախ, միմյանց առջև պատասխանատու, միմյանց երբեմն հակադրվող և այդ հակասությունների օբյեկտիվ լուծումներ որոնող և այլն:

Վերը ներկայացված հարցի առավել մանրամասն պարզաբանում տրվել է հարցազրույցների ընթացքում քննարկված հաջորդ հարցի պարզաբանմամբ. **«Արդյո՞ք արդարացված և նպատակահարմար էք համարում տվյալ ժամանակահատվածում անցում կատարել**



**կիսանախագահական կառավարման համակարգից պառլամենտական համակարգին»:** Ըստ քանակական հարցման տվյալների, հարցման ենթարկվածների միայն 31% է կողմ արտահայտվել խորհրդարանական կառավարման համակարգին, իսկ 35%-ը նախընտրել է նախագահական համակարգը (9%-ը՝ կիսանախագահական)<sup>112</sup>: Մինչդեռ փորձագետների մեծամասնությունը գտնում է, որ Հայաստանն աստիճանաբար մոտենում է այն փուլին, երբ կիսանախագահական համակարգն այլևս զարգացմանը խոչընդոտ է հանդիսանում և պառլամենտական համակարգին անցումը դառնում է անհրաժեշտություն: «*Այս տեսակետից ՀՀ-ն ամբողջական նախագահական համակարգից աստիճանական անցում է կատարել կիսանախագահականին և 2005թ-ի Սահմանադրությամբ, ըստ էության, ամբողջացվեց կիսանախագահական համակարգի սահմանադրական նորմերը... սակայն կիսանախագահական համակարգի այսօրվա ձևի, ցանկացած սցենարի դեպքում պետությունը կհայտնվի քաղաքական կամ կառավարման ճգնաժամային վիճակներում*»<sup>113</sup>: Մենք համաձայն ենք այս տեսակետի հետ, սակայն գտնում ենք, որ Հայաստանի քաղաքական կառավարման համակարգն արդեն վաղուց է, ինչ գտնվում է ճգնաժամի մեջ և ճգնաժամն այն աստիճանի խորն է, որ հնարավոր չէ վերականգնել կիսանախագահական կառավարման համակարգի մեխանիզմները և հենց այդ պատճառով գուցե և նպատակահարմար է անցնել խորհրդարանական կառավարման համակարգի:

Հարցվողների կողմից ներկայացվել են այն **թերությունները**, որոնք ունի այսօր կիսանախագահական կառավարման համակարգը: Այդ թերություններից մեկը իշխանության գերկենտրոնացումն է: Այս իմաստով պետք է նկատի ունենալ, որ երբ հայտարարվում է, թե 2005 թվականից հետո Հայաստանում տիրում էր «կիսանախագահական» կառավարման համակարգ, ավելի հաճախ դա ասվում է ձևական իմաստով, քանի որ իրականում Հայաստանը մնացել է նախագահական երկիր՝ հաշվի առնելով իշխանության ճյուղերի ու լծակների գերկենտրոնացումը նախագահի ինստիտուտում: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ պառլամենտը գործնականում որևէ հակակշիռ չի հանդիսանում նախագահին, համակարգը վերածվում է ուլտրանախագահականի: Սա հաստատվում է նաև քանակական հարցումների տվյալներով, ըստ որի հարցվողների 73% կարծում են, որ Ազգային ժողովը կախվածության մեջ է ՀՀ նախագահից լիակատար կերպով, իսկ 17%-ը՝ որոշ չափով: Իսկ ինչ վերաբերում է վարչապետին, ապա լիակատար կախվածության մասին նշել են հարցվողների 79%-ը<sup>114</sup>: Վիճակագրական այս տվյալները բնորոշ են գերնախագահական համակարգի մասին և ոչինչ չի վկայում, որ Ազգային ժողովը արդյունավետ կերպով հակակշռում է նախագահին, որի իմաստով հնարավոր կլիներ պնդել, որ կառավարման համակարգը կիսանախագահական է: Սրա մասին են վկայում նաև քանակական հարցման տվյալները, համաձայն որի հարցման ենթարկվածների 59% լիովին այն կարծիքին է, որ Նախագահի, Ազգային ժողովի և կառավարության իշխանությունները միատեղված են, իսկ

<sup>112</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 20:

<sup>113</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

<sup>114</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 27:

27%-ը մասամբ է համաձայն այս կարծիքի հետ<sup>115</sup>: **Հետևաբար, անհերքելի է այն մտտեցումը, որ ներկայումս Հայաստանում նախագահը և պառլամենտական մեծամասնությունը մեկ քաղաքական ուժ են ներկայացնում, որի արդյունքում իշխանությունների բաժանման սկզբունքը, փաստորեն, չի գործում:**

Հաջորդ թերությունը, որը բխում է գերկենտրոնացումից, **գերանձնավորված** համակարգի առկայությունն է, ինչի շնորհիվ հասարակության մոտ էլ տպավորություն է ստեղծվել, որ ամեն ինչ կախված է միայն մի մարդուց: Տվյալ իրավիճակում կառավարման ճգնաժամի վտանգ կա նույնիսկ այն կանխատեսման պարագայում, որ իշխանությունը ոչ թե մի ուժի, այլ տարբեր ուժերի ձեռքում լինի: Եթե երկրի նախագահն ու պառլամենտական մեծամասնությունը տարբեր կուսակցություններից են, կառավարություն ձևավորելու հարցում չեն բացառվում կոնֆլիկտներն ու տարաձայնությունները: Անգործունակ կառավարության ձևավորման վտանգ կա նույնիսկ այն դեպքում, երբ պառլամենտում չլինի մեծամասնություն, այլ լինեն մի քանի ուժեր կամ պառլամենտական մեծամասնությունը ձևավորված լինի հարաբերական մեծամասնությունների հիման վրա: **Մյուս կարևոր հանգամանքը** պայամանավորված է նրանով, որ ունենալով երկու առաջնային մանդատով ստեղծված ինստիտուտ (կիսանախագահականի դեպքում), նախագահի և պառլամենտի միջև **միշտ առաջանում է կոնֆլիկտ**, քանի որ ամենաթարմ մանդատ ունեցողը միշտ փորձելու է իր տեսակետն առաջ մղել՝ անտեսելով մյուսին: Սա ներկայումս Հայաստանի համար լուրջ խնդիր չէ, քանի որ այդ կառույցները մեկ ուժ են ներկայացնում, սակայն հետագայում, երբ նախագահն ու պառլամենտական մեծամասնությունն տարբեր ուժեր ներկայացնեն, կոնֆլիկտը լինելու է անխուսափելի: Այդուհանդերձ, որոշ փորձագետներ էլ գտնում են, ինչպես արդեն նշվել է, որ նման կոնֆլիկտը ցանկալի է, քանի որ կանխորոշում է արդյունավետ կառավարման համակարգ, քանի որ այդ դեպքում աշխատում են զսպումների և հակակշիռների մեխանիզմները:

Կիսանախագահական համակարգի հաջորդ կարևոր թերությունը կայանում է տվյալ համակարգին բնորոշ **գործադիր իշխանության դուալիզմի** մեջ՝ գործադիր իշխանությունը բաժանված է նախագահի ու կառավարության միջև: Պառլամենտական այնպիսի մեծամասնության առկայության պարագայում, որը քաղաքական առումով հակադիր է հանրապետության նախագահին, կառավարությունը հենվում է պառլամենտական մեծամասնության վրա: Տվյալ դեպքում երկրի համար առավել խոցելի են դառնում արտաքին քաղաքականության, պաշտպանության, ազգային անվտանգության ոլորտները:

**Մենք գտնում ենք, որ երկու առաջնային մանդատ ունեցող մարմինների միջև հնարավոր կոնֆլիկտը չպետք է ինքնին հիմք ընդունվի կիսանախագահական համակարգից հրաժարվելու համար:** Ամեն ինչ կախված է հիմնական փոխհավասարակշռող ուժից՝ խորհրդարանի ներկայացուցչական կազմից: Եթե խորհրդարանում քաղաքական ուժերը

<sup>115</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 21:

ողջամտորեն փոխհավասարակշռված են և, քաղաքական մշակույթից ելնելով, քաղաքական ուժերը հրաժարվում են «հաղթողին ամեն ինչ» կարգախոսից, խորհրդարանը կարող է հակակշռել նախագահին և արդյունավետ կերպով համագործակցել կառավարության հետ և այս ձևաչափը կարող է կառավարման արդյունավետ համակարգ հանդիսանալ: Ի դեպ, նման իրավիճակ էր տիրում մինչև 2002 թվականը, երբ խորհրդարանական ուժերը համագործակցում էին հիմնականում կառավարության հետ և խորհրդարանի, կառավարության և նախագահի ինստիտուտները հակակշռում էին և միաժամանակ վերահսկում էին մեկը մյուսին: Ստեղծվել էր փոխհավասարակշռված իրավիճակը և իշխանությունների բաժանման (այլ ոչ թե տարանջատման) սկզբունքը գործում էր: Ամեն ինչ փոխվեց 2002 թվականի խորհրդարանական ընտրություններով, երբ Ազգային ժողովում ընտրախախտումների արդյունքում խախտվեց քաղաքական հավասարակշռությունը, և վերջինս գործնականում դադարեց հակակշիռ հանդիսանալ նախագահի ինստիտուտին: **Արդյունքում նվազեց խորհրդարանի դերը, հասարակության վստահությունը քաղաքական ինստիտուտների նկատմամբ, կիսանախագահական համակարգը սկսեց վերաճել նախագահականի, իսկ այնուհետև՝ գերնախագահականի: Իշխանությունների բաժանման սկզբունքը դադարեց գործել, քանի որ ողջ քաղաքական իշխանությունը դարձավ սինգուլյար:**

Հաշվի առնելով կիսանախագահական համակարգի վերը ներկայացված թերությունները՝ փորձագետները գտնում են, որ իրավիճակի հաղթահարման լավագույն լուծումը կարող է լինել անցումը պառլամենտական համակարգին: Հարցվողների կողմից ներկայացվել են պառլամենտական համակարգին անցնելու դրական կողմերը. դրանք են՝

- չի կարող լինել առճակատում նախագահի ու պառլամենտի միջև, որովհետև նախագահը քաղաքական գործընթացների մեջ ներգրավված չէ,
- քանի որ նախագահը ուղղակիորեն չի ընտրվում ժողովրդի կողմից, չկա նաև պոպուլիստական նախագահների ընտրման վտանգը,
- իշխանության գերանձնավորման վտանգը խիստ կնվազի: Կնվազի, ոչ թե կբացառվի, քանի որ պառլամենտական համակարգում հնարավոր է, որ նա մեծ իշխանություն ունենա, բայց դա խիստ վտանգավոր չէ, քանի որ նա որոշակի կախվածության մեջ է նաև իր պառլամենտական մեծամասնությունից,
- Կառավարության քաղաքական պատասխանատվությունը խորհրդարանի առջև կնպաստի կոլեգիալ դեկլարմանը, այսինքն՝ երկրի քաղաքականություն որոշող մարդկանց շրջանակը զգալիորեն կմեծանա,
- Կմեծանա խորհրդարանի քաղաքական դերը, ինչպես որ օրենսդիր, այնպես էլ վերահսկողական,
- քանի որ պառլամենտական համակարգը կոլեգիալ կառավարում է ենթադրում, երկիրն ավելի ճկուն կարող է դիմագրավել արտաքին քաղաքական մարտահրավերներին, քանի որ քաղաքական որոշումների ընդունման ամբողջ գործընթացը կլինի ավելի կոլեգիալ և ավելի նվազ չափով անձնավորված: Դա

հնարավոր չի լինի ապահովել կիսանախագահական համակարգում, քանի որ նախագահից է կախված լինելու արտաքին քաղաքական որոշումների ընդունումը, և բնականաբար դրսից ներգործությունը նախագահի վրա ավելի մեծ է լինելու, քան թե այնպիսի պառլամենտական համակարգում, որտեղ միայն վարչապետի կարծիքը բոլորիվին էլ բավարար չէ՝ առանց պառլամենտական մեծամասնության: Հետևաբար, արտաքին քաղաքական մարտահրավերի լուծման վերաբերյալ ցանկացած գործընթաց կտեղափոխվի պառլամենտական բաց ֆորում, այլ ոչ թե նախագահական փակ նստավայր: Դա հնարավորություն կտա ապահովել թափանցիկություն և հանրային վերահսկողություն ազգի համար բախտորոշ խնդիրների լուծման գործընթացի վրա:

- հանրապետության նախագահը կունենա սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթ, նա պետք է իրավունք ունենա և՛ մինչև օրենքի ընդունումը, և՛ օրենքի ընդունումից հետո դիմելու սահմանադրական դատարան բացառապես սահմանադրականության նկատառումներով, այլ ոչ թե քաղաքական նպատակահարմարության նկատառումներով: Այսօր նախագահը ունի սահմանադրական դատարան դիմելու իրավունք, բայց որպես կանոն նա դրանից չի օգտվում, որովհետև դրա կարիք չկա, քանի որ ունի բացարձակ մեծամասնություն և ինքն է գործող դերակատարը քաղաքական դաշտում,
- հանրապետության նախագահի լիազորությունների ժամկետը կտարանջատվի ազգային ժողովի լիազորությունների ժամկետից: Քանի որ նախագահին հնարավորություն է տրվում միայն մեկ անգամ ընտրվել ավելի երկար ժամկետով, քան պառլամենտը, ինչը կապահովի անաչառություն և անկողմնակալություն: Նույնիսկ եթե իրեն ընտրող պառլամենտական մեծամասնության հետ նախագահն ընդհանուր բանակցությունների մեջ լինի, ապա դա հնարավոր չի լինի հաջորդ պառլամենտի ժամանակ:

Չնայած պառլամենտական համակարգին անցնելու դրական մեկնաբանություններին՝ հարցվողները նաև արտահայտել են որոշ մտավախություններ և հնարավոր վտանգներ: Դրանց մեջ, նախ և առաջ, կարևորել են **կառավարությունների անկայունության կամ փոփոխվող կառավարությունների խնդիրը**: Պառլամենտական համակարգում գործադիր իշխանության ղեկավարի համար ֆիքսված ժամկետ գոյություն չունի, այսինքն՝ կառավարության ղեկավարը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ վայելում է պառլամենտական մեծամասնության աջակցությունը: Իրավիճակը կդառնա ճգնաժամային այն դեպքում, եթե չձևավորվի պառլամենտական մեծամասնություն: Դրանով է թերևս պայմանավորված պառլամենտական մեծամասնությունների ստեղծման անհրաժեշտության հայեցակարգային առաջարկը: Բացի այդ՝ պառլամենտական կառավարման համակարգին անցնելը վտանգավոր է այն դեպքում, երբ կա փաստացի **պատերազմի վտանգ**: Պառլամենտական կառավարման դեպքում, երբ զինված ուժերի նկատմամբ վերահսկողությունը կենտրոնացված չէ, ավելի մեծ է վտանգը, որ նրանք կարող են

կոնսուլիդացվել իրենց կորպորատիվ շահը հետապնդելու համար: Իսկ նախագահական հանրապետություններում դա կենտրոնացված է և գտնվում է նախագահի վերահսկողության ներքո:

Հարցվողների մեջ եղել են նաև մարդիկ, ովքեր դեմ են արտահայտվել ներկա փուլում պառլամենտական համակարգին անցնելու գաղափարին: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ պառլամենտական հանրապետություններում պառլամենտների իրավասությունների խտությունը հանգեցնում է իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ դոմինանտ դերին, ինչը, ըստ որոշ փորձագետների, ավելի վտանգավոր է, քան նախագահական հանրապետություններում նախագահի դերի գերծանրաբեռնվածությունը: Պատճառը կայանում է նրանում, որ պառլամենտներում գոյություն չունի **անհատական պատասխանատվության սկզբունք**: Պառլամենտում գործունեությունը ծավալվում է խմբի կողմից, ուստի և քաղաքական և ոչ էլ իրավական պատասխանատվությունը անհատական չեն: Մինչդեռ նախագահի պայմաններում և՛ քաղաքական, և՛ իրավական պատասխանատվությունը անհատականացված են և պայմանավորված են նախագահի անձով: Պառլամենտական համակարգին ներկա փուլում անցնելու հակափաստարկների մեջ կարևորվում է նաև այն, որ դա կիրառելի չէ **ժողովրդավարության կայուն ավանդույթներ չունեցող** հասարակություններում: Խոսքը մասնավորապես վերաբերում է ընտրական համակարգերի անկատարությանը, ընտրությունների նկատմամբ հասարակության ցածր վստահությանը, հասարակության ցածր իրավագիտակցությանը և այլն:

Այն հարցին, թե **հայեցակարգով առաջարկվող ՀՀ նախագահի և Կաբինետի ձևավորումը ԱԺ կողմից արդյո՞ք ապահովում է իշխանությունների տարանջատում և հակակշիռ**, հարցվողները նշել են, որ տարանջատման և հակակշռի ստեղծման համար, նախ և առաջ, անհրաժեշտ է, որպեսզի այդ կառույցներից յուրաքանչյուրը մասնակցի մյուսների ընտրությանը, ձևավորմանը: Պառլամենտական համակարգում նախագահը վերկուսակցական է և ընդհանրապես քաղաքական գործընթացների հետ, դասական իմաստով, որևէ առնչություն չունի: Կառավարության ղեկավարը (և նախագահը, և վարչապետը) **պատասխանատու** է պառլամենտական մեծամասնության առջև: Վերջինս միշտ կարող է անվստահություն հայտնել կառավարության ղեկավարին, համաձայն չլինել նրա քաղաքականության հետ, ինչպես նաև կարող է փոխարինել գործող վարչապետով: Արդյունքում երկուսն էլ շահագրգռված են լինում լավ աշխատել: Այստեղ շատ կարևոր է նաև պառլամենտական փոքրամասնության դերի բարձրացումը, մասնավորապես վերահսկողություն իրականացնելու գործում: Հակակշիռ անհրաժեշտ է ապահովել իշխանություն-ընդդիմություն հարաբերություններում, օրինակ՝ անկախ հանձնաժողովներում ապահովելով ընդդիմության և իշխանության հավասարակշռված մասնակցություն: Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի ձևակերպմամբ. *«Հավասարակշռված համակարգը չի նշանակում միայն հավասարակշռություն օրենսդրի և գործադիրի միջև, դա նաև նշանակում է*

հավասարակշռություն մեծամասնության և փոքրամասնության միջև, ...որ փոքրամասնության իրավունքները հարգվեն, և փոքրամասնությունը պետք է ունենա բավարար միջոցներ վերահսկելու, թե արդյոք քաղաքական մեծամասնությունը չի չարաշահում իր մեծամասնություն լինելու հանգամանքը»<sup>116</sup>: Չնայած այն հանգամանքին, որ հայեցակարգում առաջարկվել են զսպման մեխանիզմների ներդրման տարբերակներ, հարցվողները նշել են, որ նման մեխանիզմներ առկա են նաև ներկայիս Սահմանադրության մեջ: Խնդիրն այստեղ նույնպես հանգեցվում է դրանց կիրառելիությանը:

Հարցազրույցների ընթացքում փորձագետները պատասխանել են հետևյալ հարցին «Ըստ նախագծի՝ «...խորհրդարանում Հանրապետության Նախագահին հարող մեծամասնության բացակայության պայմաններում էապես մեծանում է քաղաքական ճգնաժամի ու առճակատման վտանգը», մինչույն ժամանակ նաև նախատեսվում է, որ «...Ազգային Ժողովում Հանրապետության Նախագահի բացարձակ մեծամասնության ու ներխորհրդարանական հակակշիռների բացակայության պայմաններում մեծանում է քաղաքական մենիշխանության վտանգը»: Արդյո՞ք նման ձևակերպումների առկայությունը չի ստիպում հանգել այնպիսի եզրակացության, որ բոլոր դեպքերում էլ կա քաղաքական ճգնաժամի վտանգ»: Ըստ հարցվողների՝ քաղաքական ճգնաժամեր միշտ էլ կարող են առաջանալ ու պետք չէ դրանցից խուսափել: Անհրաժեշտ է պարզապես մշակել հաղթահարման մեխանիզմներ: «Պետք է լինի պայքար, մտքերի բախում, որ լինի զարգացում: Պարզապես պետք է բոլոր կողմերն իմանան, թե որ իրավիճակներում ինչպիսի լուծման մեխանիզմ է գործում: Եթե կառավարության ծրագիրը պառլամենտի կողմից երկու անգամ չի ընդունվում, նոր ընտրություններ են հայտարարվում, մինչև որ կբալանսավորվի»<sup>117</sup>: Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամների հետ անցկացված հարցազրույցների ընթացքում պարզ դարձավ, որ նման ձևակերպումները վերաբերում են ոչ թե պառլամենտական համակարգին, այլ՝ կիսանախագահականին: Եվ հենց այդ հիմնավորումներով էլ հայեցակարգում առաջարկվում է անցում կատարել պառլամենտականին: «Ըստ էության՝ կիսանախագահական համակարգը երեք մոդուսով է գործում, **առաջին մոդուսը** նախագահ և պառլամենտական մեծամասնությունը միատեղված են, սա դառնում է գերկենտրոնացում, **երկրորդը՝** հակադիր են՝ նախագահը հակադիր է պառլամենտական մեծամասնությանը, էս դեպքում մենք ունենք առճակատում, որը մեր տիպի պետություններում շատ վտանգավոր է, և **երրորդ մոդուսը՝** երբ որ չկա ընդհանրապես պառլամենտական մեծամասնություն: Էս երեքից որն է մեկը չի տալիս ինստիտուցիոնալ երաշխիք, որ կիսանախագահական կառավարման ձևը կգործի արդյունավետ կերպով և կիրականացվի վերահսկողություն էտ գործունեության նկատմամբ...»<sup>118</sup>:

<sup>116</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>117</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

<sup>118</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

Հարցազրույցների ընթացքում պարզվել են նաև փորձագետների կարծիքները **հանրապետության Նախագահին ոչ կուսակցական թեկնածուներից ընտրելու հայեցակարգում առաջարկվող մոտեցման վերաբերյալ (խորհրդարանական համակարգի անցման դեպքում):** Հարցվողներն ընդհանուր առմամբ արտահայտել են երկու միմյանց հակադիր տեսակետներ: Մի խումբը գտնում է, որ խորհրդարանական համակարգին անցնելու պարագայում վերկուսակցական նախագահ ունենալը պարզապես անհրաժեշտություն է, մյուսներն էլ գտնում են, որ նախագահի կուսակցական պատկանելությունը չի կարող չափորոշիչ հանդիսանալ: Այն փորձագետները, ովքեր դեմ են, որ նախագահի պաշտոն զբաղեցնող անձը լինի անկուսակցական, իրենց տեսակետները հիմնավորում են հետևյալ կերպ.

- դա խախտում է Սահմանադրությամբ ամրագրված խտրականության բացառման սկզբունքը, քանի որ անձը սահմանափակման մեջ է դրվում իր քաղաքական հայացքների պատճառով:  
Այս պատճառաբանությունը, սակայն, հիմնավորված չէ, քանի որ տարբերակված մոտեցման ոչ բոլոր եղանակներն են, որ ինքնին հանդիսանում են խտրականություն: Կարևոր է հաշվի առնել, թե արդյոք տարբերակված մոտեցումը պայմանավորված է օբյեկտիվ հիմքերով կամ դրդապատճառներով: Եթե անկուսակցական թեկնածու ընտրելը պայմանավորված է քաղաքական չեզոքություն ապահովելու անհրաժեշտությամբ, դա կարող է համարվել օբյեկտիվ հիմք: Այդ դեպքումը տարբերակված մոտեցումը չի կարող համարվել խտրականություն:
- երկրի կառավարմանը ձգտող անձնավորությունը պետք է դավանի որոշակի գաղափարախոսության և ունենա տեսլական,
- իրատեսական չէ քաղաքական գործիչ ընտրել ոչ քաղաքական դաշտի ներկայացուցչներից. որպես քաղաքական գործչի ընտրության չափորոշիչ պետք է լինի քաղաքական գործոնը, հակառակ դեպքում դա կհանգեցնի տնտեսական գործոնով պայմանավորված ընտրության՝ օլիգարխ նախագահ ունենալուն,
- քաղաքական կուսակցության պատկանելիությունը չի կարող վկայել անձի՝ ոչ լավ նախագահ լինելու մասին,
- նախագահի պաշտոնում որևէ քաղաքական ուժի ներկայացուցչի ընտրվելու պարագայում տվյալ քաղաքական ուժը պատասխանատվություն է կրում նրա գործողությունների համար, ուստի և նախագահի գործունեությունից էլ կախված է այն, թե հաջորդ ընտրություններում տվյալ քաղաքական ուժին ժողովուրդը որքան ձայն կտա:

Որպես այս և հակադիր տեսակետի միջանկյալ տարբերակ՝ հարցվողների կողմից նշվել է այն հանգամանքը, որ անձը, ով հավակնում է նախագահի պաշտոնի, այլևս պետք է դադարեցնի քաղաքական կուսակցական գործունեություն ծավալել, վարել կուսակցական ժողովներ և այլն: *«Մինիմալ պարտադիր պայմանը այն է, որ հանրապետության նախագահի պաշտոնը*

*վարելու ժամանակ նա իսկապես կասեցնի ցանկացած տիպի կուսակցական գործունեություն»<sup>119</sup>*: Համաձայն հարցվողների այս խմբի կարծիքի՝ նախագահի պաշտոն ստանձնելու համար կարևոր է ոչ թե կուսակցական պատկանելությունը, այլ այդ անձի հայրենասեր և օրինապաշտ մարդ լինելը, վստահություն ներշնչելն ու խարիզմա ունենալը, բանակցելու հմտություններն ու երկիրը դրսում ճիշտ ներկայացնել կարողանալը: Ըստ նրանց՝ պառլամենտական համակարգում երկրի **նախագահը խորհրդանշանական դեր է կատարում և նրա կուսակցական կամ անկուսակցական լինելն արդեն դառնում է ոչ էական:**

Հարցվողների մյուս խումբը կողմնակից է անկուսակցական կամ վերկուսակցական նախագահ ունենալու գաղափարին: Ըստ նրանց՝ պառլամենտական համակարգում նախագահը պետք է լինի ոչ թե իշխանության ներկայացուցիչ, այլ՝ պետության: Նախագահը, քաղաքական գործընթացներից դուրս լինելով, պետք է ձգտի ապահովել իշխանության թևերի բնականոն գործունեությունը և լինի չեզոք ու անաչառ դատավորի/արբիտրի դերում: *«Դա է հենց պառլամենտական համակարգի առավելությունը, այսինքն մենք ունենում ենք շատ կարևոր ինստիտուտ՝ հանրապետության նախագահ, ով հետևում է, որպեսզի խաղի կանոնները առնվազն զոնե առերևույթ չխախտվեն, և ով իրավունք ունի դիմելու սահմանադրական դատարան՝ բացառապես սահմանադրականության նկատառումներով, այլ ոչ թե քաղաքական նպատակահարմարության նկատառումներով»<sup>120</sup>*:

Ներկայացված կարծիքները, սակայն, զուգորդվում են այս պայմանի իրականացման դժվարությունների վերաբերյալ մտավախությամբ: Ըստ հարցվողների՝ նախագահի վերկուսակցական լինելը ամեն դեպքում կրելու է զուտ ձևական բնույթ, այն դեպքում, երբ երկրում ընտրական ինստիտուտներն անկատար են: Հարցվողները, ըստ երևույթին, ակնարկում են սովորաբար մեխանիզմները, որոնց մասին նշվում է Հայեցակարգում: Դա հաստատվում է արտահայտված հետևյալ կարծիքում. *«Եթե, օրինակ, պայման դրվի, որ նախագահին պետք է առաջադրի պառլամենտական փոքրամասնությունը, ապա մեծամասնությունը մի հատ ձևական փոքրամասնություն կձևավորի ու էլի իրենց կողմից կառաջադրվի ու կընտրվի»<sup>121</sup>*, *«խնդիրները չեն լուծվի, քանի դեռ ԱԺ-ում ոչ թե գիտակից քաղաքական գործիչներ են, այլ բիզնեսմեններն ու շոուբիզնեսի աստղերը»<sup>122</sup>*: Այսպիսով՝ հարցվողների կողմից վերկուսակցական նախագահ ունենալու դրական հետևանքները նույնպես հանգեցվել են երկրի քաղաքական մշակույթին և ընտրությունների կազմակերպման գործընթացներին:

Հարցվողներն արտահայտել են նաև իրենց կարծիքները **հանրապետության Նախագահի և Ազգային Ժողովի ընտրությունները նույն օրը կազմակերպելու նախագծում արվող առաջարկի վերաբերյալ**: Նրանց մեծ մասը հիմնականում դեմ են արտահայտվել: Նախ, քանի

<sup>119</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>120</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

<sup>121</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>122</sup> Դասախոսի խոսքերից:



որ հայեցակարգում առաջարկվող պառլամենտական կառավարման համակարգին անցնելու դեպքում արդեն իսկ հայեցակարգային այս առաջարկը դառնում է անտեղի, քանի որ նախագահի ընտրություն կատարվում է ոչ թե ժողովրդի, այլ պառլամենտի կողմից: Բացի այդ, նախագահի և ԱԺ ընտրությունները նույն օրը կազմակերպելը լի է հնարավոր վտանգներով և բացասական կողմերով: Առաջին հիմնական դժվարությունը կայանում է նրանում, որ հնարավոր չէ ապահովել դրա **պարբերականությունը և շարունակականությունը**: Տարբեր խնդիրներ կարող են ծագել ինչպես ԱԺ-ի, այնպես էլ նախագահի (մահ, առողջական վիճակի վատթարացում և այլն) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման համար, ուստի հնարավոր չի լինի ապահովել շարունակականություն: Կամ պետք է խախտել նույն օրն ընտրություններ կազմակերպելու սկզբունքը, կամ պետք է մյուս կառույցը նույնպես դադարեցնի իր լիազորությունները, ինչը անիմաստ և չարդարացված լուծում է: Հաջորդ կարևոր խնդիրը կայանում է նրանում, որ երբ **նախագահի ու խորհրդարանի լիազորությունները ավարտվեն միաժամանակ, կարող է առաջանալ իշխանության վակուում**: Եթե տվյալ խնդրի լուծում հայեցակարգում փորձել են տեսնել այդ երկու կառույցների կառավարման տարբեր ժամկետները սահմանելով (ԱԺ-ի համար 4 տարի, իսկ նախագահի համար՝ 7), ապա դա նույնպես խնդրի լուծում չէ, քանի որ դա արդեն իսկ խախտում է ընտրությունների նույն օրն անցկացնելու պահանջը: Այսպիսով՝ **երկարաժամկետ առումով դա չի երաշխավորում կայուն զարգացում**: Բացի այդ, երկու մանդատի առումով թվում է, թե հասարակությունն ավելի մեծ ներկայացվածություն ունի, քանի որ իրականում ստորադասվում է քաղաքական իրավիճակին երկրի զարգացումն ու արձագանքը: Սա նշանակում է, որ մեկ օրում ընտրություն կատարելով, նույն իրավիճակը պետք է պահպանվի մինչև հաջորդ ընտրություն, այնինչ հասարակությունը հնարավորություն չի ունենա ոչ ճիշտ ընտրության ընթացքը փոփոխելու: Սա հակասում է ժողովրդավարական արժեքներին: **Նույն օրը ընտրելու դեպքում հասարակությունը զրկվում է անմիջական իշխանության մեխանիզմներից, մեխանիզմի նվազեցում է մարդու ձեռքում**: «*Ինչքան ժամանակի մեջ ցրված ընտրություններ, այնքան լավ: Որովհետև հանրության ձեռքում իշխանություն ունենալու միակ գործիքն է դա*»<sup>123</sup>: Առաջանում է ժողովրդավարական ինստիտուտների սահմանափակման ռիսկ: Հաջորդ կարևոր վտանգը, որը հարցվողները տեսնում են ընտրությունները նույն օրը կազմակերպելու մեջ, կայանում է նրանում, որ կարող է առաջանալ իշխանությունների վերարտադրման առավել նպաստավոր պայմանների ստեղծման ռիսկ, իշխանական ռեսուրսները կոնսոլիդացնելու և կռալիցիայի հնարավորությունների նվազեցման **ռիսկ**:

Վերը ներկայացված վտանգներից գատ՝ հարցվողներն արտահայտել են իրենց կարծիքը նաև ընտրությունները նույն օրն անցկացնելու օգտին բերված հայեցակարգային հիմնավորման վերաբերյալ: «...*ինձ համար ընդունելի չէ ընտրությունները սահմանափակել միայն այն պատճառով, որ դրանք անկայունություն են ստեղծում երկրում: Եթե դրանք անկայունություն*

<sup>123</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

են ստեղծվում ընտրությունների ընթացքում, ապա պետք է ընտրությունների որակը բարձրացնել, այլ ոչ թե սահմանափակել»<sup>124</sup>: Այլ դրական կարծիքների թվում հնչել են այնպիսի փաստարկներ, որոնք ամրագրված են հայեցակարգում, օրինակ՝ 1. քիչ ծախսատարություն, 2. մարդկանց իրենց գործերից մեկ անգամ կտրելու հնարավորություն, 3. քաղաքական դիրքորոշումների փոփոխության և հասարակական պահանջի բացառում, դրանով իսկ կայունության ապահովում («...բացառում ենք հնարավոր կոնֆլիկտները ընտրական ցիկլերի տարբերություններով պայմանավորված, որի պարագայում հնարավոր կոնֆլիկտները կարող են ավելի մեծանալ»<sup>125</sup>), արդյունքում 4. մրցունակ կառավարման համակարգի ձևավորման հնարավորություն, 5. քաղաքական տարբեր ուժերի համագործակցության հնարավորություն, 6. ԱԺ-ի դերի բարձրացում: Ի օգուտ ծախսերի նվազեցման արտահայտվել են նաև այն փորձագետները, ովքեր դեմ են նույն օրն անցկացնելու գաղափարին: Ըստ նրանց՝ դա հնարավորություն կտա կրճատելու ոչ միայն ընտրությունների կազմակերպման պետական ծախսերը, այլ նաև ընտրությունների ընթացքում բաժանվող ընտրակաշառքը:

Այն հարցին, թե արդյոք ընտրությունների նույն օրը կազմակերպելը կնպաստի ընտրական գործընթացի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեծացմանը, հարցվողների ճնշող մեծամասնությունը բացասական է արտահայտվել: «Ես քաղաքացիական վերահսկողության մեծացման և սրա միջև ուղղակի պատճառահետևանքային կապ չեմ տեսնում»<sup>126</sup>, «...երբ որ շատ ընտրություններ են լինում, ավելի շատ մոբիլիզացիա է տեղի ունենում, ավելի շատ ընտրությունների դեպքում ավելի շատ ա նույն ընդդիմությունը, նույն քաղաքացիական հասարակությունը վերահսկելու, քան մի անգամ ընտրությունների դեպքում...»<sup>127</sup>: Ըստ հարցվողների՝ քաղաքացիական վերահսկողությունը մեծացնելու համար պետք է ուղղակի լրացուցիչ մեխանիզմներ և երաշխիքներ ստեղծել, որպեսզի հասարակությունը վերահսկի ընտրությունները, որպեսզի դրանք չկեղծվեն, իսկ կեղծումների բացահայտման պարագայում էլ հնարավորություն ունենան խնդրի լուծման հասնել: «Եթե կան արմատավորված քաղաքական ավանդույթներ, էական չէ, թե որ օրն է ընտրությունը կայանում, էականն այն է, որ իշխանության անցնեն նրանք, ում ընտրում է ժողովուրդը: Ուստի և պետք է վստահություն ընտրական գործընթացների հանդեպ»<sup>128</sup>:

Հարցվողներից միայն մեկն է, ում կարծիքով ընտրությունների նույն օրն անցկացնելը կարող է բերել քաղաքացիական վերահսկողության մեծացմանը: Իր տեսակետը նա հիմնավորել է հետևյալ կերպ. «...եթե քաղաքական կուսակցությունը չունի նախագահի թեկնածու, այդ ընտրություններին չի մասնակցում: Իսկ եթե նույն օրը կազմակերպվի, այդ կուսակցությունը

<sup>124</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>125</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>126</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>127</sup> Փաստաբանների պալատի անդամի խոսքերից:

<sup>128</sup> Դասախոսի խոսքերից:

*նույնպես կմասնակցի՝ իր վստահված անձանցով և այլն: Այսինքն՝ վերահսկողության ռեալ լծակներ կունենան նաև նախագահական ընտրությունների նկատմամբ»<sup>129</sup>:*

Այն հարցին, թե քաղաքացիական վերահսկողության մեծացմանն առհասարակ սահմանադրական ինչպիսի երաշխիքներ կարող են նպաստել, հարցվողներից ոմանք նշել են, որ դա ոչ թե սահմանադրության (օրենքով կարգավորվող), այլ իրագործման խնդիր է: Եվ կրկին այստեղ կարևորվում է ընտրական համակարգի և ընտրությունների նկատմամբ վստահության, քաղաքական մշակույթի և հասարակության իրավագիտակցության հարցերը:

Հարցի առնչությամբ եղել են նաև կոնկրետ առաջարկներ, ինչպիսիք են՝

- հանրային պետիցիայի ինստիտուտի զարգացումը,
- քաղաքացիական նախաձեռնությունով հանրաքվեների անցկացումն ու
- խիստ կարևոր հարցերում հանրաքվեների պարտադիր լինելը,
- Սահմանադրությունում Հանրային խորհրդի ամրագրումը, որը կլինի քաղաքացիական հասարակությունում կուտակված նախաձեռնությունների ակկումուլացման ու փոխանցման օղակ,
- Արդարադատության խորհրդի անկախության ապահովումը,
- Դատական իշխանության անկախության ապահովումը
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովին սահմանադրական կարգավիճակ տալը (կազմավորման մեխանիզմների, ընտրության կարգի, հաշվետվողականության և անձնավորված պատասխանատվության վերաբերյալ դրույթների ամրագրմամբ)<sup>130</sup>:

Այն հարցին, թե **ինչպե՞ս պետք է հասկանալ նախագծի այն պնդումը, որ անհրաժեշտ է ամրապնդել Ազգային Ժողովի մարմինների դերն օրենսդրական գործունեության բնագավառում**, հարցվողները պատասխանել են, որ խոսքը մշտական և ժամանակավոր հանձնաժողովների մասին է: Հանձնաժողովները պետք է պատասխանատու լինեն մի շարք խնդիրներ իրականացնելու, լծակներ տրամադրելու, օրենսդրական նախաձեռնության խնդիրների հարցը որոշելը (եթե անգամ կառավարությունը օրենսդրական նախաձեռնություն է ներկայացնում ԱԺ, իսկ հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն, ապա դա դառնում է արդեն հանձնաժողովի սեփականությունը և նա է պատասխանատու հետագա ընթացքի համար՝ թե որակի, թե դրանում փոփոխություն կատարելու և իրականացումը վերահսկելու), վերահսկողություն իրականացնելու, բյուջեի հաստատման, որոշ հարցերի շուրջ փաստերի հայտնաբերման և այլն: Ըստ հարցվողների՝ վերահսկողական գործընթացներում մասնավորապես պետք է ներգրավված լինեն

<sup>129</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>130</sup> Այն պետք է նշանակվի ոչ թե նախագահի կողմից, այլ ընտրվի ԱԺ-ի կողմից, հաշվետու լինի ԱԺ-ին, լինի ֆինանսապես անկախ, իսկ խախտումների դեպքում կրի անձնավորված պատասխանատվություն:

պառլամենտական փոքրամասնությունները, ովքեր պետք է ունենան քննիչ հանձնաժողովների ստեղծման իրավունք:

Հաջորդ կարևոր հայեցակարգային առաջարկը, որ քննարկվել է փորձագիտական հարցազրույցների ընթացքում վերաբերում է **կուսակցությունների խոշորացմանը**: Հարցվողների կարծիքներն այս հարցում նույնպես բաժանվել են երկու հիմնական խմբերի՝ նրանք, ովքեր կողմ են, որպեսզի կուսակցությունների խոշորացման արդյունքում Հայաստանում գործող կուսակցությունների թիվը նվազի, և նրանք, ովքեր գտնում են, որ կուսակցությունների խոշորացման գաղափարը սահմանափակում է Սահմանադրությամբ ամրագրված միավորումներ կազմելու իրավունքը: Մինևնույն ժամանակ հարցվողների այս երկու խմբերն էլ ընդգծում են, որ կուսակցություններ ստեղծելը կամ դրանց խոշորացումը ոչ թե արհեստական գործընթաց պետք է լինի և կարգավորվի Սահմանադրությամբ, այլ պետք է իրականացվի բնական ճանապարհով: «Պիտի լինի քաղաքական դաշտում քաղաքական գաղափարների ազատ **մրցակցություն** և կենսունակ գաղափարախոսության տեր միավորումները, կուսակցությունները պիտի ունենան շատ քվե, և ում գաղափարախոսությունն էլ, որ թույլ է, կենսունակ չէ, հանցագործ է, այդ կուսակցությունները պիտի նվազեն»<sup>131</sup>: Այն հարցվողները, ովքեր գտել են, որ կուսակցությունների խոշորացումը Հայաստանի ներկա փուլում անհրաժեշտություն է, իրենց կարծիքները հիմնավորել են հետևյալ կերպ. 1. քաղաքական կուսակցությունները շատ ավելի **պատասխանատու** կլինեն, 2. քաղաքական դաշտը կմաքրվի և կլինեն միայն գաղափարակիր կուսակցություններ, 3. դա հնարավորություն կտա ընտրողներին **ճիշտ կողմնորոշվելու**, 4. ԱԺ-ում կուսակցական մեծամասնության պարագայում **իրագործելի** կլինեն նաև այդ կուսակցության առաջարկած ծրագրերը, 5. կապահովվի քաղաքական **կայունություն**: Հարցվողներից մեկը նույնիսկ քաղաքական կուսակցությունների բազմազանությունը համեմատել է փոշիացված ներուժի հետ՝ ընդգծելով, որ այն ոչ մի դեպքում չի կարող արդյունավետ լինել: Փորձագետներն այնուամենայնիվ խիստ կարևորել են քաղաքական կուսակցությունների և նրանց անդամների գաղափարական ընդհանրությունները: Ըստ նրանց՝ այսօր հայաստանյան կուսակցությունները չունեն **արժեքային հենք և զարգացման տեսլականները**, իսկ կուսակցականները շատ դեպքերում նույնիսկ թղթի վրա գրված դրույթներից տեղյակ չեն: Ուստի պետք է ունենալ այն գիտակցությունը, որ դա ոչ թե անձի խնդիր է, այլ թիմային առաջնորդության և արժեքային թիմերի ձևավորման: Հետևաբար, կուսակցությունների խոշորացման համար նախ պետք է լուծվեն այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կուսակցությունների գործելաոճի, մտածելակերպի, պետականության գաղափարների փոփոխությունը: Հարցվողները նշել են, որ գաղափարական և քաղաքական մշակույթի որոշակի փոփոխության պարագայում, երբ անցում կատարվի բացարձակ համամասնական համակարգի, կուսակցություններն ինքնին կխոշորանան:

<sup>131</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

Ամփոփելով վերը ներկայացվածը՝ նշենք, որ կառավարման խորհրդարանական, թե նախագահական համակարգի մասին փորձագետների և բնակչության արտահայտած դիրքորոշումները միանշանակ չեն: Եթե փորձագետների մեծ մասը նշել է, որ խորհրդարանական եղանակը արդյունավետ է և դրան անցնելը ստեղծված իրավիճակում նպատակահարմար և նույնիսկ անխուսափելի, հարցման ենթարկված բնակիչների մի ստվար հատված նախընտրությունը տալիս է նախագահական համակարգին: Սրանով հանդերձ տիրում է ընդհանուր կարծիք առ այն, որ նախկինում կիսանախագահական հռչակված կառավարման համակարգը վերածվել է նախագահական համակարգի, որտեղ նախագահը ունի գրեթե անսահմանափակ իշխանություն, քանի որ խորհրդարանը դադարել է հանդես գալ որպես հակակշիռ: Արդյունքում, ողջ իշխանությունը կենտրոնացել է մեկ քաղաքական ուժի ձեռքում և այս առումով հարցման ենթարկվածների կարծիքը համընկնում է հայեցակարգում արտահայտված այն մտահոգության հետ, որ ստեղծվել է քաղաքական մենիշխանություն, որտեղ Նախագահի, խորհրդարանի և կառավարության ինստիտուտները միատեղվել են: Փորձագետները դրա պատճառը տեսնում են ընտրական համակարգի թերությունների մեջ: Մենք ստեղծված իրավիճակի պատճառը տեսնում ենք քաղաքական մարմինների կողմից ընտրությունների բնականոն գործընթացին անիրավաչափորեն միջամտելու մեջ, որի արդյունքում ընտրական ինստիտուտները կորցրեցին իրենց լեգիտիմությունը և որի արդյունքում էլ խաթարվեց քաղաքական հավասարակշռությունը խորհրդարանում՝ իր ողջ ներկա հետևանքներով:

Ստեղծված իրավիճակում հայեցակարգով առաջարկվում է փոխել կառավարման համակարգը և անցում կատարել խորհրդարանական կառավարման համակարգին: Փորձագետների մեծ մասը ընդունում է այս գաղափարը: Նրանք գտնում են, որ խորհրդարանական կառավարման համակարգը կբացառի քաղաքական մենիշխանությունը, քանի որ կառավարման բևեռը նախագահական ինստիտուտից կտեղափոխվի խորհրդարան, որը մի կողմից կընտրի քաղաքական գործընթացների հետ առնչություն չունեցող երկրի նախագահի, իսկ մյուս կողմից կվերահսկի վարչապետին՝ իր կառավարության հետ միասին: Ամեն ինչ, փաստորեն, կախված կլինի նրանից, թե որքան հավասարակշռված ներկայացուցչական կազմ կունենա խորհրդարանը, քանի որ միայն այդ դեպքում խորհրդարանը կկարողա վերահսկել քաղաքական մեծամասնությանը, որի առջև պատասխանատու է կառավարության ղեկավարը իր կաբինետով: Այս իմաստով շատ կարևոր է կուսակցությունների խոշորացման հայեցակարգային գաղափարը, որին կարող է նպաստել խորհրդարանի դերի բարձրացումը, ինչպես նաև օրենսդրական որոշ մեխանիզմների վերանայումը (կուսակցությունների խոշորացումը իր հերթին նույնպես կնպաստի խորհրդարանի դերի բարձրացմանը):

Վերը նշվածով հանդերձ, փորձագետները գրեթե միահամուռ են այն հարցում, որ, որ ցանկացած կիսանախագահական համակարգ ի վերջո տանում է նախագահական մենիշխանության, քանի որ անխուսափելի է մշտական կոնֆլիկտը երկու առաջնային

մանդատով օժտված բնեռների՝ նախագահի և խորհրդարանի միջև, որոնցից յուրաքանչյուրը ձգտում է դառնալ դոմինանտ մյուսի նկատմամբ և կոնֆլիկտը բացակայում է միայն այն ժամանակ, երբ նախագահը խորհրդարանում ունի մեծամասնություն, որն էլ, սակայն, աստիճանաբար վերաճում է նախագահական և նույնիսկ գերնախագահական համակարգի: Հասկապես այս առումով խոցելի են ժողովրդավարական ավանդույթներ չունեցող երկրները, որոնց թվում է Հայաստանը:

## Ընտրական իրավունքը և ընտրական համակարգ

Հարցազրույցների ընթացքում ստացվել է փորձագետների կարծիքները ընտրական համակարգի վերաբերյալ հայեցակարգում առաջարկված փոփոխությունների վերաբերյալ: Մի շարք հարցերի կողքին քննարկվել է նաև ներկա փուլում համամասնական ընտրական համակարգին անցնելու նպատակահարմարության, մեծամասնական համակարգի համատեղ գործարկման թերությունների, համամասնականի գործարկման դեպքում կանխվող վտանգների հարցերը:

Գրեթե բոլոր հարցվողները դրական են համարել տվյալ ժամանակահատվածում բացարձակ համամասնական ընտրակարգին անցնելու հայեցակարգային առաջարկը: 100%-ոց համամասնական ընտրակարգին անցնելու նպատակահարմարության հիմնավորումները հարցվողների կողմից ձևակերպվել են հետևյալ կերպ.

1. Դա քայլ է հանդիսանում քաղաքականությունն ապաքաղաքականացումից գերծ պահելու կամ դա նվազեցնելու ուղղությամբ: Հարցվողների գնահատմամբ՝ քաղաքականությամբ պետք է զբաղվեն միայն այն մարդիկ, ովքեր քաղաքականության մեջ են:
2. Դա հնարավորություն է ստեղծում նվազեցնել մեծահարուստների (օլիգարխիայի) մուտքը ԱԺ: Վերջիններիս նպատակը քաղաքական իշխանության միջոցով պաշտպանել սեփական շահերը: «...Մեծամասնական ընտրական համակարգը, ինչպես որ ցույց է տալիս պրակտիկան, գերազանցապես սպասարկվում է խոշոր կապիտալի շահին, այլ կերպ ասած՝ մեծամասնական ընտրական համակարգով նսեմանում է ժողովրդի կարծիքի իրական բացահայտման հնարավորությունը: Տեղ է թողնվում, որպեսզի օլիգարխիան ավելի շատ ամրապնդվի հենց մեծամասնական ընտրակարգով»<sup>132</sup>:

<sup>132</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

3. Մեծացնում է ընտրված պատգամավորների պատասխանատվության աստիճանը ընտրողների առջև: Ըստ հարցվողների՝ կուսակցություններն են, որ ունեն պատմություն: Այդ պատմության համար պատասխանատու է յուրաքանչյուր կուսակցական և, հետևաբար, վերջիններս պարտավորվում են հետևել քաղաքական ավանդույթներին, արժեքներին, նպատակներին: Մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորը կարող է և չհետևել իր նախագծին և պատասխանատվություն չկրել ընտրողների առջև: *«Դա ԱՄՆ-ում է, որ կապն ընտրողի ու մեծամասնական թեկնածուի միջև պահպանվում է, Հայաստանում դա այդպես չէ»*<sup>133</sup>, *«Ներկայումս մեծամասնականով ընտրված միայն մեկ պատգամավոր ունենք, որ ընտրվել է իր տարածաշրջանից ու պատասխանատու է ընտրողների առջև: Մնացած բոլոր մեծամասնականով ընտրվածները հարուստ մարդիկ են, ովքեր ընտրություններից առաջ գումար են ծախսում, բայց ընտրվելուց հետո ոչ մի անգամ չեն էլ հանդիպում ընտրողներին»*<sup>134</sup>:
4. Համամասնական ընտրակարգով ընտրությունների կազմակերպման դեպքում նվազում է կոռուպցիայի, ընտրակաշառք բաժանելու և նմանատիպ այլ խնդիրների հավանականությունը: *«...Ընտրական օկրուգներում ընտրակաշառքները շատ ավելի լայն տարածում ունեն, քան թե համամասնական քվոտայի պարագայում, և էստեղ արդեն քաղաքական կուսակցական ուղղվածությունը կամ գաղափարական ուղղվածությունը ընդհանրապես ետին պլան եմ մղվում»*<sup>135</sup>:
5. Համամասնական ընտրություններն ավելի ժողովրդավարական են և միտված են արտացոլելու ժողովրդի իրական կամքը, քան մեծամասնական ընտրությունները: *«Պատլամենտում, այսօրվա օրինակով, համամասնական կամ կուսակցական ընտրություններում Հանրապետականը մեծամասնություն չէ, բայց մեծամասնականի միջոցով ստացել է պատլամենտի տեղերի մեծ մասը: Ստացվեց, որ հասարակությունը իբրև քաղաքական ուժ կուսակցությանը մեծամասնություն չի համարում, բայց պատլամենտում հայտնվում է ուժ, որը բացարձակ մեծամասնություն է»*<sup>136</sup>:
6. Համամասնական ընտրակարգով ԱԺ անցած պատգամավորների գործունեությունն ավելի արդյունավետ է, քան մեծամասնականով անցածներինը: *«Մեծամասնականով անցած պատգամավորների մեծամասնությունը ԱԺ նիստերի ընթացքում գրեթե ելույթներ չի ունենում, որովհետև չունի քաղաքական հայացքներ, ինքը ունի կշիռ՝ ֆինանսական, սոցալական և այլն, որի շնորհիվ դարձել է պատգամավոր: Նման պատգամավորները, էս չեմ ասում բոլոր մեծամասնականների մասին, բայց դա ընդհանուր տենդեցիան է, իրենց օգտակար գործողության գործակիցը ԱԺ-ում ձգտում*

<sup>133</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

<sup>134</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

<sup>135</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>136</sup> Սահմանադրազեղի խոսքերից:

*է գրոյի, իսկ Ազգային ժողովը փողատերերի կամ ազդեցություն ունեցող մարդկանց հավաքատեղի չէ, այն ունի որոշակի գործառույթներ...»<sup>137</sup>:*

Միայն հարցվողներից մեկն է, որ հարցազրույցների ընթացքում դեմ է արտահայտվել համամասնական ընտրակարգին անցնելու գաղափարին<sup>138</sup>: Նրա կարծիքով պետք չէ ընտրողներին զրկել իրենց իսկ շրջանից պատգամավոր ընտրելու հնարավորությունից, քանի որ հակառակ դեպքում հարաբերությունները դառնում են անդեմ, նվազում է հաշվետվողականությունն ու կորում է կապը ընտրողների հետ:

**Մեր կարծիքով՝ տվյալ հարցի շուրջ կարևոր է դիտարկել ոչ միայն բարեփոխված ընտրակազմին և 100%-անոց համամասնական համարագին անցնելու կողմնակիցների և հեղինակների կարծիքները, այլ նաև ընդդիմախոսների հակափաստարկները: Այսպես.**

1. ԱԺ-ն իրականացնում է օրենդիր ֆունկցիա, որը պրոֆեսիոնալ աշխատանք է և կուսակցական ու քաղաքական շահերը չեն, որ պետք է դասվեն առավել, հետևաբար, մարդու իրավունքը հարգող օրենսդրություն ընդունելու համար առաջնային է ընդունողների բարձր մասնագիտական որակավորումը, այլ ոչ թե արդյոք նրանք զբաղվում են քաղաքականությամբ, թե ոչ:

2. Ինչ վերաբերում է օլիգարխների մուտքին ԱԺ, ապա հարկ է նշել, որ մեծամասնականի վերացման դեպքում և ոչ մի խոչընդոտ չկա, որպեսզի այդ անձինք, ներգրավվելով կուսակցական ցուցակներում, ստանձնեն ԱԺ մանդատներ: Եվ այսօր էլ ԱԺ կուսակցական ցուցակներում քիչ չեն մեծահարուստները:

3. Պատգամավորների հաշվետվողականության հետ կապված չափազանց կարևոր է նկատել մի քանի հանգամանքներ.

- Հաշվետվողական մակարդակը բարձր է լինում, երբ կա կապ. այսօր համամասնական ցուցակներով ընտրված պատգամավորներից և ոչ մեկ իրեն պատասխանատու չի զգում որևէ մի կոնկրետ շրջանի կամ տարածքի մարդկանց համար,
- Կուսակցությունների մարզային գրասենյակները գործում են ընտրությունից-ընտրություն, մնացած ժամանակ դրանք փակ են,
- Քաղաքացին չգիտի, թե ԱԺ նամակ գրելիս անվանապես ում հասցեագրի և ումից պատասխան ակնկալի:

4. Բացառելու համար այն միտքը, որ համամասնական ընտրական համակարգի ներդրումը կնվազեցնի ընտրակաշառքների ռիսկը, հարկ է անդրադառնալ տեղական երկարաժամկետ դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպությունների և

<sup>137</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>138</sup> Տվյալ պատգամավորին այլ հարցվող հարցազրույցի ընթացքում մատնանշել է որպես ԱԺ մեծամասնական ընտրակարգով անցած եզակի անձանցից մեկը, ով պահպանում է կապը ընտրողների հետ և հետևում է իր առաջարկած ծրագրի նպատակներին:



իրավապաշտպանների հաշվետվություններին, որոնք գումարային արժեքի տեսքով ներկայացնում էին, թե որ կուսակցությունը որքան ընտրակաշառք է բաժանել:

5. Եվ ամենակարևոր հանգամանքներից մեկն էլ կայանում է հետևյալում, որ ինչպես դա նաև նշված է Հայեցակարգում, կուսակցությունները դեռևս կայացած չեն, և ներկա փուլում հարկավոր է մեծապես ուշադրություն դարձնել կուսակցությունների կայացմանն ու հզորացմանը:

Հարցվողները քննարկել են **բարեփոխված ընտրական համակարգին անցնելու** հայեցակարգային առաջարկը: Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամները մեկնաբանել են, թե ինչ է այդտեղ նկատի առնվում. 1. ընտրողի ու ընտրվողի միջև անմիջական կապ ստեղծել համամասնական ընտրակարգի պայմաններում՝ մեծամասնական քվոտայով (կուսակցությունների փակ ցուցակների վերացում), 2. հնարավորինս փոքրացնել ղեկավարության վճռորոշ ազդեցությունը կուսակցական ցուցակից այս կամ այն թեկնածուի մանդատ զբաղեցնելու հնարավորությունների վրա, 3. Ազգային Ժողովի ընտրության ընտրակարգի հիմնական գծերն ամրագրել սահմանադրությունում, որպեսզի ամեն անգամ ընտրությունների ձևը (մեծամասնական է, թե համամասնական) չփոփոխվի, 4. ապահովել խորհրդարանում քաղաքական մեծամասնություն հետևյալ մեխանիզմով՝ պառլամենտական ընտրությունները անցկացնել երկու փուլով, նույնիսկ 100%-անոց համամասնական ընտրակարգի դեպքում, որի առաջին փուլին մասնակցում են բոլոր կուսակցությունները կամ դաշինքները, այդ դաշինքները, եթե ձևավորվում են, այլևս փոփոխման ենթակա չեն, եթե որևէ կուսակցություն կամ դաշինք չի ստանում 50% պլյուս 1 տեղեր ազգային ժողովում, ապա անցկացվում է երկրորդ փուլ, որին մասնակցում են առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած կուսակցությունները կամ դաշինքները: Ըստ հանձնաժողովի անդամների համոզմամբ՝ առանց այս պայմանների ապահովման՝ ցանկացած ընտրական համակարգ ունենալու է դեֆեկտներ, և դա անդրադառնալու է ժողովրդավարության որակի վրա:

Փորձագետների մի մասն էլ առաջարկել է բարեփոխված ընտրական համակարգի իրենց պատկերացումները. 1. ընտրական հանձնաժողովի սահմանադրական կարգավիճակ, ֆինանսական անկախություն, անձնավորված պատասխանատվություն, 2. էլեկտրոնային մեխանիզմով քվեարկելու հնարավորություն, 3. ստորագրված ցուցակների հրապարակում, 4. բոլոր ընտրատեղամասերում ընտրությունների անմիջական հեռարձակման ապահովում, 5. մշակութային փոփոխությունների իրականացում՝ իրավագիտակցության փոփոխություն, պահանջատեր քաղաքացիների սերնդի ձևավորում: Ըստ հարցվողների՝ վերը ներկայացված պահանջների բավարարումը կնպաստի ընտրությունների որակի, դրանով իսկ՝ վստահելիության մակարդակի բարձրացմանը:

Ըստ մեզ՝ Սահմանադրական հանձնաժողովի առաջարկած տարբերակը հիշեցնում է մի իրավիճակ, երբ համամասնական ընտրական համակարգի անվան տակ իրականում գործում է մեծամասնական ընտրական համակարգը միայն մի տարբերությամբ, որ ցանկացած

թեկնածու անպայման պետք է որևէ կուսակցության անդամ լինի: **Իրականում այս փուլում բավականին դժվար է վերջնական դատողություններ անել առաջարկվող հարցի շուրջ, այնուամենայնիվ, ներկայումս առաջարկվող լուծումներն ավելի շատ հարցեր են առաջացնում, քան տալիս պատասխաններ:** Պնդելով նախկինում արված առաջարկը՝ այստեղ ևս վերահաստատվում է այն առաջարկը, որ ներդրվի համամասնական ընտրական համակարգը նոր առաջարկված մեխանիզմով, միաժամանակ գործունեության մեջ թողնելով մեծամասնական ընտրման համակարգը, ինչը հնարավորություն կընձեռնի ի հայտ բերել առաջարկվող համակարգի թերությունները՝ սակայն մեծապես չկազմաքանդելով արդեն կայացած ընտրական համակարգը, որի խնդիրները բխում են ոչ թե ձևից, այլ քաղաքական կամքից:

Ըստ էության՝ բարձրացված մտավախության լուծումը տրվում է հաջորդ քննարկվող հարցի պատասխաններում: Այն հարցին, թե **ըստ նախագծի՝ անհրաժեշտ է քաղաքացուն հնարավորություն տալ ուղղակիորեն ընտրել իր նախընտրած թեկնածուին, որով կապահովվի ուղղակի անմիջական կապը ընտրողի և ընտրվողի միջև, մինչդեռ միաժամանակ առաջարկվում է անցնել բացարձակ համամասնական համակարգի. ինչպե՞ս է հնարավոր համամասնական ընտրական համակարգում ապահովել անմիջական կապը ընտրողի և ընտրվողի միջև:** Գրեթե բոլոր հարցվողները դրական են համարել այդ նախաձեռնությունը՝ համարելով, որ ռեյտինգային քվեարկության իրականացմամբ կբարձրացվի կուսակցությունների ներսում ժողովրդավարության աստիճանը: Հարցվողները ներկայացրել են համամասնական ընտրական համակարգում ընտրողի և ընտրվողի միջև անմիջական կապի ապահովման մի քանի տարբերակներ:

- Ռեյտինգային քվեարկության պարագայում կուսակցական ցանկերը ներկայացվում են քվեարկության և ընտրողը կատարում է անմիջապես կուսակցական անձի ընտրություն, ինչը նշանակում է, որ ձայնը տրվում է ինչպես կուսակցությանն, այնպես էլ անձին: Արդյունքում ոչ թե ընտրված կուսակցության ղեկավարների կողմից է որոշվում, թե ԱԺ-ում իրենց կուսակցությանը բաժին ընկած տեղերն ովքեր պետք է զբաղեցնեն, այլ այս կամ այն պատգամավոր անցնում է ԱԺ իր ռեյտինգի շնորհիվ:
- Հանրապետության ամբողջ տարածքը բաժանվում է այնքան ընտրատարածքների, որքան պատգամավոր պետք է ընտրվի: Այս պատգամավորների առաջադրման իրավունքը վերապահվում է բացառապես կուսակցությանը: Տվյալ դեպքում մարդը ընտրում է կոնկրետ անձի, բայց կոնկրետ կուսակցության առաջադրմամբ:
- Խառը մեխանիզմի դեպքում որոշակի թվով պատգամավորներ (օրինակ անհրաժեշտ քանակի պատգամավորների 70 տոկոսը) ընտրվում են կուսակցական բաց ցուցակներից՝ համամասնական կարգով, իսկ, օրինակ, 30 ընտրատարածքներում կուսակցություններն են առաջարկում իրենց մեծամասնական թեկնածուներին: Տվյալ դեպքում հնարավոր է, որ որևէ պատգամավոր, ունենալով նույնիսկ ձայների մեծամասնություն, չդառնա պատգամավոր, քանի որ կուսակցության

մեծամասնական բոլոր թեկնածուների հավաքած ձայները գումարվում են համամասնական կուսակցական ձայների, այնուհետև, կախված կուսակցության ստացած ձայների թվի՝ որոշվում է կուսակցության մանդատների թիվը: Վերջում մանդատներ ստանում են այն թեկնածուները, ովքեր ստացել են առավելագույն թվով ձայներ:

Համամասնական ցուցակներից նախընտրված թեկնածուին ընտրելու հետ կապված փորձագետները արտահայտել են մտավախություն, որ արդյունքում հնարավոր է լինեն ընտրատարածքներ, որտեղից չլինեն ընտրված պատգամավորներ, և այնպիսի ընտրատարածքներ, որտեղից ընտրվեն մի քանի պատգամավորներ:

Մեր գնահատմամբ՝ առաջարկվող մեխանիզմը կրկնում է մեծամասնական ընտրական համակարգը, սակայն վերացվում է **անձի ինքնառաջադրման իրավունքը և անձի ընտրվելու իրավունքի իրացման ազատությունը սահմանափակվում է կուսակցական պատկանելության նախապայմանով: Այսինքն, որպեսզի անձը կարողանա իրացնել իր ընտրվելու իրավունքը, վերջինս պետք է անդամակցի կամ առաջադրվի որևէ կուսակցության կողմից, այն պարագայում, երբ անգամ այս մեխանիզմի առաջարկողները փաստում են, որ կուսակցությունները կայացած չեն, ու բազում խնդիրներ ունենք կուսակցությունների կայունացման ու խոշորացման հարցում:**

Ձուգահեռաբար հարկավոր է ուշադրություն դարձնել նաև այն ռիսկին, համաձայն որի՝ ըստ փորձագետներից ստացված տեսակետների, հնարավոր է լինեն ընտրատարածքներ, որտեղից ընտրված պատգամավոր չլինի: **Արդյունքում նաև ստեղծվելու է անհավասար պայմաններ քաղաքացիների օրենսդիր մարմնում ներկայացված լինելու մասով:**

Հետաքրքիր է դիտարկել քանակական հարցման արդյունքները այն հարցի վերաբերյալ թե Ձեր կարծիքով ինչպես պետք է ընտրել ԱԺ պատգամավորներին մեծամասնական, թե համամասնական կարգով: Հարցվողների 21%-ը պատասխանել է, որ Պատգամավորները պետք է ընտրվեն մեծամասնական ընտրակարգով խառը ընտրությունների միջոցով, 19%-ը՝ Համամասնական կարգով ընտրությունն ավելի լավ է, քանի որ ընտրելով մեկ կուսակցություն՝ կարելի է քվեարկել մի քանի թեկնածուների օգտին, 49%-ը՝ Պատգամավորները պետք է ընտրվեն կոնկրետ ընտրատարածքներից, քանի որ փոքր ընտրատարածքից ընտրություն կատարելու դեպքում քաղաքացիները նախ ճանաչում են թեկնածուին, ապա, ընտրվելուց հետո կարող են հսկել նրա գործունեությունը, իսկ 12%-ը դժվարացել է պատասխանել<sup>139</sup>: Այսպիսով՝ քաղաքացիների մեծամասնությունը ցանկանում է ընտրել կոնկրետ անձի, ում վրա կդրվի կոնկրետ տարածքի համար պատասխանատվություն և ումից կակնկալվի կոնտրեռտ աշխատանքի արդյունքներ:

<sup>139</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 34:

Ընտրական իրավունքի և ընտրական գործընթացների հետ կապված փորձագետների հետ քննարկվել են նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են **ազատագրկման դատապարտված և պատիժը կրող անձանց, ժամկետային զինձառայողների և արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիների ընտրելու իրավունքի հնարավորությունների և սահմանափակումների վերանայման անհրաժեշտությունը**: Ազատագրկվածների առնչությամբ հարցվողները նշել են, որ եթե լինի վստահություն ընտրական գործընթացների հանդեպ, ուստի պետք է, որ ազատագրկվածները, ինչպես մյուս ՀՀ քաղաքացիները, ունենան ընտրելու իրավունք: Այլ խնդիր է, թե ինչպես կընթանան այդ ընտրությունները: Այն հարցին, թե բոլորը պետք է ունենան այդ իրավունքը, փորձագետների կարծիքները բաժանվել են երկու խմբի. համաձայն տեսակետներից մեկի՝ անհրաժեշտ է տարբերակում մտցնել ծանր հանցագործություն կատարածների և միջին կամ թեթև հանցագործություն գործածների միջև: Նրանց պնդմամբ՝ առաջինները չպետք է ունենան ընտրելու իրավունք, քանի որ հնարավոր է իրենց ընտրության արդյունքում հասարակության անվտանգությունը խաթարվի. *«որպես կանոն այլ երկրներում այս իրավունքից զրկվում են, օրինակ, մաֆիայի ներկայացուցիչները, որովհետև ընտրություններին մասնակցելու միջոցով ձևավորվում է իշխանություն, որը հետագայում կարող է վտանգավոր լինել, ... բայց միջին ծանրության կամ կարճ ժամկետով ազատագրկվածներին չի վերաբերում ընտրական իրավունքից զրկելը...»<sup>140</sup>, «դա համապատասխանում է Վենետիկի հանձնաժողովի ընտրությունների վերաբերյալ *ուղեցույցին»<sup>141</sup>*: Նրանց խոսքերով՝ միջին կամ թեթև հանցագործություն գործածներին հատկապես չպետք է զրկել ընտրության իրավունքից, քանի որ այդ ընտրությունների միջոցով ստեղծվում է մի իրավիճակ, որում որոշ ժամանակ անց գտնվելու են նաև իրենք: Փորձագետների կողմից բարձրացված մյուս տեսակետի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել ընտրելու իրավունքից, քանի որ քաղաքական իրավունքը չի անրադառնում պատիժը կրող անձի վերադաստիարակման վրա: Ուստի և աննպատակահարմար է տարբերակում մտցնել ազատագրկվածների ընտրելու իրավունքը սահմանափակելու չափորոշիչների (ծանր կամ թեթև հանցագործություն) միջև, քանի որ նույնիսկ ցմահ դատապարտվածն էլ ունի վճռի վերանայման իրավունք:*

Հարցվողների պնդմամբ, սակայն, Հայաստանում ազատագրկման դատապարտված և պատիժը կրող անձանց թիվն այդքան էլ մեծ չէ և չի կարող էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա:

Ինչ վերաբերում է **ժամկետային զինձառայողներին**, ապա փորձագետների կողմից ստացվել է կարծիք, համաձայն որի՝ անհրաժեշտ է ժամանակավորապես դադարեցնել նրանց ընտրելու իրավունքը, քանի որ հակառակ դեպքում տեղ է տրվում ընտրակեղծիքների: Որպես այլընտրանքային լուծում փորձագետներն առաջարկում են նաև զինձառայողներին

<sup>140</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>141</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

հնարավորություն տալ ընտրություն կատարելու իրենց գրանցման վայրի ընտրատեղամասերում, ինչն դժվար իրագործելի է:

**Արտասահմանում բնակվող ՀՀ քաղաքացիների** ընտրելու առնչությամբ հարցվողները նշել են ընտրությունների կազմակերպման բարդությունները, քանի որ այլ երկրում ընտրություններ կազմակերպելու համար անհրաժեշտ է ստեղծել կենտրոնացված ընտրատեղամասեր: Դրանք շատերի բնակության վայրերից հեռու կարող են տեղակայվել, որտեղ հասնելը դժվարություն կառաջացնի քաղաքացիների համար: Ուստի և աննպատակահարմար են համարում արտասահմանում բնակվող քաղաքացիների ընտրություններին մասնակցելը:

Վերը ներկայացված խնդիրները կարող են հաղթահարվել էլեկտրոնային ժողովրդավարության մեթոդների ներդրմամբ: Քանի որ Հայաստանում սկսել են կիրառվել նույնականացման քարտերը, էլեկտրոնային ստորագրությունները և տեղեկատվական տեխնոլոգիաների այլ մեթոդներ, ուստի և հնարավոր է աշխատանքներ տանել էլեկտրոնային քվեարկության կամ ընտրությունների իրականացման մեխանիզմները ներդնելու ուղղությամբ:

**Ամփոփելով վերը ներկայացվածը՝ հարկ ենք համարում ընդգծել, որ տեխնիկական կամ ձևական խոչընդոտները չպետք է արգելք հանդիսանան անձի կարողագույն, այն է՝ քաղաքական իրավունքի՝ ընտրական իրավունքի կիրառման համար:**

Դատապարտյալները, ովքեր որոշակի հանգամանքների բերումով գտնվում են անազատության մեջ՝ շարունակում են մնալ հասարակության անդամներ՝ իրավունք ունենալով անդամակցել որոշումների կայացման գործընթացին: Հետաքրքիր **նրանց ընտրական իրավունքից զրկելը ժողովրդավարական հասարակության մեջ ոչ անհրաժեշտ քայլ է:** Հիրսթ ընդդեմ Միացյալ Թագավորության գործը (CASE OF HIRST v. THE UNITED KINGDOM (No. 2) application no. 74025/01) քննվելով ՄԻԵԴ Մեծ Պալատում Դատարանը գտել է, որ ազատագրվածի ընտրական իրավունքի սահմանափակումը խախտում է Մարդու իրավունքների և Հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական Կոնվենցիային կից 1-ին արձանագրության 3-րդ հոդվածը, համաձայն որի «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս»:

Ինչ վերաբերում է փորձագետների այն կարծիքին, որ հարկավոր է ժամկետային ծառայության ընթացքում անձնաց զրկել ընտրական իրավունքից ընտրակեղծիքների նվազեցման նպատակով, ապա նույն հարթության վրա կարելի է բերել նաև պետակա սեկտորի բոլոր աշխատողներին, ովքեր ճնշումների և մեծ ազդեցության տակ են հայտնվում ընտրական գործընթացների ժամանակ: Բնականաբար, **քաղաքական ուժերի հակաիրավական գործողությունների կանխման նպատակով մի խումբ անձանց իրավունքի սահմանափակումն առնվազն հիմնավոր չի հնչում:**

Խոսելով արտերկրում գտնվող քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման մասին, հարկ է նկատել, որ տեխնիկական բարդությունները կամ անհարմարությունները չպետք է խոչընդոտ հանդիսանան ընտրական իրավունքի իրացման համար, հատկապես հաշվի առնելով մեր իրականությունն այն մասին, որ քաղաքացիներից շատերն են մեկնում երտերկիր ժամանակավոր արտագնա աշխատանքի, ուսման կամ ժամանակավոր բնակության, հետաքար **հարկավոր է ապահովել ՀՀ սահմաններից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների ընտրելու իրավունքի իրացումը՝ դրա համար նախատեսելով ու ներդնելով համապատասխան մեխանիզմներ ու միջոցներ:**

## Դատական համակարգ

Որակական հարցազրույցների ընթացքում փորձագետներն արտահայտել են իրենց կարծիքները **հայեցակարգում դատական համակարգի վերաբերյալ ներկայացված դրույթների շուրջ:** Բոլոր հարցվողները նշել են, որ Հայաստանում դատական համակարգն անկախ չէ և որ այն կարիք ունի անկախացման: Ի տարբերություն սրա՝ քանակական հարցման արդյունքները նման բացարձակ գնահատականներ չեն արտահայտում, և այստեղ կարծիքները կիսվում են: Օրինակ, հարցվողների 64% նշել է, որ դատարանները արդարացի որոշումներ են կայացնում<sup>142</sup>, իսկ հարցին, թե որն է դատական համակարգի հիմնական թերությունը, քաղաքացիների միայն 29%-ն է նշել անկախության պակասը, իսկ մյուս թերությունների թվում նշվել են դատարանների իրարամերժ որոշումները (42%), կառուցվածքային թերությունը (11%) և կոռուպցիան (4%)<sup>143</sup>: Անհրաժեշտ է նշել, որ դատական իշխանության անկախությունն մասին հարցը որպես կանոն ասոցացվում է միայն քաղաքական անկախության հետ, մինչդեռ դատական իշխանության անկախությունը, ինչպես բազմիցս նշել է ՄԴ-ն<sup>144</sup>, ինչպես սահմանված է միջազգային իրավունքում<sup>145</sup> և ինչպես

<sup>142</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 37:

<sup>143</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 40:

<sup>144</sup> ՀՀ սահմանադրական դատարանի 20.09.2006թ ««Դատավորի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի (18 հոդվածի նոր խմբագրություն) դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՄԴՈ-647 որոշում:

<sup>145</sup> «Դատավորների Մագնա Կարտա (հիմնարար սկզբունքներ)» (Եվրոպական դատավորների խորհրդատվական հանձնաժողովի (CCJE) փաստաթուղթ, որը պատրաստվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեին ներկայացնելու նպատակով): Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի փաստաթուղթ թիվ CM(2010)169, ընդունվել է Նախարարների կոմիտեի 19 հունվար 2011թ. թիվ 1103 նիստում, պարբ. 2-3):

նշվում է նաև Հայեցակարգում,<sup>146</sup> լինում է գործառույթային, կառուցակարգային, նյութական ու սոցիալական: Այդուհանդերձ, ինչ վերաբերում է դատական իշխանության վերաբերյալ հարցման ենթարկվածների ընդհանուր գնահատականին, նրանց պատասխանները ընդհանուր առմամբ ճիշտ են արտահայտում հայեցակարգում արտահայտված մտահոգությունը, որ իրավական պետության չափորոշիչներին համարժեք չի երաշխավորված դատական իշխանության հակակշռող դերը իշխանության այլ ճյուղերի առնչությամբ, և որ դրա հիմնական պատճառներից մեկը անկախության պակասն է:

Վերը նշվածի մասին են վկայում նաև փորձագետների կողմից հնչեցված որոշ բացարձակ գնահատականները այն մասին, որ հենց դատական իշխանության անկախ լինելուց է կախված իրավունքների գերակայության ապահովումը երկրում, որից ուղղակիորեն և աներկբայորեն կախված է երկրի անվտանգությունը և հետագա զարգացումը: Մասնավորապես, հնչել են հետևյալ կարծիքները. «Պետության ողնաշարը դատական համակարգն աս, անկախ դատական համակարգը եթե լինի, և իրավունքները կպաշտպանվեն, և տնտեսական մրցակցությունը կապահովվի, և երկիրը կզարգանա»<sup>147</sup>, «...բոլոր հարցերի լուծումը անկախ արդարադատական համակարգի ձևավորումն է կամ ստեղծումը, ինչը մենք չունենք...»<sup>148</sup>, «դատարանի լիարժեք անկախություն գործադիրից, իսկ մյուս մարմինների լիակատար ինքնուրույնություն, ոստիկանների ինքնուրույնություն, քննչական մարմինների անկախություն և իրար հետ շահերի բախում չլինի: Դա է լուծումը: Եթե դատական համակարգը անկախ լինի իշխանություններից, խնդիրների մեծ մասը կլուծվեն»<sup>149</sup>, «Դատական համակարգը պետք է անկախ լինի ամբողջությամբ, ամբողջությամբ լինի մրցակցային, որպեսզի ապահովվի անմեղության կանխավարկածի և մրցակցության սկզբունքի իրացումը ամբողջ ծավալով: Դատավարության կողմերի մրցակցություն...»<sup>150</sup>: Այսպիսով, հարցվողների կարծիքները մեծապես համընկնում են Հայեցակարգում արտահայտված այն մտահոգության հետ, որ առկա խնդիրների մեջ մեծ կարևորություն են ներկայացնում դատական իշխանության անկախության բացակայությունը և դատական իշխանության հակակշռող դերի բացակայությունը իշխանության գործադիր և օրենսդիր ճյուղերի առնչությամբ:

Ի տարբերություն վերը նշվածի՝ հարցվողների կարծիքները մեծապես տարբերվում էին այն հարցի շուրջ, թե արդյոք ներկայիս Սահմանադրությամբ հնարավոր է ապահովել դատական համակարգի անկախությունը: Մի մասը գտնում է, որ «...ներկայիս Սահմանադրությունը դատական համակարգի անկախությունն ապահովող երաշխիքներ ընդհանրապես

<sup>146</sup> Էջ 7, կետ 5:

<sup>147</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի նախագահի խոսքերից:

<sup>148</sup> Փաստաբանի խոսքերից:

<sup>149</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

<sup>150</sup> Սահմանադրագետի խոսքերից:

չունի...»<sup>151</sup>, իսկ մյուսներն էլ գտնում են, որ «...մեր գործող Սահմանադրության գործող օրենքներն արդեն իսկ արգելում են ցանկացած միջամտություն դատական գործունեությանը»<sup>152</sup>, «...եղածի սահմաններում էլ, եթե դատավորը՝ արդարադատությունն իրականացնողը իր դերում մնա, երաշխավորվածությունը կա: Ուրիշ բան է, որ քանի որ այդ դատավորները մեծի մասամբ այդպիսին չեն, որպեսզի այդպիսին դառնան, պետք է այդ ճնշումները նրանց վրա ավելի սահմանափակվեն»<sup>153</sup>: Ըստ քանակական հարցումների, Սահմանադրությունը փոփոխելու անհրաժեշտության մասին կողմ է արտահայտվել հարցման ենթարկվածների 25.4%-ը, իսկ դեմ է արտահայտվել կեսից ավելին՝ 60.1%-ը<sup>154</sup>: Եթե, ինչպես նշված է հայեցակարգում, գլխավոր խնդիրն է ստեղծել *inter alia*, անկախ ու անկողմնակալ դատարան<sup>155</sup>, վերը նշվածից բխում է, որ հարցման ենթարկվածներից մեծ մասը կարծում է, որ այդ նպատակին կարելի էր հասնել նաև գործող Սահմանադրությամբ: Այսինքն խնդիրը ոչ թե Սահմանադրության կամ իրավական մեխանիզմների բացակայության մեջ է, այլ քաղաքական կամքի բացակայության, որի պայմաններում օրենքները կիրառվում են կամ անարդյունավետ եղանակով, կամ կամայականորեն: Վերջին հաշվով, եթե խոսքը վերաբերում է դատարանների անկախությանը, ապա վերջիններս բազմիցս ցույց են տվել, որ կարող են իրավաչափ և կայուն հաստատված դատական պրակտիկա զարգացնել կոնկրետ ոլորտներով<sup>156</sup>, որտեղ բացակայում են միջամտության արտաքին ազդակները: Ի դեպ, այդ մասին ակնարկում է նաև Հայեցակարգը, նշելով, որ զսպող և հակակշռող մեխանիզմների փոխհավասարակշռության բացակայությունը հանգեցնում է «ստվերային հարաբերությունների» ընդլայնմանը: Ի վերջո, մեր համոզմամբ քաղաքական մենիշխանությունը, որը, Հայեցակարգի համաձայն, ամենախնդրահարույց հարցն է և Սահմանադրական բարեփոխումների՝ գուցե հիմնական պատճառը, ձևավորվել է ոչ թե թերի օրենքների կամ Սահմանադրության արդյունքում (օրինակ՝ Ընտրական օրենսգրքի, որի փոփոխությունները մշտապես համաձայնեցվել են միջազգային մարմինների հետ՝ միջազգային նորմերի համախառնասխան), այլ քաղաքական միջամտության արդյունքում: Բացառված չէ, որ պետական կառավարման այլ (օրինակ՝ խորհրդարանական) համակարգի պայմաններում ստվերային կարգավորումները նույնպես պահպանվեն, և դրանց դեմ Սահմանադրական կամ օրենսդրական հակակշիռները չաշխատեն:

<sup>151</sup> Այս տեսակետն ավելի շատ արտահայտել են Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամները:

<sup>152</sup> Սահմանադրագետներ, փաստաբաններ, իրավապաշտպան ՀԿ-ների ղեկավարներ, ԱԺ ներկայացուցիչներ:

<sup>153</sup> Անկախ իրավաբան-փորձագետի խոսքերից:

<sup>154</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 4:

<sup>155</sup> Տես Բաժին 2.4.2., § 1:

<sup>156</sup> Օրինակ, վիրավորանքի և զրպարտության գործերով դատական պրակտիկան՝ սկսած 2010 թվականի հունիսից մինչ այժմ, որի շրջանակներում դատարանները կայուն կերպով պահպանում են համաչափության սկզբունքը՝ պաշտպանելով լրատվամիջոցներին տեղեկատվության տարածման անհարկի միջամտությունից:



Վերը նշվածով հանդերձ՝ հարցվողների մեծ մասը գտնում է, որ հայեցակարգում ներկայացված են դատական համակարգում առկա բոլոր հիմնախնդիրները, որոնք հարկ կա շտկելու Սահմանադրական բարեփոխումների միջոցով, մասնավորապես, Արդարադատության խորհրդի գործառնությունների շրջանակները և կազմավորման կարգը<sup>157</sup> : Ըստ փորձագետների՝ արդարադատության անդամների այնպիսի կազմ պետք է ընտրվի և այնպիսի ոլորտներից, որ դատարանը կախվածության մեջ չընկնի Արդարադատության խորհրդից: «Մի կողմից պետք է նայենք խնդրին, որ արտաքին միջամտություն չլինի դատական իշխանության արդարադատության խորհրդի ձևավորմանը, մյուս կողմից էլ՝ լուծումները չհանգեցնեն Արդարադատության խորհրդի գործունեության խիստ ավտոնոմ դառնալուն: Այդ թվում՝ ոչ միայն դատավորների նշանակման հարցերն են, այստեղ նաև շատ կարևոր է դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը»<sup>158</sup>:

**Մենք կարծում ենք, որ և՛ Արդարադատության խորհրդի կազմավորման կարգը, և դրա գործառնությունների շրջանակները դատավորների նշանակման և առաջխաղացման գործընթացներում, այդ թվում նաև խորհրդի հարաբերակցությունը դատարանների հետ, ընդհանուր առմամբ փոխհավասարակշռված են:** Ներկա համակարգը ընդունվել է 2001-2004թթ.-ի Սահմանադրական բարեփոխումների ընթացքում՝ Վենետիկի հանձնաժողովի հետ բազմաթիվ խորհրդակցությունների, փորձագիտական եզրակացությունների լույսի ներքո, որոնցով, ի վերջո, Վենետիկի հանձնաժողովը դրական գնահատական է տվել Սահմանադրության այն տեքստին, որն ընդունվեց 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով<sup>159</sup>:

Այդուհանդերձ, հնչել են տարբեր տեսակետներ, օրինակ, որ կարելի է հիմք վերցնել դատական իշխանության ձևավորման աշխարհում հայտնի այլ սկզբունքներ՝ անկախություն ապահովելու համար: Տարբերակներից մեկը, երբ արդարադատության խորհուրդը բոլոր պրոցեդուրաներով դատավորների ցուցակը ներկայացնում է գործադիր իշխանություն չունեցող նախագահին (պառլամենտական կառավարման դեպքում) և նախագահը նշանակում է դատավորներին՝ առանց հետազայում հանելու որևէ լիազորության: Այսինքն՝ տվյալ դեպքում գործադիրից ոչ մի կախվածություն չի ենթադրվում: Մեկ այլ առաջարկված տարբերակ, երբ արդարադատության խորհուրդը թեկնածությունները ներկայացնում է պառլամենտին, որից հետո դատավորների թեկնածուները պառլամենտի կողմից ընդունվում են ձայների որակյալ մեծամասնությամբ: Առաջարկվել է նաև մեկ այլ՝ այսպես կոչված «խառը» տարբերակը, երբ առաջին ատյանի դատավորներին նշանակում է նախագահը, վճռաբեկի դատավորներին՝ պառլամենտը:

<sup>157</sup> Հարցվողներից ոմանք նշել են, թե դրանով հանդերձ փաստաթղթում հստակ չեն ներկայացվել բարձրացված խնդիրների լուծումները: Կարծում ենք՝ նման կարծիքները արդարացված չեն, քանի որ չպետք է մոռանալ, որ տվյալ դեպքում խոսքը գնում է հայեցակարգային փաստաթղթի մասին:

<sup>158</sup> Փաստաբանների պալատի անդամի խոսքերից:

<sup>159</sup> Տե՛ս՝ Վենետիկի հանձնաժողովի 24/06/2005թ. թիվ CDL(2005)052 փաստաթուղթը, որով Վենետիկի հանձնաժողովը և ՀՀ իշխանությունները ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր նոր Սահմանադրության տեքստի վերջնական նախագծի վերաբերյալ:

Վերը նշված առաջարկությունների բազմազանության լույսի ներքո անհրաժեշտ է նկատի ունենալ, որ զուտ այն հանգամանքը, որ դատավորները նշանակվում են գործադիր իշխանության կողմից, ինքնին կասկածի տակ չի դնում նրանց անկախությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել, թե կողմնակի միջամտության ու ճնշումների դեմ ինչպիսի հակակշռող գործոններ կան, ինչպես օրինակ նշանակման ընթացակարգերը, պաշտոնավարման ժամկետները, և այլն:<sup>160</sup> Այդպիսի հակակշիռ է այնպիսի մոտեցումը, երբ դատավորների թեկնածուների ցուցակը կազմվում է բացառապես դատական իշխանության ներսում, իսկ գործադիրը միայն հաստատում է ցուցակը: Այս մոդելը ընդունվեց Վենետիկի հանձնաժողովի կողմից ներկա Սահմանադրության առումով (որի պայմաններում Արդարադատության խորհուրդը կազմում է դատավորների թեկնածուների ցուցակը, իսկ Նախագահը հաստատում է դա): Վերը նշված առաջարկություններում պահպանվում է նույն մոտեցումը, սակայն առաջարկվում է նույն մոդելը կիրառել կառավարման այլ համակարգի ներքո:

Դատական համակարգի հետ կապված խնդիրների թվում հարցվողների կողմից նշվել է դատական տարբեր ատյանների գործառույթների հստակեցման անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կտա բացառելու ավելորդ օղակների առկայությունը: Օրինակ կա 2 բարձրագույն ատյան՝ Սահմանադրական դատարան՝ սահմանադրական արդարադատության մասով և Վճռաբեկ դատարան՝ օրենքների միատեսակ կիրառման առումով, որոնց գործառույթները կարող են միատեղվել: **Մենք կարծում ենք, որ այս խնդիրը առկա է ոչ միայն Հայաստանում, այլ նաև կոնստիտենտալ իրավական համակարգի երկրներում, որտեղ ավանդաբար և պատմականորեն ձևավորվել է մի համակարգ, ըստ որի սահմանադրականության խնդիրները լուծվում են առանձին մասնագիտացված դատարանում:** Ի տարբերություն դրա՝ անգլո-սաքսոնական համակարգում սահմանադրականության հարցերը լուծվում են բարձրագույն ատյանում (օրինակ՝ ԱՄՆ-ում): Իրավագետների կողմից ընդունվում է, որ երկու բարձրագույն ատյանների գոյության պայմաններում բախումը նրանց միջև որոշ հարցերով անխուսափելի է, որն էլ երբեմն տեղի է ունենում Հայաստանի պայմաններում: Այդուհանդերձ, փորձը ցույց է տալիս, որ այս երկու դատարանները կարող են նաև խաղաղ գոյակցել՝ իրենց իրավագործության շրջանակներում մեկը մյուսին լրացնելով:<sup>161</sup> **Մենք կարծում ենք, որ խնդիրը չունի բավարար հրատապություն ու հեռանկարայնություն, որպեսզի նախաձեռնվի դրա իրագործումը առաջիկա բարեփոխումներով:**

<sup>160</sup> *Գալստյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 26986/03, 15/11/2007թ. § 62:

<sup>161</sup> Դրա վառ օրինակ է վիրավորանքի և զրպարտության դատական ոլորտը, որտեղ ՄԴ-ն 2011թ. նոյեմբերի 11-ին կայացրեց իր ՄԴՈ-997 հայտնի որոշումը, որով բացահայտեց Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը, իսկ մի քանի ամիս անց Վճռաբեկ դատարանը ընդունեց երկու կարևոր նախադեպային որոշումներ (04.27.2012թ. թիվ ԵԿԴ/2293/02/10 և թիվ ԱՎԴ/0179/02/13 քաղաքացիական գործերով), որոնցով դատարանների համար նշված հոդվածի դրույթները կիրառելու գործնական նշանակության ուղեցույցներ սահմանեց, որոնք պրակտիկայում պարտադիր կերպով կատարվում են դատարանների կողմից:

Հարցվողները նաև առաջարկել են հստակեցնել Սահմանադրական դատարանի դերը իրավական համակարգի ձևավորման մեջ: Նրանք գտնում են, որ Սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշումները, որոնք ենթադրում են օրենսդրական դաշտի փոփոխություն, ԱԺ-ում երբեմն ֆորմալ քվեարկության արդյունում չեն կատարվում, և որ դրա համար անհրաժեշտ է մշակել մեխանիզմ այն սահմանափակելու համար: Սահմանադրական դատարանի որոշումների չկատարմանը անդրադարձել է հենց ինքը՝ ՄԴ-ն, իր առնվազն երկու որոշումներում և տարեկան զեկույցներում:<sup>162</sup> Մենք գտնում ենք, որ ՄԴ որոշումների չկատարումը քաղաքական կամքի բացակայության, այլ ոչ թե համակարգային թերության խնդիր է:

Հայեցակարգում առաջարկվող այն մոտեցումը, որ **անհրաժեշտ է անցում կատարել եռաստիճան դատական համակարգից երկաստիճանի՝ երկրորդ աստիճանում վերաքննության և վճռաբեկության լիազորությունները ներառելու պայմանով**, գրեթե բոլոր հարցվողների կողմից համարվել է ժամանակավրեպ և աննպատակ: Ըստ նրանց՝ ավելի լավ է չաշխատող օղակը կատարելագործել, աշխատեցնել, ապահովել դատավորների անկախություն, քան վերացնել: *«Տարբերություն չկա երկու, թե եռաստիճան համակարգ է, կարևորը այն ճիշտ աշխատեցնել իմանալն է»<sup>163</sup>, «եռաստիճան համակարգն ամենաօպտիմալ համակարգն է, միայն թե դա պետք է աշխատի»<sup>164</sup>*: Եթե եռաստիճան համակարգը երկաստիճանով փոխարինելուն դեմ են արտահայտվել գրեթե բոլոր հարցվողները, ապա նրանց մեջ եղել են մարդիկ, ովքեր կողմ են եղել տեղական դատարանների ստեղծման գաղափարին: *«Եթե ունենանք տեղական դատարաններ, ամենակարևորը՝ նրանք կանցկացնեն ապացույցների թույլատրելիության բովանդակային նախնական լսումներ: Կարևորն այն է, որ այստեղ ունենում ենք առանձին դատարան, որը քննում է ապացույցների թույլատրելիության հարցը, արդյունքում անթույլատրելի համարվող հարցը երբեք չի հայտնվի գործը քննող դատավորի մոտ»<sup>165</sup>, «Պետք է անցում կատարել այնպիսի եռաստիճան դատական համակարգի, որտեղ գերագույն, շրջանային և տեղական դատարարաններ կան»<sup>166</sup>*: Այնքանով, որքանով խնդիրը շոշափում է մարդու իրավունքները, եռաստիճան համակարգից երկաստիճան համակարգի անցումը որևէ խնդիր չի առաջացնում, եթե ապահովված է առաջին աստիճանում գործի ամբողջ ծավալով քննության հնարավորություն և առնվազն մեկ բողոքարկման հնարավորություն փաստի և իրավունքի մասին հարցերի շրջանակով: Այս լույսի ներքո երկաստիճան

<sup>162</sup> Տե՛ս, օրինակ, ՄԴՈ-1114 որոշումը (Վճռաբեկ դատարանի կողմից ՄԴ որոշումները չկատարելու մասին) և 2013թ. տարեկան զեկույցը, որում ՄԴ-ն նշում է, որ ՄԴ որոշումների կատարման պրակտիկան վկայում է, որ շարունակում է անկատար մնալ առկա իրավակարգավորումը, որ բացակայում է ՄԴ որոշումների կատարման մշակված համակար և որ ամեն ինչ թողնված է կառավարության և առանձին պատգամավորների հայեցողական մոտեցման արդյունքում օրենսդրական նախաձեռնության դրևորման հույսին:

<sup>163</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>164</sup> Դասախոսի խոսքերից:

<sup>165</sup> Սահմանադրագետի խոսքերից:

<sup>166</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

**համակարգի անցումը արդյունավետորեն կկրճատի դատական ռեսուրսների վատնումը և դատավարության ժամկետները:**

Ինչ վերաբերում է երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրման հայեցակարգային առաջարկին, ապա այս գաղափարը մեծամասամբ մերժվել է հարցված փորձագետների կողմից: Նրանցից շատերը գտնում են, որ ներկայումս, հաշվի առնելով Հայաստանի իրավական և քաղաքական մշակույթը, բնակչության իրավագիտակցության մակարդակը, սոցիալական կապիտալի վճռորոշ ազդեցությունը, ավանդույթները և այլն, երդվյալ ատենակալների ինստիտուտը ներդնելու համար դեռևս շուտ է: Հնչել է նաև տեսակետ, որ դա հանդիսանում է հնացած գաղափար, քանի որ կիրառվել սկսել է այն ժամանակ, երբ չկային մասնագիտացված դատավորներ և արդարադատությունն իրականացնում էր եկեղեցին՝ երդվյալ ատենակալների (հասարակության անդամների) ինստիտուտի ներդրումը միակ հնարավորությունն էր արդար դատավճիռ կայացնելու համար: Այս տեսանկյունից՝ ինստիտուտի ներդրումն անիմաստ է, քանի որ ներկայումս Հայաստանում կան շատ հմուտ մասնագետներ: Երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը հարցվողների կողմից աննպատակահարմար է համարվում մի քանի պատճառներով՝ ա) ժամանակատար գործընթաց է, որի ընթացքում ծավալուն աշխատանք է տարվում ատենակալների առնչությամբ, հետևաբար բ) ծախսատար է, գ) որոշումները, որպես կանոն կայացվում են ոչ այնքան պրոֆեսիոնալ մակարդակում, որքան հուզական, և այլն:

Երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրման հետ կապված կողմ են արտահայտվել հարցվողներից միայն 3 հոգի (հանձնաժողովի անդամներ, սահմանադրագետ), ովքեր ընդգծել են, որ չնայած հակափաստարկների, այնուամենայնիվ, կարելի է դա կիրառել ծանր հանցագործությունների դեպքերում: Դրանով իսկ կարող է լուծվել ծախսատարության հարցը, քանի որ ըստ իրենց հիմնավորման՝ նման դեպքերը մեկ տարվա կտրվածքով 30-ից չեն գերազանցում: Ամփոփելով հարցվողների կարծիքները երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրման անհրաժեշտության վերաբերյալ՝ նշենք, որ նույնիսկ դեմ արտահայտված փորձագետները փորձել են առանձնացնել այն էական ոլորտները, որոնց վրա անհրաժեշտ է կենտրոնանալ և որտեղ պետք է գտնել լուծումները ատենակալների ինստիտուտի ներդրման հարցը որոշելիս: Նշված էական ոլորտներն են.

- Գործերի բնույթը, որոնց առնչությամբ պետք է կիրառվի ատենակալների ինստիտուտը (ամենայն հավանականությամբ միայն ծանր և առանձնապես ծանր հանցագործության գործերով),
- Ատենակալների ընտրության հիմքերը և կարգը (որտեղից և ինչպես պետք է նրանք ընտրվեն (բնակավայրը, տարիքը, կրթությունը, և այլն),
- Ինչ հարց պետք է լուծեն ատենակալները (մեղքի մասին հարցը և/կամ պատժի մասին հարցը),

- դատավորի դերը դատական վարույթում (դատավորը միայն արբիտր, դատավորը պարտավոր է ընդունել ընդունված որոշումը, դատավորի հրահանգները ատենակալներին, և այլն):

Մենք նույնպես գտնում ենք, որ իր բոլոր թերություններով հանդերձ երդվյալ ատենակալների ինստիտուտը հնարավոր է կիրառել ՀՀ-ում խիստ սահմանափակ դեպքերում, երբ գործը ներկայացնում է հանրային մեծ հետաքրքրություն և երբ գործի շրջանակներում շոշափվում են հասարակական կենսական շահեր, օրինակ՝ կազմակերպված հանցավորություն, ասիականություն, թմրանյութերի շրջանառություն, և այլն):

Այսպիսով՝ դատական համակարգը փոփոխելու անհրաժեշտության մասին կարծիքները միանշանակ չեն: Թեև բոլոր փորձագետները նշել են դատական համակարգի անկախության բացակայությունը՝ որպես հիմնական թերություն, հարցման ենթարկված քաղաքացիների միայն մի մասն է այդպես կարծում, իսկ կեսից ավելին կարծում է, որ դատարանները կայացնում են արդարացի որոշումներ: Դրանով հանդերձ՝ գրեթե բոլոր հարցվածները միահամուռ են, որ դատական իշխանությունը բավարար հակակշիռ չի ստեղծում հանդիսանում իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ, որը, սակայն, պայմանավորված է ոչ թե դատական համակարգի կառուցվածքային թերությամբ, այլ կառավարման համակարգի թերությամբ՝ քաղաքական կամքի բացակայությամբ և քաղաքական մենիշխանությամբ:

Նկատելի ուշադրության կենտրոնում է հայտնվել Արդարադատության խորհուրդը: Շատ փորձագետներ հենց այս մարմնի մեջ են տեսնում դատական համակարգի անկախության երաշխավորի պոտենցիալը՝ պայմանով, որ վերանայվի այս մարմնի ձևավորման կարգը և դրա լիազորությունների շրջանակը: Առաջարկվել են ԱԽ-ի ձևավորման տարբեր մոդելներ՝ այդ թվում նաև այնպիսի մոդելներ, որոնք համապատասխանում են խորհրդարանական կառավարման մոդելին:

Հարցվողների մեծ մասը բացասաբար է արտահայտվել երկաստիճան դատական համակարգի անցնելու հայեցակարգային առաջարկի նկատմամբ՝ գտնելով, որ դրա համար օբյեկտիվ անհրաժեշտություն չկա: Մեծամասամբ բացասական կարծիք է հնչել նաև երդվյալ ատենակալների ինստիտուտի կիրառման առումով:

## Հանրաքվեի սահմանադրական երաշխիքները

Փորձագիտական հարցազրույցների ընթացքում բոլոր հարցվողներն էլ դրական են արտահայտվել **հանրաքվեի իրականացման գործընթացի՝ սահմանադրական երաշխիքների ամրագրման անհրաժեշտության վերաբերյալ**: Նշելով, որ հայեցակարգում գեղեցիկ կերպով

ներկայացվում է հանրաքվե անցկացնելու անհրաժեշտությունը, հարցվողներն ընդգծում են, սակայն, որ հայեցակարգում չկա հանրաքվեի հարցի շուրջ հստակություն, պարզ չեն մեխանիզմները: Ըստ հարցվողների՝ հանրաքվեն ժողովրդավարական կարևորագույն գործիքներից է, որը Հայաստանում կիրառվում է շատ հազվադեպ: «Հանրաքվեն՝ որպես ժողովրդի ուղղակի իշխանության իրականացման միջոց, շատ քիչ է կիրառվել և այն էլ միայն սահմանադրական փոփոխությունների ժամանակ, բայց ոչ երբեք այնպիսի օրենքների ընդունման համար, որոնք ժողովուրդն ինքը կցանկանար անմիջականորեն ընդունել և գործադրման առարկա դարձնել»<sup>167</sup>, «...հանրաքվեն դա անմիջական ժողովրդավարություն իրականացնելու եղանակ ա, ինչը մեր երկրում դեռևս չի իրականացվել այնպես, ինչպես հարկն է, դրա զարգացումը նպաստելու ա ընդհանուր ժողովրդավարացմանը և բնակչության ակտիվացմանը»<sup>168</sup>: Ուստի և առաջարկվում է այն ամբողջականացնել դարձնել լիարժեք պրակտիկ գործիք՝ անմիջական ժողովրդավարության իրականացման համար: Կարևորելով հանրաքվեի ինստիտուտի զարգացման անհրաժեշտությունը՝ որոշ հարցվողներ այնուամենայնիվ գտնում են, որ անհրաժեշտ է, նախ և առաջ, բարձրացնել նմանատիպ միջոցառումների հանդեպ հանրային վստահությունը, մշակել մեխանիզմներ՝ դրանց կազմակերպման և իրականացման գործընթացը թափանցիկ դարձնելու համար: Նրանց խոսքերով՝ հանրաքվեն ընտրություններից չի տարբերվում, քանի որ քվեարկությունը նույն կերպ է ընթանում, ընտրական հանձնաժողովները, վերահսկողական մեխանիզմները նույնն են: Ուստի և առաջարկվում է կատարելագործել ընտրությունների իրականացման մեխանիզմները, ապահովել Գենտրոնական ընտրական հանձնաժողովի անկախությունն իշխանությունից, բարձրացնել ընտրությունների արդյունքների վստահելիության և ճշգրտության աստիճանը, որով՝ կբարձրանա նաև հասարակության վստահությունը նմանատիպ գործընթացների հանդեպ: Հանրաքվեի ինստիտուտի զարգացման համար անհրաժեշտ է, որ մարդիկ իրենց պահանջատեր զգան: Վերջինս կարևոր նախապայման է հանրաքվեի ինստիտուտի զարգացման համար, քանի որ բնակչության շրջանում կատարված հարցումները ցույց են տալիս մարդկանց մոտ ընդհանուր անտարբերությունը կամ ժխտողականությունը որևէ հարց իրենց միջոցով լուծելու հարցում: Թեև գիտակցվում է հանրաքվեի անհրաժեշտությունը և հարցվածների 52,5 %-ը ընդունում է, որ դա կարևոր է ժողովրդի համար կարևորագույն խնդիրները լուծելիս, սակայն 46,3 %-ը դա համարում է բյուջեի վրա անիմաստ ծախս: Արտահայտելով իրենց վերաբերմունքը՝ հանրաքվեին մասնակցելու վերաբերյալ ավելի ժխտողական տրամադրվածները, որոնք կազմում են հարցվածների 50%-ը, գտել են որ դա անիմաստ գործ է, որ ժողովրդի կարծիքը հաշվի չի առնվում և ամեն ինչ որոշվում է նախապես: 24%-ը մասնակցությունը հանրաքվեին համարում է պարտականություն, իսկ 21 %-ը ընդունում է որպես պետության կառավարմանը մասնակցելու ձև: Հարցվածների 5 %-ը դա համարել է անիմաստ գործ, քանի որ ժողովուրդը չի կարող որոշել կարևոր խնդիրները: Այսինքն, ստացվում է, որ հարցվածների

<sup>167</sup> ԱՄ պատգամավորի խոսքերից:

<sup>168</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

մեծամասնությունը (52,5%) գիտակցում է հանրաքվեի կարևորությունը, սակայն 55 %-ը անիմաստ գործ է համարում դրան մասնակցելը, քանի որ չի վստահում որ իր ձայնը տեղ կհասնի<sup>169</sup>: Մա վկայությունն է այն փաստի, որ քվեարկության արդյունքների նկատմամբ վստահության պակասը հաղթահարելու խնդիր ունենք: Ըստ փորձագետների՝ հանրաքվեի իրականացումը՝ որպես ժողովրդավարական գործիք, կարիք ունի որոշակի մեխանիզմների ապահովման: Հարցվողների կողմից հավանություն ստացած մեխանիզմներն են՝

- Հանրությանը տալ հանրաքվեի նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք՝ ստորագրահավաքների և/կամ հանրային հարցումների միջոցով որևէ հարցի բարձրացում. տվյալ դեպքում անհրաժեշտ է սահմանել ստորագրությունների օպտիմալ քանակ կամ հարցումների արդյունքների որոշակի տոկոս:
- Հստակեցնել այն հարցերի շրջանակը, որոնց սահմաններում հանրությունը կարող է հանդես գալ հանրաքվե իրականացնելու նախաձեռնությամբ և, որոնց դեպքում հանրաքվե իրականացնելը կդառնա պարտադիր:

Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամներից մեկը խնդիրը ձևակերպել է հետևյալ կերպ. «...*էստեղ խնդիր ունենք զարգացնել հանրաքվեի ինստիտուտը, դուրս բերել այն հարցերի շրջանակ, որի դեպքում պարտադիր է դառնալու հանրաքվեն և ստեղծել հանրաքվեների նախաձեռնության հնարավորություն...*»<sup>170</sup>: Այսպիսով՝ անհրաժեշտ է, նախ, հստակ ամրագրել այն հիմքերը, որոնց դեպքում հանրաքվեն դառնում է պարտադիր և չի թողնվում իշխանության հայեցողությանը: Երկրորդ, պետք է հնարավորություն տալ ոչ միայն իշխանություններին, այլ նաև քաղաքացիներին հանդես գալու օրենքների կամ կարևոր որոշումների առաջադրման, փոփոխության և այլնի շուրջ հանրաքվեի նախաձեռնությամբ: Հստակեցնելով հանրաքվեի դրվելիք հարցերի շրջանակը՝ բարձրացվում է այդ հարցերին տրվող լուծման արժեքավորությունը: Այսպես՝ հարցված փաստաբաններից մեկի խոսքերով՝ «*երբ որ հանրաքվեով է նման հարցը լուծվում, օրինակ, միջազգային կառույցին անդամակցությունը, այդ երկրի նկատմամբ նման ճնշում չեն կարող կիրառել: Այսինքն՝ մի մարդը/նախագահը շատ խոցելի է, իսկ հանրությունը՝ ոչ*»<sup>171</sup>:

Խոսելով հանրաքվեի դրվող նախընտրելի հարցերի մասին ուշագրավ են նաև բնակչության շրջանում արված հարցումների արդյունքները, ըստ որի հարցվածների 49,4%-ը գտնում է, որ հանրաքվեի պետք է դնել ցանկացած հարց: (Ընդ որում սա այն դեպքում, երբ հարցվածների միայն 21%-ն է հանրաքվեն դիտարկում որպես կառավարմանը մասնակցության ձև): Հարցվածների 34,1%-ը կողմ է միայն ժողովրդին հուզող հարցերը հանրաքվեի դնելուն, իսկ 13,9%-ը՝ միայն ազգային անվտանգության հետ կապված հարցերը<sup>172</sup>:

<sup>169</sup> Տես Մա 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 42:

<sup>170</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:

<sup>171</sup> Փաստաբանների պալատի անդամի խոսքերից:

<sup>172</sup> Տես Մա 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 43:

Ըստ հարցվող փորձագետների՝ եթե քաղաքացիական հասարակությունը լինի գաղափարների կրող, ունենա բարձր իրավագիտակցություն, հնարավոր կլինի խուսափել շատ ռիսկերից: Նման պարագայում լավագույն լուծումը հանրահարցման ինստիտուտն է, որը ենթադրում է հասարակական կարծիքի ուսումնասիրություն և ստորագրահավաք: Այդպիսով՝ հանրաքվեն պետք է նախապես պլանավորված գործողությունների շարք ենթադրի, սկսի հասարակական կարծիքի հարցումներից, ապա մշակվեն հանրաքվեի դրվելիք հարցերի տարբեր սցենարներ, տեսլականներ, այնուհետև քարոզարշավի կարգով ներկայացվեն հանրությանը, որպեսզի մարդիկ հանրաքվեի գնալիս կատարեն գիտակցված ընտրություն: Մյուս տեսանկյան համաձայն՝ եթե ԱԺ-ն իսկապես ձևավորված է ժողովրդից, ինքն է առաջ քաշելու այդ հանրաքվեի գաղափարը և/կամ աջակցելու ժողովրդական նախաձեռնությունները:

Հարցազրույցների ընթացքում պարզվել են փորձագետների մոտեցումները հայեցակարգային այն դրույթի շուրջ, որ հանրաքվեի **ինստիտուտի զարգացման համար անհրաժեշտ է սահմանադրաիրավական նախադրյալներ ստեղծել քաղաքացիական նախաձեռնությամբ հանրաքվեի դրված հարցի կամ օրինագծի առնչությամբ Ազգային ժողովի կողմից նախապես եզրակացություն տալու համար:** Անդրադառնալով հնարավոր ռիսկերին՝ մասնավորապես Սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովի անդամները նշել են, որ ԱԺ-ի եզրակացությունը անհրաժեշտ է՝ խուսափելու համար այնպիսի հարցերի առաջադրումից, որոնք կարող են սպառնալ երկրի անվտանգությանը, հակասել ժողովրդավարությանը և/կամ նախկինում ընդունված օրենքներին ու որոշումներին: Հանձնաժողովի անդամներից մեկի խոսքերով՝ *«Ղա անհրաժեշտ է, քանի որ օրենսդիր գործունեության համար պատասխանատու է Ազգային ժողովը, և կարող են միտումներ ծնվել, որոնք իրենց բնույթով լինեն հակաիրավական, ոտնձգեն ժողովրդավարական արժեքներին և այլ վտանգներ ունենան... ներկայումս էլ ցանկացած իրավական ակտի ընդունում ուղղորդվում է եզրակացությունների, կարծիքների տրամադրմամբ, կառավարությունից, այլ շահագրգիռ մարմիններից և այլն, բայց այդ եզրակացություն տալը ոչ թե նպատակ ունի արհեստականորեն սահմանափակելու, այլ իրավական գործընթացներով որոշակի չափանիշների, ստանդարտների, արժեքների պաշտպանությանը... վերահսկելու տեսանկյունից պարտադիր են նման մեխանիզմները»<sup>173</sup>:*

ԱԺ-ի եզրակացության և դրա հետ կապված ռիսկերի առնչությամբ փորձագետների կողմից ներկայացվել է նաև մտավախություն, որ հանրաքվե անցկացնելու գաղափարը կարող է մնալ թղթի վրա այն դեպքում, երբ որևէ հարցի շուրջ հանրաքվե անցկացնելու վերջնական որոշումը կայացնի ԱԺ-ը:

**Անշուշտ ԱԺ-ի դերը ռիսկային է այն առումով, որ այսօրվա գործող իրավակարգավորումները, մասնավորապես տեղական հանրաքվեի հետ կապված,**

<sup>173</sup> Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամի խոսքերից:



հանրաքվեի դրվող հարցի ճակատագիրը պայմանավորում են ՏԻՄ-ի դիրքորոշմամբ, և եթե ավագանին դեմ է արտահայտվում հանրաքվեի նախաձեռնությանը, ապա այն տապալվում է: Թեև «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի գործողության ընթացքում ՀՀ-ում որևէ անգամ տեղական հանրաքվե չի անցկացվել, կարծում ենք պատճառներից մեկն էլ մեխանիզմների անկատարությունն է և ՏԻՄ-ի «ծանրակշիռ» դերն այդ հարցում:

Մի կողմ թողնելով ԱԺԻ-ի կողմից հանրաքվեի դրվող հարցի վերաբերյալ եզրակացություն տալու կամ չտալու մասին տեսական վեճը՝ անդրադառնանք այն հարցին, որ եթե ժողովուրդը լինի հանրաքվեի նախաձեռնող սուբյեկտ, ապա ինչպիսի հարցեր կառաջադրի հանրաքվեի համար<sup>174</sup>: Ըստ բնակչության շրջանում կատարված հարցումների արդյունքների՝ հարցվածների 53,3%-ը գտնում է, որ հանրաքվեի պետք է դնել համայնքային ցանկացած հրատապ խնդրի վերաբերող հարց, 20,9%-ը կողմ է հանրաքվեի դնել երկրի սահմանների փոփոխության հարցը, իսկ 17,4%-ը՝ պետության ինքնիշխանությանը վերաբերող հարցը<sup>175</sup>:

Ի տարբերություն փորձագետների այն կարծիքի, որ հանրությունը պետք է լինի պահանջատեր, ուստիս՝ հանրաքվե նախաձեռնող սուբյեկտ, այդուհանդերձ հարցված քաղաքացիների 4,8%-ը կարծիք է հայտնել, որ քաղաքացիները չպետք է ունենան հանրաքվե նախաձեռնելու իրավունք: Այս տեսակ դիրքորոշումը կարող է պայմանավորված լինել երկու հանգամանքով՝ նախ ցածր իրավագիտակցության պատճառով քաղաքացու կողմից իր իսկ դերի թերագնահատում և երկրորդ՝ նախկինում ունեցած վատ փորձի հետևանք՝ ժխտողականություն:

Որպես իրականացման մեխանիզմ՝ հարցվողների կողմից առաջարկվել է հետևյալ մոդելը. քաղաքացիներն ինչ-որ հարցի շուրջ ստորագրահավաք են կազմակերպում, որոշակի քանակությամբ ստորագրություններ հավաքվելուց հետո հարցը ներկայացվում է ԱԺ-ին: ԱԺ-ի կողմից հարցին տրվում է դրական կամ բացասական արձագանք: Բացասականի դեպքում, երբ ստորագրահավաքը շարունակվում է, ապա կարող է ԱԺ-ի եզրակացությունը վերանայվել, նույնիսկ երբեմն անտեսվել: Տվյալ դեպքում կարևոր է սահմանել ստորագրությունների օպտիմալ քանակ: Դրա համար փորձագետների կողմից առաջարկվում է ուսումնասիրել միջազգային փորձը, թե այդ քանակը բնակչության որ տոկոսը պետք է կազմի: Այդ տոկոսը չպետք է շատ բարձր լինի, որ անհնարին լինի դրան հասնելը, իսկ մյուս կողմից՝ այն չպետք է շատ ցածր լինի, որ պոպուլիզմի չվերածվի<sup>176</sup>: Այդպիսով՝ հանձնաժողովի անդամների հետ հարցազրույցներից պարզ դարձավ, որ ԱԺ-ի եզրակացությունը չպիտի կրի պարտադիր բնույթ, և այն հնարավոր է շրջանցել: Մեր

<sup>174</sup> Հարցան մեջ չի տարբերակվել տեղական և համապետական հանրաքվեն:

<sup>175</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 44:

<sup>176</sup> Տոկոսների վերաբերյալ փորձագետների կարծիքները միմյանցից խիստ տարբերվում են: Եղել է տեսակետ, որ օպտիմալ կարելի է համարել 25%-ը, քանի որ քաղաքացիները միշտ չէ, որ ակտիվ են մասնակցում հանրաքվեներին: Արտահայտվել է նաև տեսակետ, որ օպտիմալ է 75%-ը, քանի որ կարող է հանրաքվեի դրվեն այնպիսի հարցեր, որոնք վտանգավոր են երկրի համար:

կարծիքով՝ անհրաժեշտ է, որպեսզի Սահմանադրության մեջ հստակ արձանագրվի, թե ԱԺ-ի եզրակացությունը ինչպիսի ուժ պետք է ունենա՝ այն ցանկացած դեպքում հանդիսանալու է վերջնական որոշում, թե հնարավոր է այն ենթարկել փոփոխության, որ պարագաներում այն կարող է փոփոխվել և այլն: Այս ամենի վերաբերյալ պետք է իրազեկվեն բոլոր շահագրգիռ կողմերը, հետաքրքրված անձիք, հասարակության անդամները:

**Բացի դա, որպես այլընտրանքային մեխանիզմ՝ կարելի է սահմանել, որ եթե հարցի վերաբերյալ հավաքվել է ինչ-որ քանակի ստորագրություն, և դրան միացել են ԱԺ-ում ներկայացված խմբակցությունների մեծամասնությունը, ապա հարցը ավտոմատ մտնում է ԱԺ օրակարգ և չի պահանջվում ԱԺ-ի դրական եզրակացությունը:**

Հարցված փորձագետներից մեկի պնդմամբ՝ հանրաքվեի ինստիտուտի զարգացմանը կարող է նպաստել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը: Ըստ նրա՝ այսօր կան բոլոր անհրաժեշտ հիմքերը իրականացնելու էլեկտրոնային ժողովրդավարություն (նույնականացման քարտեր, էլեկտրոնային ստորագրություն, քաղաքացիների հասանելիություն ինտերնետին):

Հարցվողների կողմից քննարկվել է նաև այն, թե ինչպիսի սահմանադրաիրավական կարգավորումների խնդիր է առաջադրում հանրային պետիցիայի ինստիտուտի արդյունավետ գործադրումը: Այս առնչությամբ եղել է առաջարկ որոշակի կանոնակարգում մտցնել հանրագրի արդյունքում պետության պաշտոնատար անձանց կողմից արձագանքի առնչությամբ (պատասխանը պետք է տրվի որոշակի ժամանակահատվածում, այն պետք է լինի հստակ և սպառիչ, և այլն):

## **Տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական բարեփոխումների հայեցակարգային հիմնադրույթները**

Փորձագիտական հարցազրույցների ընթացքում հարցվողների հետ քննարկվել են **տեղական ինքնակառավարման համակարգին առնչվող խնդիրները և ՏԻՄ-երի վերաբերյալ հայեցակարգում առաջարկվող մոտեցումները:** Բոլորն էլ միաբերան նշել են, որ այդ առումով հայեցակարգը թերի է և լիարժեքորեն չի արտացոլում այն խնդիրները, որոնք այսօր Հայաստանն ունի տեղական ինքնակառավարման համակարգում՝ ոչ միայն անմիջական ժողովրդավարության իրականացման, այլ նաև կառավարման արդյունավետության տեսակետից: Հայեցակարգն ավելի շատ շեշտադրում է որոշակի նուրբ հարցեր, որոնք թեև էական են, բայց կարևոր չեն այսօրվա կառավարման ներքո առավել արմատական և հիմնարար փոփոխություններ իրականացնելու ուղղությամբ: Ըստ հարցվողների՝ ՏԻՄ-երի

կարևորագույն խնդիրը ֆինանսներին չունօրինելն է, ուստի և գտնում են, որ վերջիններս պետք է ունենան անկախություն և իրենց ռեսուրսները տնօրինելու իրավունք, այլ ոչ թե սնվեն սուբսիդավորումից: Իրավապաշտպան ՀԿ-ներից մեկի ղեկավարի ձևակերպմամբ. «ՏԻՄ-երը կախվածության մեջ են իշխանություններից, քանի որ Հայաստանում խախտված է սուբսիդատության սկզբունքը: Օրինակ, տեղական հողի հարկը և գույքի հարկը պետությունը սահմանում է օրենքներով, սակայն, համաձայն Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի (որը վավերացվել է Հայաստանի կողմից), համայնքը պետք է ազատ լինի իր համայնքի ներսում հարկեր ու տուրքեր սահմանելու հարցում»<sup>177</sup>: Համայնքների ոչ անկախությունը անբաղաճում է ընտրական գործընթացների վրա, ինչն էլ իր հերթին՝ համայնքի ընդհանուր իրավիճակի:

Ըստ սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովի անդամների՝ ՏԻՄ-երի հետ կապված երկու կարևորագույն հարց պետք է ամրագրվեն սահմանադրորեն: Դրանք են՝ 1.ինքնակառավարման միջհամայնքային միավորումների ստեղծումը, համայնքային խոշորացման այլընտրանքային տարբերակի ներդրումը, և 2.տեղական ինքնակառավարման համահարթեցման հարցը, որով փոփոխության կենթարկվեն համայնքների սուբսիդավորման սկզբունքները: Ընդգծելով, որ հայեցակարգում այս հարցերի լուծման մեխանիզմներն ամբողջությամբ մշակված և ներկայացված չեն, գրեթե բոլոր հարցվողներն էլ դրական են արտահայտվել ինչպես համայնքների խոշորացման, այնպես էլ սուբսիդավորման կարգի վերանայման անհրաժեշտության շուրջ: «Կան փոքր համայնքներ, որտեղ փաստացի տեղական ինքնակառավարում տեղի չի ունենում: Չունեն ոչ ֆինանսական ռեսուրսներ, ոչ մարդկային, ոչ մնացած ռեսուրսները: Ուղղակի անիմաստ է դրանք պահել: Առաջարկը խոշորացումն է»<sup>178</sup>: Ըստ փորձագետների՝ խոշորացումը պետք է արվի տարածքային-աշխարհագրական դիրքով պայմանավորված: Խոշորացումը կնպաստի ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ու ծառայությունների մատչելիության բարձրացմանը: «Խոշոր տարածքային միավորները կունենան բոլոր ծառայությունները, մի քանի համայնքներ խոշորանալով՝ կունենան համատեղ բարիքի պատկերացում»<sup>179</sup>: Արդյունքում հնարավոր կլինի կամ համայնքի անդամների հարկային բեռը թեթևացնել, կամ՝ համայնքային հարկերից գոյացած բյուջեն համայնքի ներսում ծախսել: Ըստ ՏԻՄ գծով փորձագետներից մեկի՝ անհրաժեշտ է Սահմանադրության մեջ ամրագրել միջհամայնքային միավորների ձևավորման պարտադիրության սկզբունքը ևս, քանի որ գործող Սահմանադրությունում արդեն իսկ ամրագրված է կամավորության սկզբունքը:

Խոսելով համայնքների հնարավոր խոշորացման մասին, հարկ ենք համարում ներկայացնել այն ռիսկերը, որոնք կարող են առաջանալ խոշորացման արդյունքում՝

- Փոքր համայնքների փոշիացման վտանգ

<sup>177</sup> Իրավապաշտպան ՀԿ-ի ղեկավարի խոսքերից:

<sup>178</sup> ՏԻՄ գծով փորձագետի խոսքերից:

<sup>179</sup> ԱԺ պատգամավորի խոսքերից:

- Իշխանությունների հեռացում և օտարում բնակչությունից
- Ծառայությունների անհասանելիություն
- Անկատար ենթակառուցվածքներ՝ կապ, տրանսպորտ, ճանապարհներ և այլն:

Բացի այդ, վարչատարածքային առկա բաժանումը և ՏԻՄ մարմինների գործող համակարգը նոր-նոր է սկսել կայանալ, և հիմա վաղ է խոսել այն մասին, որ այդ համակարգը չունի զարգացման ներուժ: Գուցե խնդիր դրվեր զարգացնել այս համակարգը:

Տարածքային բաժանման նախընտրելի ձևի վերաբերյալ բնակչության շրջանում կատարված հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ գործող համակարգին՝ մարզ-համայնք, կողմ են քվարկել հարցվածների 40,2%-ը, 30,3 %-ը կողմ են շրջանային բաժանմանը, իսկ 29,4 %-ի համար միևնույն է, թե ինչ վարչատարածքային լուծում կտրվի<sup>180</sup>:

**Մենք կարծում ենք՝ այդ անտարբերությունը հիմնականում պայմանավորված է համայնքի և համայնքի բնակչի սոցիալ-տնտեսական անլուծելի թվացող ամենօրյա խնդիրներով, որի դեպքում դժվար է համոզում ձևավորել, որ վարչատարածքային նոր կառուցվածքը կլուծի այդ խնդիրները:**

Այն հարցին, թե **ինչպիսի երաշխիքների ամրագրումը կարող է նպաստել ՏԻՄ-երի անկախության ապահովմանը, փորձագետները պատասխանել են, որ լրացուցիչ երաշխիքների անհրաժեշտություն չկա, գործող սահմանադրությունում պարզապես պետք է աննշան փոփոխություններ կատարել: «Եղածն արդեն երաշխիք է, մնացածը պետք է օրենսդրությունից երևա, թե որքանով է ապահովվում այդ ինքնուրույնությունը: Պարզապես կարելի է սահմանադրությունում մի նախադասությամբ ֆիքսել, որ ՏԻՄ-ը երաշխավորվում է և այն անկախ մարմին է»<sup>181</sup>: Ըստ փորձագետների՝ անհրաժեշտ է պարզապես հետևել Հայաստանի կողմից վավերացված Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիայի պահանջներին: Դրա սկզբունքների կենսագործումը թույլ կտա լուծել ոլորտին առնչվող բոլոր խնդիրները:**

Հարկ է նկատել նաև, որ Խարտիան ամրագրում է նաև տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության իրավունքը, ինչը ՀՀ-ում չի ապահովվում: **Հետևաբար կիսում ենք այն փորձագետների կարծիքը, որ խնդիրը ոչ թե Սահմանադրության փոփոխությունն է, այլ ուղղակի պետք է իրագործել ստանձնած միջազգային պարտավորությունները և ապահովել համայնքի բնակչի մասնակցությունը համայնքի կառավարմանը:** Մինչդեռ բնակչության շրջանում կատարված հարցումները ցույց են տալիս, որ հարցվածների 94,5 % երբեք չի մասնակցել ավագանու նիստերին և միայն 5,5 %-ն է երբևէ մասնակցել<sup>182</sup>: Ընդ որում ավագանու նիստերին չմասնակցելու պատճառները տարբեր են

<sup>180</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 49:

<sup>181</sup> ՏԻՄ գծով փորձագետի խոսքերից:

<sup>182</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 53:

եղել, գերակշիռ դեպքում՝ 56,6% հետաքրքրություն չունենալու պատճառով, 23,0% դեպքում ավագանու նիստերի մասին տեղյակ չլինելու պատճառով, 19,1 %-ը չի մասնակցել, քանի որ չի իմացել նման իրավունքի մասին, իսկ 1,0%-ը ունեցել է մասնակցելու անհաջող փորձ՝ թույլ չեն տվել մասնակցել<sup>183</sup>:

**Խոսելով տեղական ինքնակառավարման համակարգի վերաբերյալ հայեցակարգում ներկայացված դրույթների մասին՝** հարցվողները նշել են, որ հայեցակարգում բացակայում են *դրույթները մարզերում և Երևանում երկնակարգակ կառավարման համակարգի վերաբերյալ*: Բացի այդ, ըստ նրանց, անհրաժեշտ է Սահմանադրության մեջ ֆիքսել ՏԻՄ-երի մի քանի լիազորություններ. *«Օրինակ՝ տեղական հարկերի սահմանման մասով այսօրվա Սահմանադրությունում շատ անորոշ ձևով է նշված: Հստակ պետք է սահմանվի, որ տեղական հարկերի դրույթաչափերը սահմանում են ՏԻՄ-երը»*<sup>184</sup>: Բացի այդ՝ անհրաժեշտ է, որպեսզի սահմանադրորեն ամրագրվի, որ կենտրոնական և տեղական կառավարման մակարդակներում գտնվող իշխանության մարմինների միջև պետք է լինեն հավասարության հարաբերություններ:

Հարցվողներն անրադարձել են նաև համայնքի ղեկավար և ավագանի փոխհարաբերությունների հարցերին: Ըստ նրանց՝ այն հանգամանքը, որ ավագանու՝ որպես տեղական մակարդակում օրենսդիր մարմնի նիստերը վարում է համայնքի ղեկավարը (ով խորհրդակցական ձայնի իրավունք ունի), դա թուլացնում է ներկայացուցչական մարմնին, քանի որ շատ դեպքերում համայնքի ղեկավարն ավագանուն թելադրում է իր կամքը:

Համայնքի ղեկավարից ավագանու կախվածության վերաբերյալ հարց է ուղղվել նաև քաղաքացիներին և նրանից ստացված պատասխանները ևս հավաստում են, որ ավագանու իրական անկախություն գոյություն չունի: Հարցվածների 58,4%-ը գտել է, որ ավագանին չունի բավարար անկախություն համայնքի ղեկավարից, 17,1%-ը գտել է որ անկախ է, իսկ 24,5%-ը դժվարացել է հարցին պատասխանել<sup>185</sup>:

Փորձագետների գնահատմամբ՝ խնդրի լուծումը հնարավոր է համայնքների խոշորացման արդյունքում՝ համայնքների ղեկավարների և ավագանու՝ այլ սկզբունքներով ընտրվելու պարագայում: Հարցվողների կողմից առաջ է քաշվել այն գաղափարը, որ անհրաժեշտ է վերանայել ՏԻՄ ղեկավարի՝ գյուղապետի և ավագանու անդամներին առաջադրվող պահանջները: Ըստ նրանց՝ գյուղապետի ընտրության համար ներկայացվող պահանջները պետք է լինեն ոչ թե պատգամավորին ներկայացվող պահանջների նման՝ տարիք, տվյալ համայնքում ապրած տարիներ, այլ կարևորվի փորձը, ներկայացված ծրագիրը, պրոֆեսիոնալիզմը, կրթությունը: Տվյալ դեպքում անկարևոր է դառնում տվյալ համայնքից լինելը, այլ լավ ծրագիր ներկայացնելը: Այսինքն գյուղապետը ոչ թե պաշտոն զբաղեցնող անձ

<sup>183</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 54:

<sup>184</sup> ՏԻՄ գծով փորձագետի խոսքերից:

<sup>185</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 52:

է, այլ որոշակի ծրագիր ներկայացրած ու շահած «մենեջեր», ով ներկայացված ծրագրի ժամկետում պետք է ղեկավարի այդ ծրագիրը: Գյուղապետի աշխատանքը պետք է լինի գուտ մենեջերական աշխատանք: Ինչ վերաբերում է ավագանու անդամ դառնալու պահանջներին՝ խիստ անհրաժեշտ է, որպեսզի վերանայվի տարիքային ցենզը: Ըստ հարցվողների՝ ավագանու անդամը չպետք է շատ երիտասարդ լինի, նա պետք է փորձ ունենա, համայնքի պատմություն ու զարգացման միտումներ իմանա, տիրապետի ռեսուրսների: Տվյալ մոդելով գյուղապետը պետք է լինի նշանակովի՝ շրջանային խորհրդի կողմից (որը մի շարք ներկայացված ծրագրերից ընտրություն է կատարել), իսկ ավելի բարձր՝ շրջանային մակարդակի ղեկավարը՝ ընտրովի:

ՏԻՄ-երի ձևավորման մասին բնակչության շրջանում կատարված հարցումները ցույց են տվել, որ հարցվածների գերակշիռ մեծամասնությունը կողմ է, որպեսզի նրանք լինեն ընտրովի<sup>186</sup>: Գյուղապետի ընտրովիությանը կողմ է հարցվածների 92,2%-ը, իսկ նշանակովիությանը՝ 7,4%-ը: Քաղաքապետի ընտրովիությանը կողմ է հարցվածների 91,2%-ը, իսկ նշանակովիությանը՝ 7,2%-ը: Թաղապետի ընտրովիությանը կողմ է հարցվածների 92,2%-ը, իսկ նշանակովիությանը՝ 7,8%-ը: Մարզպետների հարցում մի փոքր տոկոսային աճ է նկատվում նշանակովիության սկզբունքի դեպքում՝ կազմելով 14,6%, ընտրովիության 89,3%-ի դիմաց: Այն հարցին թե ով/որ մարմինը պետք է նշանակի մարզպետին՝ հարցվածների 46,3%-ը պատասխանել է Ազգային ժողովը, 21,2%-ը՝ վարչապետը, 28,4%-ը ՀՀ նախագահը<sup>187</sup>:

Խոսելով այն մասին, թե որքանով են տեղյակ համայնքի բնակչները ՏԻՄ-երից, հարցախույզի ընթացքում քաղաքացիներին հարց է տրվել՝ ճանաչում եք ձեր համայնքի ավագանու անդամներին: Հարցվածների միայն 16,3%-ն է պատասխանել, որ ճանաչում է բոլորին, 32,8%-ը ճանաչում է մի մասին, իսկ 50,9% -ը՝ չի ճանաչում ոչ մեկին<sup>188</sup>:

<sup>186</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 47:

<sup>187</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 48:

<sup>188</sup> Տես Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ, Գծապատկեր 51:

## Մաս 2. Քանակական հետազոտության արդյունքներ


### Սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը

Բնակչության հետ անցկացված քանակական հարցազրույցների ընթացքում նույնպես պարզաբանվել են Սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտության վերաբերող հարցեր:

#### Իրազեկվածությունը սահմանադրական փոփոխություններից

Նախ, փորձել ենք պարզել, թե որքանով են բնակիչները իրազեկված իրականացվող փոփոխությունների նախաձեռնությունից: Արդյունքները ներկայացված են գծապատկերներով:


Գծ.1. Իրազեկվածությունը սահմանադրական բարեփոխումներից



608 հոգի պատասխանել է այն հարցին, թե որտեղից են տեղեկացել Սահմանադրական փոփոխությունների նախաձեռնության մասին:

Հենք՝ 608

Գծ.2. Իրազեկման աղբյուրները



Այն հարցին, թե որքանով են վստահում իշխանությունների կողմից նախաձեռնված սահմանադրական բարեփոխումների գործընթացին, պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ:

Հենք՝ 1300


Գծ. 3. Սահմանադրական բարեփոխումների գործընթացի նկատմամբ վստահության աստիճանը



Այնուհետև հարցվողները պատասխանել են, թե ըստ իրենց՝ կա՞րողյոք անհրաժեշտություն փոփոխելու ներկայիս գործող Սահմանադրությունը:

Հենք՝ 1300


Գծ. 4. Սահմանադրությունը փոփոխելու անհրաժեշտությունը



781 հոգի, ովքեր նշել են, որ կա անհրաժեշտություն, պատասխանել են այն հարցին, թե ինչ չափով պետք է լինեն փոփոխությունները: Պատասխանները ներկայացված են Գծ.5-ում:

Հենք՝ 781

Գծ. 5. Անհրաժեշտ փոփոխությունների չափը




Հարցվողներին տրվել է հարց, թե իրենց կարծիքով, ո՞վ պետք է նախաձեռնի (սկսի) Սահմանադրության փոփոխության գործընթացը:



Հենք՝ 149


Գծ. 6. Սահմանադրական փոփոխությունների ցանկալի նախաձեռնողներն ըստ հարցվողների



Այն հարցին, թե ինչպե՞ս պետք է ժողովուրդը (հասարակական կազմակերպությունները և ակտիվ խմբերը) մասնակցի Սահմանադրական բարեփոխումների գործընթացին, հարցվողները պատասխանել են հետևյալ կերպ.

Հենք՝ 1300


Գծ. 7. Մասնակցության հնարավոր ձևերը



Այնուհետև պարզել ենք, թե հարցվողները կցանկանային արդյոք մասնակցել Սահմանադրական բարեփոխումների հետ կապված հանրաքվեի:


Հենք՝ 1300

Գծ. 8. Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեին մասնակցելու ցանկությունը



Այն հարցին, թե ըստ նրանց, եթե փոփոխվի ՀՀ Սահմանադրությունը, երկրի առջև ծառայած խնդիրները ինչ չափով կլուծվեն, հարցվողների պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.


Գծ. 9. Փոփոխությունների հնարավոր ազդեցությունը երկրի խնդիրների լուծման վրա



## Մարդու իրավունքներ

Հարցազրույցների ընթացքում հարցվողները պատասխանել են մարդու իրավունքներին առնչվող մի շարք հարցերի: Այն հարցին, թե ըստ իրենց, որո՞նք են պատճառները, որ մարդու իրավունքները պաշտպանված չեն մեր երկրում, հարցվողները պատասխանել են հետևյալ կերպ (յուրաքանչյուրը հնարավորություն է ունեցել տալու մինչև երեք պատասխան):


Գծ. 10. Իրավունքների չպաշտպանվածության պատճառները



Հարց է հնչեցվել ազգային, կրոնական և սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանվածության և արտոնությունների վերաբերյալ: Պատասխանները ներկայացված են Գծապատկեր 11-ում:

Հենք՝ 1300


Գծ. 11. Փոքրամասնությունների իրավունքներ և արտոնություններ



Հարցվողների վերաբերմունքը հաշմանդամների իրավունքների հանդեպ հետևյալն է:

Հենք՝ 1300


Գծ. 12. Հաշմանդամների իրավունքներ



Ծանր հանցագործություն կատարած անձանց հանդեպ հարցվողներն ունեն հետևյալ վերաբերմունքը:

Հենք՝ 1300

Գծ. 13. Ծանր հանցագործություն կատարած անձանց իրավունք




Խոսքի ազատության հետ կապված հարցին հարցվողների կարծիքները հետևյալն է:

**Հենք՝ 1300**

**Գծ. 14. Խոսքի ազատության իրավունք**

Յուրաքանչյուր ոք պետք է ունենա խոսքի ազատության իրավունք՝ այն սարսափալուրտ տեղեկատվության ցանկացած միջոցով



Պետք է սահմանափակել որոշակի տեղեկատվության տարածումը

«Եթե Դուք լինեիք երկրի ղեկավար, թույլ կտայի՞ք, որպեսզի երկրում տեղի ունենային հանրահավաքներ, բողոքի ցույցեր և այլն» հարցին հարցվողները պատասխանել են՝

**Հենք՝ 1300**

**Գծ. 15. Երթեր, ցույցեր իրականացնելու իրավունք**

Այո, եթե մարդիկ ունեն բողոք, պետք է սարսափալուրտ



Ոչ, պետք է ճնշել ցանկացած շարժում և ընդվզում


Դժվ էր պատ

Հաջորդ հարցը, որին պատասխանել են հարցվողները եղել է «Ի՞նչ էք կարծում, Հայաստանում քանի՞ կրոնական կազմակերպություն պետք է գոյություն ունենա»:

**Հենք՝ 1300**

**Գծ. 16. Կրոնի ազատության իրավունք**

Միայն մեկ՝ Հայ Առաքելական Եկեղեցի




Հայ Առաքելական, Կաթոլիկ և Ուղղափառ

Քանիք որ կան ներկայումս, դա նորմալ է

Դժվ էր պատ

Ըստ հարցումների արդյունքների՝ հարցվողների 49%-ը համարել է, որ Հայաստանում չի հարգվում անձնական ու ընտանեկան կյանքի իրավունքը:


Գծ. 17. Անձնական և ընտանեկան կյանքի իրավունք



### Կառավարման համակարգ

Կառավարման համակարգին առնչվող հարցերի թվում հարցվողները պատասխանել են հետևյալ հարցին. «Դուք կցանկանայի՞ք, որպեսզի ազգի համար բախտորոշ հարցերը (օրինակ՝ Մաքսային միությանը կամ Եվրամիությանը Հայաստանի Հանրապետության միանալը) որոշվեին...»


Գծ. 18. Երկրի համար վճռորոշ խնդիրների լուծման ցանկալի պատասխանատուներն ըստ հարցվողների



Ըստ հարցվողների՝ ժողովուրդն ավելի լավ է ներկայացված է խորհրդարանական կառավարման համակարգում (34.8%), ապա՝ նախագահականում՝ 28.2%: Հետաքրքրական է, որ տվյալ հարցին դժվարացել է պատասխանել հարցվողների 27.9%-ը:

Հենք՝ 1300


Գծ. 19. Ժողովրդի ներկայացվածությունը կառավարման համակարգերում



Իսկ այն հարցին, թե ինչպիսի՞ն կուզենայիք լինել մեր երկրի կառավարումը, հարցվողները պատասխանել են հետևյալ կերպ.


Հենք՝ 1300

Գծ. 20. Երկրի կառավարման ցանկալի համակարգը



«Համաձայն էք, որ ներկայումս Հայաստանում նախագահի, խորհրդարանի և կառավարության իշխանությունները միատեղված են (քաղաքական մենիշխանություն է)» հարցի պատասխաններն են՝


Հենք՝ 1300



Իսկ թե հարցվողներն ինչպիսի՞ն կուզենային տեսնել նախագահի, խորհրդարանի և կառավարության հարաբերակցումը, հարցվողները պատասխանել են.

Հենք՝ 1300


Գծ.22. Կառավարման օղակների ցանկալի հարաբերակցումն ըստ հարցվողների



Հարցվողները պատասխանել են նաև հետևյալ հարցին. «Ի՞նչ էք կարծում, Հանրապետության նախագահը պետք է լինի որևէ կուսակցության ներկայացուցի՞չ, թե՞ պետք է լինի անկուսակցական»:

Հենք՝ 1300

Գծ.23. Նախագահի քաղաքական կողմնորոշումը



Իսկ թե ով պետք է ընտրի Հանրապետության նախագահին, հարցվողների կարծիքները բաշխվել են հետևյալ կերպ:

Հենք՝ 1300


Գծ.24. Նախագահ ընտրելու իրավունքը



Այն հարցին, թե ով պետք է ընտրի Հանրապետության վարչապետին և ձևավորի կառավարություն, հարցվողները պատասխանել են՝

Հենք՝ 1300


Գծ.25. Կառավարության ընտրություն և ձևավորում



Հարցազրույցների ընթացքում փորձել ենք պարզել, թե որքանով են հարցվողները բավարարված մի շարք պետական կառույցների աշխատանքից: Ստացվել է հետևյալ պատկերը՝

Հենք՝ 1300

Գծ.26. Բավարարվածությունը պետական ինստիտուտներից






Իսկ այն հարցին, թե որքանով են նախագահից անկախ հետևյալ կառույցները, հարցվողների պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.

Հենք՝ 1300


Գծ.27. Պետական կառույցների անկախությունը նախագահից



Ոստիկանների դերի վերաբերյալ հարցվողների կարծիքները բաշխվել են հետևյալ կերպ.


Հենք՝ 1300

Գծ.28. Ոստիկանության դերն ըստ հարցվողների




## Ընտրական իրավունքը և ընտրական համակարգ


Այն հարցին, թե արդյոք հարցվողները մասնակցել են վերջին նախագահական ընտրություններին, ստացվել են հետևյալ պատասխանները.



Թե որքանով են Հայաստանում ընտրությունների արդյունքները համապատասխանում իրականությանը, հարցվողները պատասխանել են՝




Հարցման ընթացքում տրվել է հետևյալ հարցը. «Արտասահմանում բնակվող/գտնվող ՀՀ քաղաքացին կարո՞ղ է (կամ պետք է) մասնակցել Հայաստանում տեղի ունեցող ընտրություններին»: Պատասխաններն են՝



Այն հարցին, թե զինձառայողները և դատապարտվածները պետք է մասնակցեն ընտրություններին, հարցվողները պատասխանել են.

Հենք՝ 1300


Գծ.32. Զինձառայողների և ազատագրվածների ընտրելու իրավունք



Հարցվողներին տրվել է հարց. «Կուզենա՞ք, որ ԱԺ ընտրություններն ու նախագահի ընտրությունները տեղի ունենան նույն օրը»: Պատասխաններն են՝

Հենք՝ 1300


Գծ.33. ԱԺ և նախագահի ընտրությունները մեկ օրում անցկացնելու նախընտրությունն ըստ հարցվողների



Իսկ այն հարցին, թե ինչպես պետք է ընտրել ԱԺ պատգամավորներին մեծամասնակա՞ն, թե՞ համամասնական կարգով, հարցվողների պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.


Հենք՝ 1300

Գծ.34. ԱԺ պատգամավորներին ընտրելու ցանկալի կարգն ըստ հարցվողների




Հարցման ընթացքում փորձել ենք պարզել կրոնական առաջնորդների դերը քաղաքական, մասնավորապես ընտրական գործընթացներում: Տրվել է հետևյալ հարցը. «Կա տեսակետ, որ կրոնական առաջնորդները պետք է ավելի ներգրավված լինեն քաղաքականության մեջ, մինչդեռ ուրիշները կարծում են, որ նրանք պետք է խուսափեն աշխարհիկ գործերին խառնվելուց և կենտրոնանան կրոնական ու բարոյական խնդիրների վրա: Ո՞րն է ավելի ընդունելի Ձեր կողմից»: Հարցվողները պատասխանել են

Հենք՝ 1300 **Գծ.35. Կրոնական առաջնորդների ներգրավվածության ցանկալիությունը քաղաքականության մեջ**



Իսկ թե որքանով կարող է ազդել համայնքի կրոնական առաջնորդի խորհուրդը քաղաքացու ընտրության վրա՝ աջակցելու որևէ քաղաքական կուսակցության կամ թեկնածուի, պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.


Հենք՝ 1300 **Գծ.36. Կրոնական առաջնորդի հնարավոր ազդեցությունը հարցվողների ընտրության իրավունքի վրա**



## Դատական համակարգ

Դատական համակարգի առնչությամբ հարցվողները պատասխանել են մի շարք հարցերի: Մասնավորապես դատական համակարգի արդարության հարցին («Ձեր կարծիքով Հայաստանում դատարաններն արդա՞ր են որոշում կայացնում») հարցվողներից ստացված պատասխաններն են.


Գծ. 37. Դատական համակարգի արդար որոշումներ կայացնելը



Այն հարցին, թե հարցվողներն արդյոք կուզենային, որպեսզի ՀՀ-ում գործեին երդվյալ ատենակալների դատարաններ, պատասխանել են՝


Հենք՝ 1300

Գծ.38. Ցանկությունը ՀՀ-ում ունենալ երդվյալ ատենակալների դատարան



Իսկ թե որքանով են հարցվողները վստահում դատարաններին, ստացվել է հետևյալ պատկերը.


Գծ.39. Դատարանների նկատմամբ վստահությունը



Դատական համակարգի թերությունների շուրջ հարցվողների կարծիքներն են

**Գծ.40. Դատական համակարգի հիմնական**

**թերությունը**




Հենք՝ 1300

**Հանրաքվեի սահմանադրական երաշխիքները**

Հարցերի հաջորդ խումբը, որոնց պատասխանել են հարցվողները՝ վերաբերել է հանրաքվեին: Ըստ հարցվողների՝ հանրաքվեն

Հենք՝ 1300


Գծ.41. Հանրաքվեների անհրաժեշտությունը



Հանրաքվեին մասնակցելը հարցվողները համարել են՝

Հենք՝ 1300


Գծ.42. Հանրաքվեների նկատմամբ վերաբերմունքը



Այն հարցին, թե ինչ հարցեր պետք է դրվեն հանրաքվեի, հարցվողները պատասխանել են.

Հենք՝ 1300


Գծ.43. Հանրաքվեի դնելու նախընտրելի հարցերն ըստ հարցվողների



Իսկ թե ինչպիսի հարցերի շուրջ ժողովուրդը պետք է իրավունք ունենա հանրաքվե նախաձեռնելու, հարցվողները պատասխանել են.


Հենք՝ 1300

Գծ.44. Ժողովրդի կողմից հանրաքվեների նախաձեռնման համար ցանկալի հարցերի շրջանակը




Հանրաքվեների նախընտրելի նախաձեռնողների վերաբերյալ հարցվողների կարծիքը հետևյալն է.

**Գծ.45. Հանրաքվեների նախընտրելի նախաձեռնողներն ըստ հարցվողների**



Հարցվողները պատասխանել են նաև հետևյալ հարցին. «Ըստ Ձեզ՝ Մաքսային միությանը միանալու հարցը պետք է որոշվի նախագահի, կառավարության, Ազգային Ժողովի կողմից, թե՞ հանրաքվեի միջոցով»: Պատասխաններն են՝

**Գծ.46. ՄՄ միանալու համար ցանկալի որոշում ընդունող օղակն ըստ հարցվողների**






## Տեղական ինքնակառավարման մարմինները

Հարցվողները պատասխանել են այն հարցին, թե ինչպես պետք է ընտրվեն գյուղապետերը, քաղաքապետերը, թաղապետերը և մարզպետերը: Այնուհետև այն հարցվողները, ովքեր գտել են, որ մարզպետերը պետք է լինեն նշանակովի, պատասխանել են նաև այն հարցին, թե ով պետք է նշանակի մարզպետերին: Ստացվել է հետևյալ պատկերը:


Հենք՝ 1300

Գծ.47. ՏԻՄ մարմինների ձևավորման նախընտրելի ձևերն ըստ հարցվողների




Գծ.48. Մարզպետերի նշանակման համար նախընտրելի օղակներն ըստ հարցվողների

Հենք՝ 190



Այն հարցին, թե տարածքային բաժանման որ ձևին են հարցվողները կողմ, ստացվել են հետևյալ պատասխանները:


Գծ.49. Տարածքային բաժանման նախընտրելի ձևը հարցվողների համար



Հարցման ընթացքում հարցվողները պատասխանել են հետևյալ հարցին. «Արդյո՞ք Ձեր համայնքի հիմնախնդիրները ԱԺ-ում բարձրացվում են Ձեր համայնքից ընտրված թեկնածուի կողմից»: Պատասխանները ներկայացված են ստորև.

Հենք՝ 1300


Գծ.50. Համայնքի հիմնախնդիրների բարձրացումը ԱԺ-ում



Այն հարցին, թե արդյոք հարցվողները ճանաչում են իրենց համայնքի ավագանու անդամներին, ստացվել են հետևյալ պատասխանները.

Հենք՝ 1300


Գծ.51. Համայնքի ավագանու անդամների ճանաչելիության աստիճանը



Ըստ հարցվողների 58.4%-ի՝ համայնքի ավագանին չունի համայնքի ղեկավարից անկախություն.

Հենք՝ 1300


Գծ.52. Համայնքի ավագանու անկախությունն համայնքի ղեկավարից ըստ հարցվողների



Այն հարցին, թե արդյոք երբևէ մասնակցել են համայնքի ավագանու նիստերին, հարցվողների 94.5%-ը տվել է ժխտական պատասխան: Վերջիններս պատասխանել են նաև այն հարցին, թե որոնք են չմասնակցելու պատճառները: Պատկերը հետևյալն է՝


Հենք՝ 1300

Գծ.53. Ավագանու նիստերին մասնակցությունը



Հենք՝ 1228


Գծ.54. Ավագանու նիստերին չմասնակցելու պատճառները



Հարցվողները պատասխանել են նաև հետևյալ հարցին. «Ի՞նչ եք կարծում, եթե Հայաստանում մի քանի համայնքներ միավորվեն ու համայնքները խոշորացվեն, ավագանու դերը...»

Հենք՝ 1228

Գծ.55. Ավագանու դերի փոփոխությունը համայնքների խոշորացման դեպքում




## Ժողովրդավարություն

Հետազոտության ընթացքում քննարկվել են նաև ժողովրդավարությանը վերաբերող հարցեր: Այն հարցին, թե ինչ են հարցվողները հասկանում՝ ժողովրդավարությունն ասելով, ստացվել են հետևյալ պատասխանները.

Հենք՝ 1300


Գծ.56. Ժողովրդավարության ընկալումը հարցվողների շրջանում



Իսկ թե որքանով է Հայաստանը ժողովրդավար երկիր՝


Հենք՝ 1300

Գծ.57. Հայաստանի ժողովրդավարական լինելը



Այս ամենին զուգահեռ, այնուամենայնիվ, հարցվողների 69.2%-ը համարել, որ Հայաստանում պետք է լինի ոչ թե ժողովրդի իշխանություն, այլ՝ անհրաժեշտ է ուժեղ առաջնորդ:


Գծ.58. Ժողովրդի իշխանություն, թե ուժեղ առաջնորդ



Հենք՝ 1300

Այն հարցին, թե արդյոք իշխանություններին հետաքրքրում է հասարակ քաղաքացիների կարծիքը, հարցվողները պատասխանել են՝

Գծ.59. Իշխանությունների համար հասարակության կարծիքի կարևորությունն ըստ հարցվողների




Հենք՝ 1300

Հարցվողների՝ քաղաքականությամբ հետաքրքրվելու աստիճանը հետևյալն է

Հենք՝ 1300


Գծ.60. Հարցվողների քաղաքականությամբ հետաքրքրվելու աստիճանը



Իսկ այն հարցին, թե որքանով կարող են քաղաքացիներն ազդել քաղաքական գործընթացների, որոշումների վրա, հարցվողները պատասխանել են

Հենք՝ 1300


Գծ.61. Քաղաքացիների՝ քաղաքական որոշումների վրա ազդելու չափին ըստ հարցվողների



## Բավարարվածություն երկրի սոցիալ-տնտեսական վիճակից


Հարցման ընթացքում փորձել ենք պարզել հարցվողների բավարարվածության աստիճանը երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակից: Մի շարք հարցերից ներկայացնում ենք առավել ուշագրավները: Այն հարցին, թե արդյոք Հայաստանը ընթանում է ճիշտ, թե սխալ ուղով, հարցվողները պատասխանել են՝

### Գծ.Ա. Հայաստանի զարգացման ուղղությունը




«Ճիշտ» կամ «սխալ» պատասխանողները հիմնավորել են իրենց պատասխանները՝ մատնանշելով հետևյալ հանգամանքները.

### ԳՃ.Բ. Ճիշտ ուղղությամբ ընթանալու պատճառները




### ԳՃ.Գ. Միսալ ուղղությամբ ընթանալու պատճառները



Այն հարցին, թե ինչ են հարցվողները կարծում, ի՞նչ պետք է արվի առաջնահերթ, որպեսզի լուծվեն երկրի առջև ծառայած խնդիրները, ստացվել են հետևյալ պատասխանները.


**ԳՃ.Դ. Լուծման ուղիները**



**Սոցիալ-ժողովրդագրական տվյալներ**

**Հենք՝ 1300**


**ԳՃ.62. Հարցվողների սեռը**






Հենք՝ 1300

Գծ.63. Հարցվողների տարիքը




Գծ.64. Հարցվողների կրթությունը




Հենք՝ 1300

Գծ.65. Հարցվողների ընտանեկան սոցիալ-տնտեսական դրությունը




Հենք՝ 1300

Գծ.66. Հասարակության որևէ խավին պատկանելի ըստ հարցվողների




Հենք՝ 1300

Գծ.67. Հարցվողների ընտանեկան միջին ամսական եկամուտը




Հենք՝ 1300


Գծ.68. Եկամուտ ապահովող աշխատանքի առկայությունը




Գծ.69. Չափաատելու պատճառները



Գծ.70. Հարցվողների գրադավածության ոլորտը



Գծ. 71. Հարցվողների աշխատանքի բնույթը



## ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով իրականացված որակական և քանակական հետազոտությունների արդյունքները՝ նշենք հետևյալ կարևորագույն բացահայտումները.

- Իշխանությունների համար առաջնահերթությունը վստահության ճգնաժամը հաղթահարելու խնդիրն է, իսկ սահմանադրական փոփոխությունները ժամանակավրեպ են այնքանով, որքանով չկա ձևավորված հասարակական պահանջ:
- Անվստահություն է առաջացնում Սահմանադրության փոփոխությունների գործընթացով զբաղվող Հանձնաժողովի կազմը:
- Անհասկանալի են մնում Սահմանադրության փոփոխության պատճառները և իրական նպատակները:
- Փորձագետների մի մասը բացասաբար է վերաբերվում այն փաստին, որ Հանձնաժողովի ստեղծումը նախաձեռնվել է նախագահի կողմից և անդամների մեծամասնությունը պետական պաշտոնյաներ են:
- Փորձագետների մեծամասնությունը կարծում է, որ սահմանադրական բարեփոխումները չեն կարող հաղթահարել երկրի առաջ ծառայած խնդիրները կամ մասնակիորեն կլուծեն որոշ խնդիրներ:
- Փորձագետների մեծամասնությունը առկա խնդրի լուծումը տեսնում են ռեժիմի, իշխող կարգերի և/կամ հասարակական իրավագիտակցության փոփոխման մեջ:
- Փորձագետների ճնշող մեծամասնությունը հակված է այն կարծիքին, որ սահմանադրական բարեփոխումները չեն կարող լիարժեքորեն լուծել գործող սահմանադրության թույլ կողմերը:
- Ըստ որոշ փորձագետների՝ Սահմանադրական փոփոխությունները կարող են դրական արդյունք ունենալ հետևյալ խնդիրների լուծման գործում.
  - Իշխանությունների տարանջատման, հակակշռման, հավասարակշռման խնդիրները,
  - իշխանության իրավունքով սահմանափակման խնդիրները,
  - ընտրական ինստիտուտների նկատմամբ բացասական վերաբերմունքի և հավատի բացակայության խնդիրը,
  - դատական իշխանության անկախության խնդիրը,
  - ընտրակեղծիքների վերացում/քչացում՝ պառլամենտական համակարգի ներդրման շնորհիվ,
  - իրավունքի գերակայության սկզբունքի ապահովման խնդիրը,
  - արտաքին և ներքին խնդիրներ, սկսած սոցիալ-տնտեսականից, ավարտած քաղաքականով:

- Փորձագետների մեծամասնությունը կարծում է, որ սահմանադրական փոփոխությունների արդյունքում կշահի նա, ով նախաձեռնել է սահմանադրական փոփոխությունները, այսինքն՝ իշխանությունները:
- Հանրային մասնակցության ապահովման հարցի վերաբերյալ որոշ փորձագետներ կարծիք են հայտնել, որ Սահմանադրությունը անհամեմատ ավելի բարդ փաստաթուղթ է, և դա ամեննին էլ հասարակության խելքի բանը չէ, այնինչ այլոք այն կարծիքին են, որ քաղաքացիական գիտակցությունը մեր հասարակության, ժողովրդի մեջ, ցավոք սրտի, չկա և այս պարագայում փորձագետները տեսնում են փորձագիտական հանրության մոբիլիզացիայի կարիք:
- Թեև Սահմանադրության հայեցակարգի նախագիծում վեր են հանված ՀՀ-ում առկա գրեթե բոլոր հիմնախնդիրները, սակայն դրանց հնարավոր լուծումները խիստ անորոշ են, ուստիև բխվում են փորձագետների կարծիքները:
- Հայեցակարգի նախագծով ներկայացված են այն բոլոր թերությունները, որոնք բացահայտվել են գործող սահմանադրության կիրառության ընթացքում, սակայն սահմանադրության նախագծի տեքստի բացակայության պարագայում միանշանակ չենք կարող պնդել, որ բարեփոխումների արդյունքում դրանք կշտկվեն:
- Սահմանադրության ամբողջական փոփոխությունը պարունակում է որոշ ռիսկեր, այդ թվում՝ պետական ապարատի աշխատանքի կազմալուծում, անկայունություն, ինչպես նաև մարդկային և նյութական միջոցների վատնում:
- Ամփոփելով փորձագետների պատասխանները «Իրավունքի գերակայություն» եզրույթի ներքո հարկավոր է հասկանալ. ա) իրավունքի առաջնայնություն սոցիալական այլ կարգավորիչների նկատմամբ, բ) օրենքի՝ որպես իրավունքի արտահայտման ձևի, համապատասխանությունն իրավունքին, դրա բուն էությանը:
- Փորձագետների մեծամասնությունը գտել է, որ Սահմանադրության մակարդակով իրավունքների անմիջական գործողությունն ապահովելու համար հավելյալ երաշխիքների ապահովման կենսական անհրաժեշտություն չկա, ներկայումս ամրագրված երաշխիքները բավարար են՝ դրանք կիրառելու ցանկություն և կամք ունենալու պարագայում:
- Ի պատասխան հայեցակարգային այն պնդմանը, ըստ որի մարդու ազատությունները, իրավունքները չեն գործում և պետք է ապահովել դրանց անմիջական գործողությունը, փորձագետները հիմնականում համակարծիք էին այն առումով, որ ազատությունների և իրավունքների անմիջական ապահովումը հնարավոր է նաև գործող սահմանադրության պարագայում:
- Ըստ փորձագետների հետևյալ գործոնները հանգեցնում են մարդու իրավունքների և ազատությունների անմիջապես չգործելուն.
  - քաղաքացիական գիտակցության ցածր մակարդակը,
  - քաղաքական իրականությունը, երբ մարդու իրավունքների պաշտպանությունը որպես արժեք առաջնային չէ,
  - մշակութային և քաղաքակրթական խնդիրներ,

➤ այն իրավիճակը, որ գործադիր և օրենսդիր իշխանությունը լեգիտիմ չեն:

- Այն հարցին թե արդյո՞ք փորձագետները գտնում են որ կա անհրաժեշտություն իրավունքների, ազատությունների և պարտականությունների բովանդակային, կառուցվածքային և խմբագրական հստակեցումներ իրականացնել, կարծիքները կլիսվեցին. փոքրամասնությունը պնդել է, որ անհրաժեշտություն կա, սակայն միանշանակ ընդգծելով, որ դրանք էական ազդեցություն չեն կարող ունենալ, այնինչ մեծամասնությունը պնդում է, որ նման անհրաժեշտություն չկա:
- Փորձագետների մեծամասնությունը գտնում է, որ իրավունքների սահմանափակումները պետք է նախատեսվեն սահմանադրական մակարդակում:
- Որոշ փորձագետներ գտնում են, սակայն, որ բոլոր իրավունքներն էլ պատշաճ կերպով ներկայացված են մարդու իրավունքներ բաժնում:
- Կյանքի իրավունքի հետ կապված հարցվածների տեսակետները համընկնում են այն առումով, որ թեև մահապատիժը վերացվեց, սակայն դրանով չլուծվեց կյանքի իրավունքի ապահովման հարցը:
- Ներպետական օրեսդրությամբ սահմանված խոշտանգման ձևակերպումը չի համապատասխանում ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման դրույթներին:
- Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի, անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի պաշտպանվածության հարցին անդրադառնալով՝ հարցվածները հիմնականում շեշտել են, որ կարևորը իրավական ձևակերպումը չէ, այլ գործող պրակտիկան:
- Արդար դատաքննության առնչությամբ փորձագետները կարծում են, որ դատական համակարգը պետք է անկախ լինի ամբողջությամբ, ընդհանուր առմամբ լինի մրցակցային, որպեսզի ապահովի անմեղության կանխավարկածի և մրցակցության սկզբունքի իրացումը ամբողջ ծավալով:
- Արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքի ապահովման հարցի հետ կապված կան որոշակի խնդիրներ կապված հանրային պաշտպանի ինստիտուտի, որակյալ փաստաբանական ծառայությունների և անձին ազատագրկման առաջին իսկ պահից պաշտպանի ծառայություններից օգտվելու հնարավորության առնչությամբ:
- Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի հարցի վերաբերյալ փորձագետների տեսակետները հիմնականում համընկնում են այն առումով, որ թեև սահմանադրությամբ հռչակված է, որ եկեղեցին անջատ է պետությունից, բայց իրականում այդպես չէ:
- Ազատ տեղաշարժի իրավունքի հետ կապված փորձագետները Սահմանադրության մակարդակում հիմնականում խնդիրներ չեն տեսնում, սակայն նշում են, որ քաղաքական լարվածությունների ժամանակ որոշ սահմանափակումներ լինում են:
- Բոլոր հարցվածներն էլ խնդիրներ են տեսել գույքից անարգել օգտվելու իրավունքի ապահովման հարցում, որոնք, դարձյալ կառուցակարգերով են պայմանավորված:
- Հարցվածները գրեթե միասնական են եղել այն կարծիքում, որ ընտրելու և ընտրվելու իրավունքի հետ կապված կան շատ խնդիրներ՝ և օրենսդրական, և գործնական:

- Կրթության իրավունքի հետ կապված նշվել են ոլորտում առկա որոշ խնդիրներ՝ կապված կրթության հավասար պայմանների ապահովման և պետության անտեղի միջամտության վերացման հետ:
- Նախկինում կիսանախագահական հռչակված կառավարման համակարգը վերածվել է նախագահական համակարգի, որտեղ նախագահը ունի գրեթե անսահմանափակ իշխանություն, քանի որ խորհրդարանը դադարել է հանդես գալ որպես հակակշիռ: Արդյունքում՝ ողջ իշխանությունը կենտրոնացել է մեկ քաղաքական ուժի ձեռքում:
- Ստեղծված իրավիճակի պատճառն է քաղաքական մարմինների կողմից ընտրությունների բնականոն գործընթացին անիրավաչափորեն միջամտելը, որի արդյունքում ընտրական ինստիտուտները կորցրել են իրենց լեգիտիմությունը և որի արդյունքում էլ խաթարվել է քաղաքական հավասարակշռությունը խորհրդարանում՝ իր ողջ ներկա հետևանքներով:
- Քաղաքական մենիշխանությունը կհաղթահարվի, թե ոչ, ամեն ինչ կախված կլինի նրանից, թե որքան հավասարակշռված ներկայացուցչական կազմ կունենա խորհրդարանը, քանի որ միայն այդ դեպքում խորհրդարանը կկարողա վերահսկել քաղաքական մեծամասնությանը, որի առջև պատասխանատու է կառավարության ղեկավարը իր կաբինետով: Այս իմաստով շատ կարևոր է կուսակցությունների խոշորացման հայեցակարգային գաղափարը, որին կարող է նպաստել խորհրդարանի դերի բարձրացումը, ինչպես նաև օրենսդրական որոշ մեխանիզմների վերանայումը (կուսակցությունների խոշորացումը իր հերթին նույնպես կնպաստի խորհրդարանի դերի բարձրացմանը):
- Ցանկացած կիսանախագահական համակարգ ի վերջո տանում է նախագահական մենիշխանության, քանի որ անխուսափելի է մշտական կոնֆլիկտը երկու առաջնային մանդատով օժտված բևեռների՝ նախագահի և խորհրդարանի միջև: Հատկապես այս առումով խոցելի են ժողովրդավարական ավանդույթներ չունեցող երկրները, որոնց թվում է Հայաստանը:
- Գրեթե բոլոր հարցվողները<sup>189</sup> դրական են համարել տվյալ ժամանակահատվածում բացարձակ համամասնական ընտրակարգին անցնելու հայեցակարգային առաջարկը, որպես հիմնավորում բերելով հետևյալ փաստարկները.
  - Դա քայլ է քաղաքականությունն ապաքաղաքականացումից զերծ պահելու կամ դա նվազեցնելու ուղղությամբ:
  - Դա հնարավորություն է ստեղծում նվազեցնել մեծահարուստների (օլիգարխիայի) մուտքը ԱԺ:
  - Մեծացնում է ընտրված պատգամավորների պատասխանատվության աստիճանը ընտրողների առջև:

<sup>189</sup> Այս հարցին պատասխանել են սահմանադրական հանձնաժողովի անդամները և ընդդիմադիր կուսակցություններից համամասնական կարգով ընտրված պատգամավորներ



- Համամասնական ընտրակարգով ընտրությունների կազմակերպման դեպքում նվազում է կոռուպցիայի, ընտրակաշառք բաժանելու և նմանատիպ այլ խնդիրների հավանականությունը:
- Համամասնական ընտրություններն ավելի ժողովրդավարական են և միտված են արտացոլելու ժողովրդի իրական կամքը, քան մեծամասնական ընտրությունները:
- Համամասնական ընտրակարգով ԱԺ անցած պատգամավորների գործունեությունն ավելի արդյունավետ է, քան մեծամասնականով անցածներինը:
- Սույն հարցի շուրջ հարցված միակ մեծամասնական կարգով ընտրված պատգամավորը դեմ է արտահայտվել համամասնական ընտրակարգին անցնելու գաղափարին, հակափաստարկելով, որ.
  - ԱԺ-ն իրականացնում է օրենսդիր ֆունկցիա, որը պրոֆեսիոնալ աշխատանք է, և կուսակցական ու քաղաքական շահերը չեն, որ պետք է դասվեն առավել:
  - Ինչ վերաբերում է օլիգարխների մուտքին ԱԺ, ապա հարկ է նշել, որ մեծամասնականի վերացման դեպքում և ոչ մի խոչընդոտ չկա, որպեսզի այդ անձինք, ներգրավվելով կուսակցական ցուցակներում, ստանձնեն ԱԺ մանդատներ: Եվ այսօր էլ ԱԺ կուսակցական ցուցակներում քիչ չեն մեծահարուսները:
  - Պատգամավորների հաշվետվողականության բարձր է, երբ նրանք անձնապես են կրում այդ պատասխանատվության բեռը:
- Բարեփոխված ընտրական համակարգին անցնելու հայեցակարգային առաջարկի առնչությամբ փորձագետների մի մասը բարձրաձայնում է այնպիսի խնդիրներ ինչպիսիք են.
  - ընտրական հանձնաժողովի սահմանադրական կարգավիճակ, ֆինանսական անկախություն, անձնավորված պատասխանատվություն,
  - էլեկտրոնային մեխանիզմով քվեարկելու հնարավորություն,
  - ստորագրված ցուցակների հրապարակում,
  - բոլոր ընտրատեղամասերում ընտրությունների անմիջական հեռարձակման ապահովում,
  - մշակութային փոփոխությունների իրականացում՝ իրավագիտակցության փոփոխություն, պահանջատեր քաղաքացիների սերնդի ձևավորում:
- Գրեթե բոլոր հարցվողները նշել են, որ ռեյտինգային քվեարկության իրականացմամբ կբարձրացվի կուսակցությունների ներսում ժողովրդավարության աստիճանը:
- Համամասնական ցուցակներից նախընտրած թեկնածուին ընտրելու հետ կապված փորձագետները արտահայտել են մտավախություն, որ արդյունքում հնարավոր է լինեն ընտրատարածքներ, որտեղից չլինեն ընտրված պատգամավորներ, և այնպիսի ընտրատարածքներ, որտեղից ընտրվեն մի քանի պատգամավորներ:
- Ազատագրկվածներին ընտրական իրավունքի շնորհման առնչությամբ հարցվողները նշել են, որ եթե լինի վստահություն ընտրական գործընթացների հանդեպ, ուստի պետք է, որ ազատագրկվածները, ինչպես մյուս ՀՀ քաղաքացիները, ունենան ընտրելու իրավունք:

- Ինչ վերաբերում է ժամկետային զինծառայողներին, ապա փորձագետների կողմից ստացվել է կարծիք, համաձայն որի՝ անհրաժեշտ է ժամանակավորապես դադարեցնել նրանց ընտրելու իրավունքը, քանի որ հակառակ դեպքում տեղ է տրվում ընտրակեղծիքների:
- Շատ փորձագետներ Արդարադատության խորհրդի մեջ են տեսնում դատական համակարգի անկախության երաշխավորի պոտենցիալը՝ պայմանով, որ վերանայվի այս մարմնի ձևավորման կարգը և դրա լիազորությունների շրջանակը: Առաջարկվել են ԱԽ-ի ձևավորման տարբեր մոդելներ՝ այդ թվում նաև այնպիսի մոդելներ, որոնք համապատասխանում են խորհրդարանական կառավարման մոդելին:
- Հարցվողների մեծ մասը բացասաբար է արտահայտվել երկաստիճան դատական համակարգի անցնելու հայեցակարգային առաջարկի նկատմամբ՝ գտնելով, որ դրա համար օբյեկտիվ անհրաժեշտություն չկա: Մեծամասամբ բացասական կարծիք է հնչել նաև երդվյալ ատենակալների ինստիտուտի կիրառման առումով:
- Մասնագետների գնահատմամբ՝ հանրաքվեն միանշանակ ընկալվում է որպես ժողովրդավարական կարևորագույն գործիք, որը, ցավոք, Հայաստանում կիրառվում է միայն Սահմանադրության փոփոխությունների ժամանակ: Մինչդեռ քաղաքացիները այնքան էլ չեն կարևորում հանրաքվեի նշանակությունը և դրան մասնակցելը համարում են անիմաստ գործ:
- Հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը հստակեցված չէ, ինչը հանրաքվե նախաձեռնելու՝ իշխանությունների հայեցողական լիազորության չարաշահման պատճառ կարող է դառնալ:
- Հանրաքվեի նախաձեռնություններում ժողովրդի դերը պասիվ է, քանի որ վերջինս իրեն պահանջատեր չի զգում:
- Տեղական ինքնակառավարման համակարգում կան բազմաթիվ խնդիրներ, որոնք սահմանադրության հայեցակարգում լիարժեքորեն արտացոլված չեն: Այդ խնդիրները վերաբերում են ոչ միայն ՏԻՄ-երի ժողովրդավարությանը, այլև կառավարման արդյունավետությանը: Հայեցակարգը չի ուրվագծում անգամ ՏԻՄ-երի հետ կապված որևէ խնդրի լուծման հնարավոր այլ ուղիներ, բացի միջհամայնքային միավորումներ ձևավորելուց և ավագանու դերի բարձացումից:
- Տեղական ինքնակառավարման ամենամեծ խնդիրներից է համայնքային բյուջեի ձևավորումը:
- ՏԻՄ-երը բավականաչափ ազատ և ինքնուրույն չեն կենտրոնական իշխանությունից:
- Համայնքի ղեկավարն ունի վճռորոշ ազդեցություն ավագանու որոշումների վրա, ուստիև ավագանին չունի բավականաչափ ազատություն:
- Մասնակցային կառավարման մակարդակը տեղերում շատ ցածր է, ինչը պայմանավորված է նաև ավագանու նիստին մասնակցելու իրավունքից համայնքի բնակիչների անտեղյակությամբ:

## ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- Անհրաժեշտ է բարելավել ընտրական համակարգը, քանի որ հանրաքվեն իրականացվելու և արդյունքներն ամփոփվելու են Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով: Ուստի պետք է վերացնել քվեարկության արդյունքների նկատմամբ կասկած հարուցող հիմքերը, այդ թվում օրենսդրական անհարկի սահմանափակումները, մասնավորապես, ստորագրված ցուցակների հրապարակայնացման արգելքը: Ինչպես նաև խիստ կարևորվում է ընտրությունների կազմակերպման և անցկացման պատասխանատու մարմնի՝ ԿԸՀ-ի նկատմամբ վստահության բարձրացումը, այլապես սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի անցկացումը լուրջ վտանգի տակ կարող է դրվել:
- ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը պետք է մշակվի անկախ, անկողմնակալ մասնագիտական խմբերի կողմից, ովքեր որևէ բանով կաշկանդված չեն, մասնավորապես, չունեն քաղաքական կաշկանդվածություն:
- Հստակեցնել բարձրացված խնդիրների լուծման հնարավոր տարբերակները՝ որպես վերջնական կարգավորումներ:
- Ճշգրտել և նվազագույնի հասցնել Սահմանադրության փոփոխությամբ պայմանավորված ռիսկերը:
- Յուրաքանչյուր իրավունքն ամրագրող հողվածի երկրորդ մասում հստակ սահմանվեն տվյալ իրավունքի սահմանափակման համար նախատեսված իրավիճակները:
- Սահմանափակումների ձևակերպումները պետք է լինեն բացառապես սպառնիչ, առանց ենթատեքստերի և միանշանակ, ինչը տարընթերցումների հնարավորություն չի տա և կապահովի միատեսակ կիրարկումը:
- Սահմանափակումներ ներառող նորմերի հիանալի օրինակ է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան», որով սահմանվում է իրավունքը, որը պահպանում է պետությունը, ապա հաջորդիվ նշվում է, թե կոնկրետ որ դեպքերն են, որոնք չեն համարվում այդ իրավունքի խախտում<sup>190</sup>:
- Կյանքի իրավունքն ամրագրող հողվածը համալրել այն բացառիկ դեպքերի թվարկմամբ, երբ անձին կյանքից զրկելը չի համարվում իրավունքի սահմանափակում:
- Հաշվի առվելով այն հանգամանքը, որ խոշտանգումների արգելումը բացարձակ իրավունք է և մտահոգվելով այն փաստով, որ ներկայումս ՄԻԵԴ կողմից Հայաստանի դեմ

<sup>190</sup> Օրինակ՝ «Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» 2-րդ հոդված. «Յուրաքանչյուր մարդու կյանքի իրավունքը պահպանվում է օրենքով: Ոչ ոք չի կարող կանխամտածված կերպով զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատար ածելով մահավճիռը, որ կայացնում է դատարանը՝ կատարված հանցագործության համար, որի վերաբերյալ օրենքով նման պատիժ է նախատեսված:

Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն ուժի գործադրման հետեւանք է, որը միանգամայն անհրաժեշտ է՝

ա) ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանվելու համար.

բ) օրինական կալանավորում իրականացնելու կամ օրինական հիմունքներով ձերբակալված անձի փախուստը կանխելու համար.

գ) խռովությունը կամ ապստամբությունը օրենքին համապատասխան ճնշելու համար:

կայացված 106 որոշումների (որոնք ընդգրկում են վճիռներ, որոշումներ ընդունելիության կամ մասնակի ընդունելիության, որոշումներ անընդունելիության կամ մասնակի անընդունելիության մասին, որոշումներ գործը կոմունիկացնելու մասին, և այլն) շարքում խոշտանգումների արգելումն արգելող հոդվածի խախտմամբ գործերն ընդհանուր թվով գտնվում են ամենահաճախ խախտվող իրավունքների շարքում՝ արդար դատաքննության և անձի անձեռնմխելիության իրավունքներից հետո, առաջարկվում է սահմանադրական մակարդակում ամրագրել խոշտանգում եզրույթի ձևակերպումը:

- Սահմանադրության 16-րդ հոդվածի *«ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի չեզոք անհապաղ տեղեկացվում է»* դրույթում «զրկված» բառը փոխարինել «զրկելիս» բառով: Այս ձևափոխումը հնարավորություն կտա նշված դրույթով ամրագրված երաշխիքը (Միրանդայի կանոնը) կիրառելի դարձնել անձին ազատությունից զրկելիս, այլ ոչ թե որոշակի ժամանակահատված հետո, որի ընթացքում, ինչպես վկայում է պրակտիկան, տեղի են ունենում անձի իրավունքների լուրջ միջամտություն:
- Ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի անհապաղ կերպով իրավական պաշտպանություն ստանալու իրավունք:
- Առաջնորդվելով Մարդու իրավունքների եվրոպական կոնենցիայի 10—րդ հոդվածի 2-րդ մասին տեքստով՝ ազատ արտահայտվելու իրավունքի նախատեսմանը զուգահեռ սահմանադրորեն ամրագրել նաև սահմանափակումների շրջանակը. Այսպես. «Այդ ազատությունների իրականացումը, որը պարտավորություններ և պատասխանատվություն է դնում, կարող է կապված լինել ձևականությունների, պայմանների, սահմանափակումների կամ տուգանման պատժահրահանգների հետ, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անդորրի, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու, այլ անձանց արժանապատվությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական բնույթի տեղեկության հրապարակումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը ապահովելու նպատակով»:
- Սահմանադրական մակարդակում ամրագրել սեփականության իրավունքի սահմանափակման ձևերն ու հիմքերը:
- Դատապարտյալներին տալ ընտրական իրավունք:
- Սահմանադրորեն ամրագրել, որ պետությունն ամրագրում է պետական և մասնավոր, սակայն պետական հավատարմագրում անցած կրթական հաստատությունների հավասարությունը:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքական լարված իրավիճակներում լայնորեն սահմանափակվում է հենց տեղաշարժի իրավունքը, անհրաժեշտ է հստակորեն ամրագրել ազատ տեղաշարժի սահմանափակման հիմքերը և եղանակները:
- Քաղաքական ճգնաժամը այն աստիճան է խորացել, որ հնարավոր չէ վերականգնել կիսանախագահական կառավարման համակարգի նույնիսկ նվազագույն ատրիբուտները:

Այդ պատճառով առավել նպատակահարմար է փոխել կառավարման համակարգը, քան փորձել վերականգնել աղավաղված համակարգը: Խորհրդարանական կառավարման համակարգը ժողովրդավարության խթանիչ ուժ է: Այդ պատճառով անցումը խորհրդարանական կառավարման համակարգին նպատակահարմար է:

- Սակայն այդ համակարգի գործելու համար անհրաժեշտ է ապահովել ընտրական ինստիտուտների լեգիտիմությունը, հակառակ դեպքում կրկին կձևավորվի քաղաքական մենիշխանություն՝ կառավարման այլ կենտրոնով:
- Նախագահական և խորհրդարանական ընտրությունները միևնույն օրն անցկացնելը ողջունելի չէ: Ցանկալի է, որ երկու առաջնային մանդատով ընտրությունները հաջորդեն մեկը մյուսին, քանի որ միաժամանակ կամ չափազանց մոտ ժամանակահատվածներում երկու ընտրությունների անցկացնելիս դրանց արդյունքները առավելապես կհամընկնեն:
- Որպեսզի ապահովվի օրենսդիր մարմնի հսկողական դերը, ժամանակավոր կամ մշտական հանձնաժողովների վերահսկողական գործընթացներում պետք է ապահովել պառլամենտական փոքրամասնությունների ներկայությունը, ովքեր պետք է ունենան իրավունք, որպեսզի իրենց՝ փոքրամասնության պահանջի հիմա վրա ստեղծվեն հետաքննչական, փաստահավաք հանձնաժողովներ:
- Օրենքը պետք է սահմանի պատասխանատվություն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նման հանձնաժողովների պահանջը չկատարելու համար՝ այդ թվում կեղծ ցուցմունքներ, տվյալներ ներկայացնելու, հանձնաժողովին ապակողմնորոշելու և այլ անիրավաչափ գործողությունների համար:
- Անհրաժեշտ է սահմանել հնարավորինս նեղ շրջանակի հարցեր, որոնք կարող են դրվել հանրաքվեի, քանի որ հանրաքվեի ինստիտուտի չափից ավելի լայն օգտագործումը կարող է թուլացնել Ազգային ժողովի դերը՝ հատկապես պառլամենտարիստական համակարգում:
- Պառլամենտարիստական համակարգում պառլամենտի կողմից կառավարության վերահսկման համար անհրաժեշտ է ստեղծել հատուկ մասնագիտացված կոմիտե կամ մարմին, որը կլինի միջանկյալ մարմին պառլամենտի և կառավարության միջև, որը կունենա իր կանոնակարգը (սահմանված օրենքով), որում մանրամասնորեն սահմանված կլինեն վերահսկողության ընթացակարգերը,
- Կարծում ենք, որ պառլամենտարիստական համակարգում նախագահը կունենա խորհրդարանի կողմից ընդունված օրենքները հաստատելու լիազորությունը: Եթե այդպես է, նա պետք է ունենա նաև օրենսդրական վետոյի իրավունք, որը չի կարող վերացվել խորհրդարանական մեծամասնության կողմից, ինչպես նաև օրենսդրության սահմանադրականության հարցով դատարան դիմելու իրավունք: Այս վերջին լիազորությունը կարող է փոխարինել վետոյի իրավունքի լիազորությանը, որը նախագահի կողմից կարող է առավել նախընտրելի լինել:
- Նախագահին պետք է նաև տրվեն որոշ ավանդական լիազորություններ գործադիր ոլորտում, օրինակ, ներում, համաներում հայտարարելու, դեսպաններ նշանակելու, միջազգային համաձայնագրեր հաստատելու լիազորություններ, և այլն: Այդպիսով,

նախագահը կկարողանա հետևել Մահմանադրության պահպանմանը, արդյունավետ կերպով կիրառել հակակշռող ու զսպող լիազորություններ և անհրաժեշտության դեպքում հանդես գալ ժողովրդի անունից (այդ թվում նաև փոքրամասնության) որպես արբիտր: Այս իմաստով չափազանց կարևոր է, ինչպես առաջարկվում է հայեցակարգում, որպեսզի նախագահը լինի անկուսակցական:

- Որպեսզի նախագահը կարողանա իրականացնել «ժողովրդական արբիտրի» իր դերը, նրան, այնուամենայնիվ, պետք է տրվի նաև քաղաքական որոշ գործընթացներին մասնակցելու հնարավորություն՝ ի հավելումս վերը նշվածի: Օրինակ, նա պետք է հնարավորություն ունենա հաստատել ԱԽ-ի կազմը, Գլխավոր դատախազի և այլ պաշտոնյաների նշանակումը խորհրդարանի կողմից:
- Նախագահի լիազորությունների դադարեցման (ինֆիչմենտի) հարցը պետք է լուծվի հանրաքվեի միջոցով:
- Պահպանել ներկայիս խառը ընտրական համակարգը, միաժամանակ օրենսդրորեն և պրակտիկայում նպաստել կուսակցությունների հզորացմանը (օրինակ որպես տեղական ժողովրդավարության օղակ առաջարկվում է ՏԻՄ ընտրություններն իրականացնել բացառապես կուսակցական ցուցակներով, որը կբարձրացնի հետաքրքրությունն ու կարևորումն այս օղակի հանդեպ, միևնույն ժամանակ որպես մոդելային օրինակ կկիրառվի տեղերում՝ վերջինիս արդյունավետությունն ու թերությունները բացահայտելու նպատակով):
- Անհրաժեշտ է մեծացնել ԱԽ լիազորությունների շրջանակը ի հաշիվ ԴՆԽ-ի գործառույթների: ԱԽ-ն պետք է դառնա քաղաքականություն մշակող մարմին (policy maker) և այս առումով անհրաժեշտ է նրա լիազորությունները պետք է լինեն ավելին, քան միայն կարգապահական վարույթներ հարուցելու և դատավորների նշանակման ու առաջխաղացման լիազորություններն են:
- ԱԽ-ին պետք է հանձնել հատկապես ԴՆԽ-ի այն լիազորությունները, որոնցով վերջինս մշակում է դատական քաղաքականություն, օրինակ, դատական գործավարության, վարչարարության, կադրերի կառավարման կանոններ սահմանելու ԴՆԽ-ի լիազորությունները՝ ներառյալ նաև բյուջետային քաղաքականություն վարելու լիազորությունը:
- Որպեսզի վերը նշված լիազորությունները հնարավոր լինի իրականացնել, ԱԽ-ն պետք է դառնա մշտական հիմունքներով գործող մարմին: Այսպիսով, դաշտում կմնան երկու հիմնական մարմիններ՝ Արդարադատության խորհուրդը որպես քաղաքականություն մշակող մարմին և Դատական դեպարտամենտը որպես քաղաքականությունը իրականացնող:
- Դատական համակարգին պետք է տրվի ինքնուրույն կերպով օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք և այդ գործառույթը, անկասկած, պետք է տրվի ԱԽ-ին:

- Անկախ այն հանգամանքից, թե ԱԽ կազմավորման ինչ մոդել կընտրվի, պետք է պահպանվի հիմնական սկզբունքը. ԱԽ կազմի առնվազն կեսից ավելին պետք է լինեն դատավորներ, ովքեր պետք է ընտրվեն «իրենց ներսից»՝ դատավորներից կողմից:
- Ներկա իրավակարգավորումը, համաձայն որի դատավորների թեկնածուների ցուցակը և դատավորների առաջխաղացման ցուցակը հաստատում է ՀՀ Նախագահը, նպատակահարմար է կիրառել խորհրդարանական կառավարման համակարգում, որտեղ նախագահը կունենա սահմանափակ լիազորություններ:
- Կամ պետք է անցնել երկաստիճան դատական համակարգի, որը կնպաստի դատական ռեսուրսների (այդ թվում նաև քաղաքացիների ռեսուրսների) զգալի տնտեսման, կամ պահպանել եռաստիճան դատական համակարգը՝ պայմանով, որպեսզի դատական քննությունը ավարտվի վերաքննիչ դատարանում, իսկ Վճռաբեկ տիրույթը իրավամբ կմնա որպես գործի վերանայման, այլ ոչ թե բողոքարկման տիրույթ:
- Անհրաժեշտ է Վճռաբեկ դատարանը վերանվանել «Գերագույն դատարան»՝ հաշվի առնելով Սահմանադրության 92-րդ հոդվածի ուժով այս դատարանի գործառույթները և 2005 թվականից ի վեր այս դատարանի գործունեությունը:
- Գտնում ենք, որ երդյվալ ատենակալների ինստիտուտի կիրառման համար չկա արդարադատության ընդհանուր շահից բխող օբյեկտիվ անհրաժեշտություն և իրական հասարակական պահանջ:
- Անհրաժեշտ է բարձրացնել հանրաքվեի և պետիցիաների հանդեպ ժողովրդի վստահությունը:
- Մշակել հստակ մեխանիզմներ՝ հանրաքվեի կազմակերպման և անցկացման գործընթացը թափանցիկ դարձնելու համար:
- Կատարելագործել ընտրությունների իրականացման մեխանիզմները, բարձրացնել ընտրությունների արդյունքների վստահելիության և ճշգրտության աստիճանը
- Հանրությանը տալ հանրաքվեի նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք
- Հստակեցնել այն հարցերի շրջանակը, որոնց սահմաններում հանրությունը կարող է հանդես գալ հանրաքվե իրականացնելու նախաձեռնությամբ:
- Ապահովել ՏԻՄ-երի իրական անկախությունը և ինքնուրույնությունը:
- Սահմանել ՏԻՄ-երի բյուջեի ձևավորման և օգտագործման առավել օպտիմալ կարգ:
- Ապահովել մասնակցային կառավարումը ՏԻՄ-երում:
- Բարձրացնել ավագանու դերը համայնքային նշանակության հարցերը լուծելիս:

## Հավելված 1. Սահմանադրական բարեփոխումների առաջարկներ՝ հիմնված հասարակական կարծիքի և փորձագիտական ուսումնասիրությունների վրա

Բաժին	Արտահայտված կարծիքներ	Առաջարկներ
<b>Սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Իշխանությունների համար առաջնահերթությունը վստահության ճգնաժամը հաղթահարելու խնդիրն է, իսկ սահմանադրական փոփոխությունները ժամանակավրեպ են այնքանով, որքանով չկա ձևավորված հասարակական պահանջ:</li> <li>• Անվստահություն է առաջացնում Սահմանադրության փոփոխությունների գործընթացով զբաղվող Հանձնաժողովի կազմը:</li> <li>• Անհասկանալի են մնում Սահմանադրության փոփոխության պատճառները և իրական նպատակները,</li> <li>• Փորձագետների մի մասը բացասաբար է վերաբերվում այն փաստին, որ Հանձնաժողովի ստեղծումը նախաձեռնվել է նախագահի կողմից և անդամների մեծամասնությունը պետական պաշտոնյաներ են,</li> <li>• Փորձագետների մեծամասնությունը կարծում է, որ սահմանադրական բարեփոխումները չեն կարող հաղթահարել երկրի առաջ ծառայած խնդիրները կամ մասնակիորեն կլուծել որոշ խնդիրներ,</li> <li>• Փորձագետների մեծամասնությունը առկա խնդրի լուծումը տեսնում են ռեժիմի, իշխող կարգերի և/կամ հասարակական իրավագիտակցության փոփոխման մեջ,</li> <li>• Փորձագետների ճնշող մեծամասնությունը հակված է այն կարծիքին, որ սահմանադրական բարեփոխումները չեն կարող լիարժեքորեն լուծել գործող սահմանադրության թույլ կողմերը,</li> <li>• Ըստ որոշ փորձագետների Սահմանադրական փոփոխությունները կարող են դրական արդյունք ունենալ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Անհրաժեշտ է բարելավել ընտրական համակարգը, վերացնել քվեարկության արդյունքների նկատմամբ կասկած հարուցող հիմքերը, այդ թվում օրենսդրական անհարկի սահմանափակումները, մասնավորապես, ստորագրված ցուցակների հրապարակայնացման արգելքը: Ինչպես նաև խիստ կարևորվում է ընտրությունների կազմակերպման և անցկացման պատասխանատու մարմնի՝ ԿԸՀ-ի նկատմամբ վստահության բարձրացումը, այլապես վերջին մի քանի համապետական ընտրություններից հետո, երբ հասարակությունը վերջինիս դիտում է որպես հիմնական ընտրակեղծարար, սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի անցկացումը լուրջ վտանգի տակ կարող է դրվել:</li> <li>• ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը պետք է մշակվի անկախ, անկողմնակալ մասնագիտական խմբերի կողմից, ովքեր որևէ բանով կաշկանդված չեն, մասնավորապես չունեն քաղաքական կաշկանդվածություն:</li> </ul>



	<p>հետևյալ խնդիրների լուծման գործում.</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Իշխանությունների տարանջատման, հակակշռման, հավասարակշռման խնդիրները,</li> <li>➤ իշխանության իրավունքով սահմանափակման խնդիրները,</li> <li>➤ ընտրական ինստիտուտների նկատմամբ բացասական վերաբերմունքի և հավատի բացակայության խնդիրը,</li> <li>➤ դատական իշխանության անկախության խնդիրը,</li> <li>➤ ընտրակեղծիքների վերացում/քչացում` պառլամենտական համակարգի ներդրման շնորհիվ,</li> <li>➤ իրավունքի գերակայության սկզբունքի ապահովման խնդիրը,</li> <li>➤ արտաքին և ներքին խնդիրներ, սկսած սոցիալ-տնտեսականից, վերջացրած քաղաքականով:</li> <li>• Փորձագետների մեծամասնությունը կարծում է, որ սահմանադրական փոփոխությունների արդյունքում կշահի նա, ով նախաձեռնել է սահմանադրական փոփոխությունները, այսինքն իշխանությունները,</li> <li>• Հանրային մասնակցության ապահովման հարցի վերաբերյալ որոշ փորձագետներ կարծիք են հայտնել, որ Մահմանադրությունը անհամեմատ ավելի բարդ փաստաթուղթ է, և դա ամեննին էլ հասարակության խելքի բանը չէ, այնինչ այլոք այն կարծիքին են, որ քաղաքացիական գիտակցությունը մեր հասարակության, ժողովրդի մեջ, ցավոք սրտի, չկա և այս պարագայում փորձագետները տեսնում են փորձագիտական հանրության մոբիլիզացիայի կարիք:</li> </ul>	
<p><b>Հայեցակարգի ընդհանուր բնույթի հարցերի շուրջ (Հ. Տիգրանյան)</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Թեև Մահմանադրության հայեցակարգի նախագծում վեր են հանված ՀՀ-ում առկա գրեթե բոլոր հիմնախնդիրները, սակայն դրանց հնարավոր լուծումները խիստ անորոշ են:</li> <li>• Հայեցակարգի նախագծով ներկայացված են այն բոլոր թերությունները, որոնք բացահայտվել են գործող սահմանադրության կիրառության ընթացքում, սակայն սահմանադրության նախագծի տեքստի բացակայության պարագայում միանշանակ չենք կարող պնդել, որ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Հստակեցնել բարձրացված խնդիրների լուծման հնարավոր տարբերակները, որպես վերջնական կարգավորումներ:</li> <li>• Ճշգրտել և նվազագույնի հասցնել սահմանադրության փոփոխությամբ պայմանավորված ռիսկերը:</li> </ul>

	<p>բարեփոխումների արդյունքում դրանք կշտկվեն:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մահմանադրության ամբողջական փոփոխությունը պարունակում է որոշ ռիսկեր, այդ թվում՝ պետական ապարատի աշխատանքի կազմալուծում, անկայունություն, ինչպես նաև մարդկային և նյութական միջոցների վատնում:</li> </ul>	
<p><b>Մարդու իրավունքներ (Տ.Մատինյան)</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Անփոփելով փորձագետների պատասխանները «Իրավունքի գերակայություն» եզրույթի ներքո հարկավոր է հասկանալ. ա) իրավունքի առաջնայնությունը սոցիալական այլ կարգավորիչների նկատմամբ, բ) օրենքի՝ որպես իրավունքի արտահայտման ձևի համապատասխանությունն իրավունքին, դրա բուն էությանը:</li> <li>• Փորձագետների մեծամասնությունը գտել է, որ Մահմանադրության մակարդակով իրավունքների անմիջական գործողությունն ապահովելու համար հավելյալ երաշխիքների ապահովման կենսական անհրաժեշտություն չկա, ներկայումս ամրագրված երաշխիքները բավարար են՝ դրանք կիրառելու ցանկություն և կամք ունենալու պարագայում:</li> <li>• Ի պատասխան հայեցակարգային այն պնդմանը, որ մարդու ազատությունները, իրավունքները չեն գործում և պետք է ապահովել դրանց անմիջական գործողությունը, փորձագետները հիմնականում համակարծիք էին այն առումով, որ ազատությունների և իրավունքների անմիջական ապահովումը հնարավոր է նաև գործող</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Յուրաքանչյուր իրավունք ամրագրող հոդվածի երկրորդ մասում հստակ սահմանվեն տվյալ իրավունքի սահմանափակման համար նախատեսված իրավիճակները:</li> <li>• Մահմանափակումների ձևակերպումները պետք է լինեն միանշանակ և բացառապես սպառիչ, առանց ենթատեքստերի՝ որպեսզի հնարավորություն չտա տարրնթերցումների և ապահովի միատեսակ կիրառում:</li> <li>• Մահմանափակումներ ներառող նորմերի հիանալի օրինակ է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան», որով սահմանվում է իրավունքը, որը պաշտանում է պետությունը, ապա հաջորդիվ նշում թե, կոնկրետ որ դեպքերն են, որոնք չեն համարվում այդ իրավունքի խախտում<sup>191</sup>:</li> <li>• Կյանքի իրավունքն ամրագրող հոդվածը համալրել բացառություն սահմանող հիմքերով, որոնց դեպքերում անձին կյանքից զրկելը չի համարվում իրավունքի սահմանափակում:</li> <li>• Հաշվի առվելով այն հանգամանքը, որ խոշտանգումների արգելումը բացարձակ իրավունք է և մտահոգվելով այն փաստով, որ ներկայումս ՄԻԵԴ կողմից Հայաստանի դեմ կայացված 106 որոշումների (որոնք ընդգրկում են վճիռներ,</li> </ul>

<sup>191</sup> Օրինակ՝ «Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» 2-րդ հոդված. «Յուրաքանչյուր մարդու կյանքի իրավունքը պահպանվում է օրենքով: Ոչ ոք չի կարող կանխամտածված կերպով զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատար ածելով մահավճիռը, որ կայացնում է դատարանը՝ կատարված հանցագործության համար, որի վերաբերյալ օրենքով նման պատիժ է նախատեսված:

Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն ուժի գարծադրման հետեւանք է, որը միանգամայն անհրաժեշտ է՝ ա) ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանվելու համար. բ) օրինական կալանավորում իրականացնելու կամ օրինական հիմունքներով ձերբակալված անձի փախուստը կանխելու համար. գ) խոստովությունը կամ ապստամբությունը օրենքին համապատասխան ճնշելու համար:

<p>սահմանադրության պարագայում:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ըստ փորձագետների հետևյալ գործունեքը հանգեցնում են մարդու իրավունքների և ազատությունների անմիջապես չգործելուն.       <ul style="list-style-type: none"> <li>➢ քաղաքացիական գիտակցության ցածր մակարդակը,</li> <li>➢ քաղաքական իրականությունը, երբ մարդու իրավունքների պաշտպանությունը որպես արժեք առաջնային չէ,</li> <li>➢ մշակույթային և քաղաքակրթական խնդիրներ,</li> <li>➢ այն իրավիճակը, որ գործադիր և օրենսդիր իշխանությունը լեգիտիմ չեն</li> </ul> </li> <li>• Այն հարցին թե արդյո՞ք փորձագետները գտնում են որ կա անհրաժեշտություն իրավունքների, ազատությունների և պարտականությունների բովանդակային, կառուցվածքային և խմբագրական հստակեցումներ իրականացնել, կարծիքները կիսվեցին. փոքրամասնությունը պնդել է, որ անհրաժեշտություն կա, սակայն միանշանակ ընդգծելով, որ դրանք էական ազդեցություն չեն կարող ունենալ, այնինչ մեծամասնությունը պնդում է, որ նման անհրաժեշտություն չկա:</li> <li>• Փորձագետների մեծամասնությունը գտնում է, որ իրավունքների սահմանափակումները պետք է նախատեսվեն սահմանադրական մակարդակում:</li> <li>• Որոշ փորձագետներ գտնում են սակայն, որ բոլոր իրավունքներն էլ պատշաճ կերպով ներկայացված են մարդու իրավունքներ բաժնում:</li> <li>• Կյանքի իրավունքի հետ կապված հարցվածների տեսակետները համընկնում են այն առումով, որ թեև մահապատիժը վերացվեց, սակայն դրանով չլուծվեց կյանքի իրավունքի ապահովման հարցը:</li> <li>• Ներպետական օրենսդրությամբ սահմանված խոշտանգման ձևակերպումը չի համապատասխանում ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման դրույթներին:</li> </ul>	<p>որոշումներ ընդունելիության կամ մասնակի ընդունելիության, որոշումներ անընդունելիության կամ մասնակի անընդունելիության մասին, որոշումներ գործը կոմունիկացնելու մասին, և այլն) շարքում խոշտանգումների արգելումն արգելող հողվածի խախտմամբ գործերն ընդհանուր թվով գտնվում են ամենահաճախ խախտվող իրավունքների շարքում՝ արդար դատաքնության և անձի անձեռնմխելիության իրավունքներից հետո, առաջարկվում է սահմանադրական մակարդակում ամրագրել խոշտանգում եզրույթի ձևակերպումը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Սահմանադրության 16-րդ հոդվածի <i>«ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է»</i> դրույթում «զրկված» բառը փոխարինել «զրկելիս» բառով: Այս ձևափոխումը հնարավորություն կտա նշված դրույթով ամրագրված երաշխիքը (Միրանդայի կանոնը) կիրառելի դարձնել անձին ազատությունից զրկելիս, այլ ոչ թե որոշակի ժամանակահատված հետո, որի ընթացքում, ինչպես վկայում է պրակտիկան, տեղի են ունենում անձի իրավունքների լուրջ միջամտություն:</li> <li>• Ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի անհապաղ կերպով իրավական պաշտպանություն ստանալու իրավունք:</li> <li>• Առաջնորդվելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10—րդ հոդվածի 2-րդ մասով, ազատ արտահայտվելու իրավունքի նախատեսմանը զուգահեռ սահմանադրորն ամրագրել նաև սահմանափակումների շրջանակը. Այսպես. «Այդ ազատությունների իրականացումը, որը ծնում է պարտավորություններ և պատասխանատվություն, կարող է կապված լինել ձևականությունների, պայմանների, սահմանափակումների կամ տույժերի հետ, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անդորրի, անկարգություններն ու</li> </ul>
---	--

<ul style="list-style-type: none"> <li>• Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի, անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի պաշտպանվածության հարցին անդրադառնալով՝ հարցվածները հիմնականում շեշտել են, որ կարևորը իրավական ձևակերպումը չէ, այլ գործող պրակտիկան:</li> <li>• Արդար դատաքննության առնչությամբ փորձագետները կարծում են, որ դատական համակարգը պետք է անկախ լինի ամբողջությամբ, ընդհանուր առմամբ լինի մրցակցային, որպեսզի ապահովի անմեղության կանխավարկածի և մրցակցության սկզբունքի իրացումը ամբողջ ծավալով:</li> <li>• Արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքի ապահովման հարցի հետ կապված կան որոշակի խնդիրներ կապված հանրային պաշտպանի ինստիտուտի, որակյալ փաստաբանական ծառայությունների և անձին ազատությունից զրկելու առաջին իսկ պահից պաշտպանի ծառայություններից օգտվելու հնարավորության առնչությամբ:</li> <li>• Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի հարցի վերաբերյալ փորձագետների տեսակետները հիմնականում համընկնում են այն առումով, որ թեև սահմանադրությամբ հռչակված է, որ եկեղեցին անջատ է պետությունից, բայց իրականում այդպես չէ:</li> <li>• Ազատ տեղաշարժի իրավունքի հետ կապված փորձագետները Մահմանադրության մակարդակում հիմնականում խնդիրներ չեն տեսնում, սակայն նշում են, որ քաղաքական լարված իրավիճակների ժամանակ որոշ սահմանափակումներ լինում են:</li> <li>• Բոլոր հարցվածներն էլ խնդիրներ են տեսել գույքից անարգել օգտվելու իրավունքի ապահովման հարցում, որոնք, կրկին, կառուցակարգերով են պայմանավորված:</li> <li>• Հարցվածները գրեթե միասնական են եղել այն կարծիքում, որ ընտրելու և ընտրվելու իրավունքի հետ կապված կան շատ խնդիրներ՝ և օրենսդրական, և գործնական:</li> </ul>	<p>հանցագործությունները կանխելու, այլ անձանց արժանապատվությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական բնույթի տեղեկության հրապարակումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը ապահովելու նպատակով»:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մահմանադրական մակարդակում ամրագրել սեփականության իրավունքի սահմանափակման ձևերն ու հիմքերը:</li> <li>• Դատապարտյալներին տալ ընտրական իրավունք:</li> <li>• Մահմանադրորեն ամրագրել, որ պետությունն ամրագրում է պետական և պետական հավատարմագրում անցած մասնավոր կրթական հաստատությունների հավասարությունը:</li> <li>• Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքական լարված իրավիճակներում լայնորեն սահմանափակվում է հենց տեղաշարժի իրավունքը, անհրաժեշտ է հստակորեն ամրագրել ազատ տեղաշարժի սահմանափակման հիմքերը և եղանակները:</li> </ul>
---	---

	<ul style="list-style-type: none"> <li>• Կրթության իրավունքի հետ կապված նշվել են ոլորտում առկա որոշ խնդիրներ՝ կապված կրթության հավասար պայմանների ապահովման և պետության անտեղի միջամտության վերացման հետ:</li> </ul>	
<b>Կառավարման համակարգ (Ա. Ղազարյան)</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Կառավարման խորհրդարանական, թե նախագահական համակարգի մասին փորձագետների և բնակչության արտահայտած դիրքորոշումները միանշանակ չեն: Եթե փորձագետների մեծ մասը նշել է, որ խորհրդարանական եղանակը արդյունավետ է և դրան անցնելը ստեղծված իրավիճակում նպատակահարմար է և նույնիսկ անխուսափելի, հարցման ենթարկված բնակիչների մի ստվար հատված նախընտրությունը տալիս է նախագահական համակարգին: Մրանով հանդերձ տիրում է ընդհանուր կարծիք առ այն, որ նախկինում կիսանախագահական հոչակված կառավարման համակարգը վերածվել է նախագահական համակարգի, որտեղ նախագահը ունի գրեթե անսահմանափակ իշխանություն, քանի որ խորհրդարանը դադարել է հանդես գալ որպես հակակշիռ: Արդյունքում, ողջ իշխանությունը կենտրոնացել է մեկ քաղաքական ուժի ձեռքում և այս առումով հարցման ենթարկվածների կարծիքը համընկնում է հայեցակարգում արտահայտված այն մտահոգության հետ, որ ստեղծվել է քաղաքական մենիշխանություն, որտեղ Նախագահի, խորհրդարանի և կառավարության ինստիտուտները միատեղվել են: Փորձագետները դրա պատճառը տեսնում են ընտրական համակարգի թերությունների մեջ: Մենք ստեղծված իրավիճակի պատճառը տեսնում ենք քաղաքական մարմինների կողմից ընտրությունների բնականոն գործընթացին անիրավաչափորեն միջամտելու մեջ, որի արդյունքում ընտրական ինստիտուտները կորցրեցին իրենց լեգիտիմությունը և որի արդյունքում էլ խաթարվեց քաղաքական հավասարակշռությունը խորհրդարանում իր ողջ հետևանքներով:</li> <li>• Ստեղծված իրավիճակում հայեցակարգով առաջարկվում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Քաղաքական ճգնաժամը այն աստիճան է խորացել, որ հնարավոր չէ վերականգնել կիսանախագահական կառավարման համակարգի նույնիսկ նվազագույն ատրիբուտները: Այդ պատճառով առավել նպատակահարմար է փոխել կառավարման համակարգը, քան փորձել վերականգնել աղավաղված համակարգը: Խորհրդարանական կառավարման համակարգը ժողովրդավարության խթանիչ ուժ է: Այդ պատճառով անցումը խորհրդարանական կառավարման համակարգին նպատակահարմար է:</li> <li>• Մակայն այդ համակարգի գործելու համար անհրաժեշտ է ապահովել ընտրական ինստիտուտների լեգիտիմությունը, հակառակ դեպքում կրկին կձևավորվի քաղաքական մենիշխանություն՝ կառավարման այլ կենտրոնով:</li> <li>• Նախագահական և խորհրդարանական ընտրությունները միևնույն օրն անցկացնելը ողջունելի չէ: Ցանկալի է, որ երկու առաջնային մանդատով ընտրությունները հաջորդեն մեկը մյուսին, քանի որ միաժամանակ կամ չափազանց մոտ ժամանակահատվածներում երկու ընտրությունների անցկացնելիս դրանց արդյունքները առավելապես կհամընկնեն:</li> <li>• Որպեսզի ապահովվի օրենսդիր մարմնի հսկողական դերը, ժամանակավոր կամ մշտական հանձնաժողովների վերահսկողական գործընթացներում պետք է ապահովել պառլամենտական փոքրամասնությունների ներկայությունը, ովքեր պետք է ունենան իրավունք, որպեսզի իրենց փոքրամասնության պահանջի հիմա վրա ստեղծվեն հետաքննչական, փաստահավաք հանձնաժողովներ:</li> <li>• Օրենքը պետք է սահմանի պատասխանատվություն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նման հանձնաժողովների պահանջը չկատարելու համար այդ թվում կեղծ ցուցմունքներ, տվյալներ ներկայացնելու, հանձնաժողովին</li> </ul>

<p>է փոխել կառավարման համակարգը և անցում կատարել խորհրդարանական կառավարման համակարգին: Փորձագետների մեծ մասը ընդունում է այս գաղափարը: Նրանք գտնում են, որ խորհրդարանական կառավարման համակարգը կբացառի քաղաքական մենիշխանությունը, քանի որ կառավարման բևեռը նախագահական ինստիտուտից կտեղափոխվի խորհրդարան, որը մի կողմից կընտրի քաղաքական գործընթացների հետ առնչություն չունեցող երկրի նախագահի, իսկ մյուս կողմից կվերահսկի վարչապետին՝ իր կառավարության հետ միասին: Ամեն ինչ, փաստորեն, կախված կլինի նրանից, թե որքան հավասարակշռված ներկայացուցչական կազմ կունենա խորհրդարանը, քանի որ միայն այդ դեպքում խորհրդարանը կկարողանա վերահսկել քաղաքական մեծամասնությանը, որի առջև պատասխանատու է կառավարության ղեկավարը իր կաբինետով: Այս իմաստով շատ կարևոր է կուսակցությունների խոշորացման հայեցակարգային գաղափարը, որին կարող է նպաստել խորհրդարանի դերի բարձրացումը, ինչպես նաև օրենսդրական որոշ մեխանիզմների վերանայումը (կուսակցությունների խոշորացումը իր հերթին նույնպես կնպաստի խորհրդարանի դերի բարձրացմանը):</p> <ul style="list-style-type: none"> <li>• Վերը նշվածով հանդերձ, փորձագետները գրեթե միահամուռ են այն հարցում, որ ցանկացած կիսանախագահական համակարգ ի վերջո տանում է նախագահական մենիշխանության, քանի որ անխուսափելի է մշտական կոնֆլիկտը երկու առաջնային մանդատով օժտված բևեռների՝ նախագահի և խորհրդարանի միջև, որոնցից յուրաքանչյուրը ձգտում է դառնալ դոմինանտ մյուսի նկատմամբ և կոնֆլիկտը բացակայում է միայն այն ժամանակ, երբ նախագահը խորհրդարանում ստանում է մեծամասնություն, որն էլ, սակայն, աստիճանաբար վերաճում է նախագահական և նույնիսկ գերնախագահական համակարգի: Հատկապես</li> </ul>	<p>ապակողմնորոշելու և այլ անիրավաչափ գործողությունների համար:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Անհրաժեշտ է սահմանել հնարավորինս նեղ շրջանակի հարցեր, որոնք կարող են դրվել հանրաքվեի, քանի որ հանրաքվեի ինստիտուտի չափից ավելի լայն օգտագործումը կարող է թուլացնել Ազգային ժողովի դերը՝ հատկապես պառլամենտարիստական համակարգում:</li> <li>• Պառլամենտարիստական համակարգում պառլամենտի կողմից կառավարության վերահսկման համար անհրաժեշտ է ստեղծել հատուկ մասնագիտացված կոմիտե կամ մարմին, որը կլինի միջանկյալ մարմին պառլամենտի և կառավարության միջև, որը կունենա իր կանոնակարգը (սահմանված օրենքով), որում մանրամասնորեն սահմանված կլինեն վերահսկողության ընթացակարգերը:</li> <li>• Կարծում ենք, որ պառլամենտարիստական համակարգում նախագահը կունենա խորհրդարանի կողմից ընդունված օրենքները հաստատելու լիազորությունը: Եթե այդպես է, նա պետք է ունենա նաև օրենսդրական վետոյի իրավունք, որը չի կարող վերացվել խորհրդարանական մեծամասնության կողմից, ինչպես նաև օրենսդրության սահմանադրականության հարցով դատարան դիմելու իրավունք: Այս վերջին լիազորությունը կարող է փոխարինել վետոյի իրավունքի լիազորությանը, որը նախագահի կողմից կարող է առավել նախընտրելի լինել:</li> <li>• Նախագահին պետք է նաև տրվեն որոշ ավանդական լիազորություններ գործադիր ոլորտում, օրինակ, ներում, համաներում հայտարարելու, դեսպաններ նշանակելու, միջազգային համաձայնագրեր հաստատելու լիազորություններ, և այլն: Այդպիսով, նախագահը կկարողանա հետևել Սահմանադրության պահպանմանը, արդյունավետ կերպով կիրառել հակակշռող ու զսպող լիազորություններ և անհրաժեշտության դեպքում հանդես գալ ժողովրդի անունից (այդ թվում նաև փոքրամասնության) որպես արբիտր: Այս իմաստով չափազանց կարևոր է, ինչպես առաջարկվում է հայեցակարգում, որպեսզի նախագահը լինի անկուսակցական:</li> </ul>
---	--

	<p>այս առումով խոցելի են ժողովրդավարական ավանդույթներ չունեցող երկրները, որոնց թվում է Հայաստանը:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Որպեսզի նախագահը կարողանա իրականացնել «ժողովրդական արբիտրի» իր դերը, նրան, այնուամենայնիվ, պետք է տրվի նաև քաղաքական որոշ գործընթացներին մասնակցելու հնարավորություն՝ ի հավելումս վերը նշվածի: Օրինակ, նա պետք է հնարավորություն ունենա հաստատել ԱԽ-ի կազմը, Գլխավոր դատախազի և այլ պաշտոնյաների նշանակումը խորհրդարանի կողմից:</li> <li>• Նախագահի լիազորությունների դադարեցման (իմփիչմենտի) հարցը պետք է լուծվի հանրաքվեի միջոցով:</li> </ul>
<p><b>Շնորհակալան իրավունքը և ընտրական համակարգ (Տ.Մատինյան)</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Գրեթե բոլոր հարցվողները<sup>192</sup> դրական են համարել տվյալ ժամանակահատվածում բացարձակ համամասնական ընտրակարգին անցնելու հայեցակարգային առաջարկը, որպես հիմնավորում բերելով հետևյալ փաստարկները. <ul style="list-style-type: none"> <li>➢ Դա քայլ է հանդիսանում քաղաքականությունն ապաքաղաքականացումից զերծ պահելու կամ դա նվազեցնելու ուղղությամբ:</li> <li>➢ Դա հնարավորություն է ստեղծում նվազեցնել մեծահարուստների (օլիգարխիայի) մուտքը ԱԺ:</li> <li>➢ Մեծացնում է ընտրված պատգամավորների պատասխանատվության աստիճանը ընտրողների առջև:</li> <li>➢ Համամասնական ընտրակարգով ընտրությունների կազմակերպման դեպքում նվազում է կոռուպցիայի, ընտրակաշառք բաժանելու և նմանատիպ այլ խնդիրների հավանականությունը:</li> <li>➢ Համամասնական ընտրություններն ավելի ժողովրդավարական են և միտված են արտացոլելու ժողովրդի իրական կամքը, քան մեծամասնական ընտրությունները:</li> <li>➢ Համամասնական ընտրակարգով ԱԺ անցած պատգամավորների գործունեությունն ավելի</li> </ul> </li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Պահպանել ներկայիս խառը ընտրական համակարգը, միաժամանակ օրենսդրորեն և պրակտիկայում նպաստել կուսակցությունների հզորացմանը (օրինակ որպես տեղական ժողովրդավարության օղակ առաջարկվում է ՏԻՄ ընտրություններն իրականացնել բացառապես կուսակցական ցուցակներով, որը կբարձրացնի հետաքրքրությունն ու կարևորումն այս օղակի հանդեպ, միևնույն ժամանակ որպես մոդելային օրինակ կկիրառվի տեղերում՝ վերջինիս արդյունավետությունն ու թերությունները բացահայտելու նպատակով):</li> <li>• Դատապարտյալներին տալ ընտրական իրավունք:</li> </ul>

<sup>192</sup> Այս հարցին պատասխանել են սահմանադրական հանձնաժողովի անդամները և ընդդիմադիր կուսակցություններից համամասնական կարգով ընտրված պատգամավորներ

	<p>արդյունավետ է, քան մեծամասնականով անցածներինը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Սույն հարցի շուրջ հարցված միակ մեծամասնական կարգով ընտրված պատգամավորը դեմ է արտահայտվել համամասնական ընտրակարգին անցնելու գաղափարին, հակափաստարկելով, որ.       <ul style="list-style-type: none"> <li>➢ ԱԺ-ն իրականացնում է օրենսդիր ֆունկցիա, որը պրոֆեսիոնալ աշխատանք է և կուսակցական ու քաղաքական շահերը չեն, որ պետք է դասվեն առավել,</li> <li>➢ Ինչ վերաբերում է օլիգարխների մուտքին ԱԺ, ապա հարկ է նշել, որ մեծամասնականի վերացման դեպքում և ոչ մի խոչընդոտ չկա, որպեսզի այդ անձինք ներգրավվելով կուսակցական ցուցակներում ստանձնեն ԱԺ մանդատներ: Եվ այսօր էլ ԱԺ կուսակցական ցուցակներում քիչ չեն մեծահարուսները:</li> <li>➢ Պատգամավորների հաշվետվողականության բարձր է, երբ նրանք անձնապես են կրում այդ պատասխանատվության բեռը,</li> </ul> </li> <li>• Բարեփոխված ընտրական համակարգին անցնելու հայեցակարգային առաջարկի առնչությամբ փորձագետների մի մասը բարձրաձայնում է այնպիսի խնդիրներ ինչպիսիք են.       <ul style="list-style-type: none"> <li>➢ ընտրական հանձնաժողովի սահմանադրական կարգավիճակ, ֆինանսական անկախություն, անձնավորված պատասխանատվություն,</li> <li>➢ էլեկտրոնային մեխանիզմով քվեարկելու հնարավորություն,</li> <li>➢ ստորագրված ցուցակների հրապարակում,</li> <li>➢ բոլոր ընտրատեղամասերում ընտրությունների անմիջական հեռարձակման ապահովում,</li> <li>➢ մշակութային փոփոխությունների իրականացում-իրավագիտակցության փոփոխություն, պահանջատեր քաղաքացիների սերնդի ձևավորում:</li> </ul> </li> </ul>	
--	--	--



	<ul style="list-style-type: none"> <li>• Գրեթե բոլոր հարցվողները նշել են, որ ռեյտինգային քվեարկության իրականացմամբ կբարձրացվի կուսակցությունների ներսում ժողովրդավարության աստիճանը:</li> <li>• Համամասնական ցուցակներից նախընտրած թեկնածուին ընտրելու հետ կապված փորձագետները արտահայտել են մտավախություն, որ արդյունքում հնարավոր է լինեն ընտրատարածքներ, որտեղից չլինեն ընտրված պատգամավորներ, և այնպիսի ընտրատարածքներ, որտեղից ընտրվեն մի քանի պատգամավորներ:</li> <li>• Ազատագրկվածներին ընտրական իրավունքի շնորհման առնչությամբ հարցվողները նշել են, որ եթե լինի վստահություն ընտրական գործընթացների հանդեպ, ուստի պետք է, որ ազատագրկվածները, ինչպես մյուս ՀՀ քաղաքացիները, ունենան ընտրելու իրավունք:</li> <li>• Ինչ վերաբերում է ժամկետային զինծառայողներին, ապա փորձագետների կողմից ստացվել է կարծիք, համաձայն որի՝ անհրաժեշտ է ժամանակավորապես դադարեցնել նրանց ընտրելու իրավունքը, քանի որ հակառակ դեպքում տեղ է տրվում ընտրակեղծիքների:</li> </ul>	
<b>Դատական համակարգ (Ա. Ղազարյան)</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Դատական համակարգը փոփոխելու անհրաժեշտության մասին կարծիքները միանշանակ չեն: Թեև բոլոր փորձագետները նշել են դատական համակարգի անկախության բացակայությունը որպես հիմնական թերություն, հարցման ենթարկված քաղաքացիների միայն մի մասն է այդպես կարծում, իսկ կեսից ավելին կարծում է, որ դատարանները կայացնում են արդարացի որոշումներ: Դրանով հանդերձ, գրեթե բոլոր հարցվածները միահամուռ են, որ դատական իշխանությունը բավարար հակակշիռ չի ստեղծում հանդիսանում իշխանության մյուս ճյուղերի նկատմամբ, որը, սակայն, պայմանավորված է ոչ թե դատական համակարգի կառուցվածքային թերությամբ, այլ կառավարման համակարգի թերությամբ՝ քաղաքական կամքի բացակայությամբ և քաղաքական մենիշխանությամբ:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Անհրաժեշտ է մեծացնել ԱԽ լիազորությունների շրջանակը ի հաշիվ ԴՆԽ-ի գործառնությունների: ԱԽ-ն պետք է դառնա քաղաքականություն մշակող մարմին (policy maker) և այս առումով անհրաժեշտ է նրա լիազորությունները պետք է լինեն ավելին, քան միայն կարգապահական վարույթներ հարուցելու և դատավորների նշանակման ու առաջխաղացման լիազորություններն են:</li> <li>• ԱԽ-ին պետք է հանձնել հատկապես ԴՆԽ-ի այն լիազորությունները, որոնցով վերջինս մշակում է դատական քաղաքականություն, օրինակ, դատական գործավարության, վարչարարության, կադրերի կառավարման կանոններ սահմանելու ԴՆԽ-ի լիազորությունները՝ ներառյալ նաև բյուջետային քաղաքականություն վարելու լիազորությունը:</li> <li>• Որպեսզի վերը նշված լիազորությունները հնարավոր լինի իրականացնել, ԱԽ-ն պետք է դառնա մշտական հիմունքներով</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• Նկատելի ուշադրության կենտրոնում է հայտնվել Արդարադատության խորհուրդը: Շատ փորձագետներ հենց այս մարմնի մեջ են տեսնում դատական համակարգի անկախության երաշխավորի պոտենցիալը՝ պայմանով, որ վերանայվի այս մարմնի ձևավորման կարգը և դրա լիազորությունների շրջանակը: Առաջարկվել են ԱԽ-ի ձևավորման տարբեր մոդելներ՝ այդ թվում նաև այնպիսի մոդելներ, որոնք համապատասխանում են խորհրդարանական կառավարման մոդելին:</li> <li>• Հարցվողների մեծ մասը բացասաբար է արտահայտվել երկաստիճան դատական համակարգի անցնելու հայեցակարգային առաջարկի նկատմամբ գտնելով, որ դրա համար օբյեկտիվ անհրաժեշտություն չկա: Մեծամասամբ բացասական կարծիք է հնչել նաև երդվյալ ստենակալների ինստիտուտի կիրառման առումով:</li> </ul>	<p>գործող մարմին: Այսպիսով, դաշտում կմնան երկու հիմնական մարմիններ՝ Արդարադատության խորհուրդը որպես քաղաքականություն մշակող մարմին և Դատական դեպարտամենտը որպես քաղաքականությունը իրականացնող:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Դատական համակարգին պետք է տրվի ինքնուրույն կերպով օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք և այդ գործառույթը, անկասկած, պետք է տրվի ԱԽ-ին:</li> <li>• Անկախ այն հանգամանքից, թե ԱԽ կազմավորման ինչ մոդել կընտրվի, պետք է պահպանվի հիմնական սկզբունքը. ԱԽ կազմի առնվազն կեսից ավելին պետք է լինեն դատավորներ, ովքեր պետք է ընտրվեն «իրենց ներսից»՝ դատավորներից կողմից:</li> <li>• Ներկա իրավակարգավորումը, համաձայն որի դատավորների թեկնածուների ցուցակը և դատավորների առաջխաղացման ցուցակը հաստատում է ՀՀ Նախագահը, նպատակահարմար է կիրառել խորհրդարանական կառավարման համակարգում, որտեղ նախագահը կունենա սահմանափակ լիազորություններ:</li> <li>• Կամ պետք է անցնել երկաստիճան դատական համակարգի, որը կնպաստի դատական ռեսուրսների (այդ թվում նաև քաղաքացիների ռեսուրսների) զգալի տնտեսման, կամ պահպանել եռաստիճան դատական համակարգը՝ պայմանով, որպեսզի դատական քննությունը ավարտվի վերաքննիչ դատարանում, իսկ Վճռաբեկ տիրույթը իրավամբ կմնա որպես գործի վերանայման, այլ ոչ թե բողոքարկման տիրույթ:</li> <li>• Անհրաժեշտ է Վճռաբեկ դատարանը վերանվանել «Գերագույն դատարան»՝ հաշվի առնելով Մահմանադրության 92-րդ հոդվածի ուժով այս դատարանի գործառույթները և 2005 թվականից ի վեր այս դատարանի գործունեությունը:</li> <li>• Գտնում ենք, որ երդվյալ ստենակալների ինստիտուտի կիրառման համար չկա արդարադատության ընդհանուր շահից բխող օբյեկտիվ անհրաժեշտություն և իրական հասարակական պահանջ:</li> </ul>
<p><b>Հանրաքվեի սահմանադր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Մասնագետների գնահատմամբ, հանրաքվեն միանշանակ ընկալվում է որպես ժողովրդավարական կարևորագույն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Անհրաժեշտ է բարձրացնել հանրաքվեի և պետիցիաների հանդեպ ժողովրդի վստահությունը:</li> </ul>

<p><b>ական երաշխիքները (Հ. Տիգրանյան)</b></p>	<p>գործիք, որը, ցավոք, Հայաստանում կիրառվում է միայն Սահմանադրության փոփոխությունների ժամանակ: Մինչդեռ քաղաքացիները այնքալ էլ չեն կարևորում հանրաքվեի նշանակությունը և դրան մասնակցելը համարում են անիմաստ գործ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը հստակեցված չէ, ինչը հանրաքվե նախաձեռնելու՝ իշխանությունների հայեցողական լիազորության չարաշահման պատճառ կարող է դառնալ:</li> <li>• Հանրաքվեի նախաձեռնություններում ժողովրդի դերը պասիվ է, քանի որ վերջինս իրեն պահանջատեր չի զգում:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Մշակել հստակ մեխանիզմներ՝ հանրաքվեի կազմակերպման և անցկացման գործընթացը թափանցիկ դարձնելու համար:</li> <li>• Կատարելագործել ընտրությունների իրականացման մեխանիզմները, բարձրացնել ընտրությունների արդյունքների վստահելիության և ճշգրտության աստիճանը:</li> <li>• Հանրությանը տալ հանրաքվեի նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք:</li> <li>• Հստակեցնել այն հարցերի շրջանակը, որոնց սահմաններում հանրությունը կարող է հանդես գալ հանրաքվե իրականացնելու նախաձեռնությամբ:</li> </ul>
<p><b>Տեղական ինքնակառավարման սահմանադրափրավական բարեփոխումների հայեցակարգ ային հիմնադրույթները (Հ. Տիգրանյան)</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Տեղական ինքնակառավարման համակարգում կան բազմաթիվ խնդիրներ, որոնք սահմանադրության հայեցակարգը լիարժեքորեն չեն արտացոլում: Այդ խնդիրները վերաբերում են ոչ միայն ժողովրդավարությանը, այլև կառավարման ժողովրդավարությանը: Հայեցակարգը չի տալիս լուծման հնարավոր ուղիներ, բացի միջհամայնքային միավորումներ ձևավորելուց և ավագանու դերի բարձացումից:</li> <li>• Տեղական ինքնակառավարման ամենամեծ խնդիրներից է համայնքային բյուջի ձևավորումը և ֆինանսները չտնօրինելը:</li> <li>• ՏԻՄ-երը բավականաչափ ազատ և ինքնուրույն չեն կենտրոնական իշխանությունից:</li> <li>• Համայնքի ղեկավարն ունի վճռորոշ ազդեցություն ավագանու որոշումների վրա, ուստի ավագանին չունի բավականաչափ ազատություն:</li> <li>• Մասնակցային կառավարման մակարդակը տեղերում շատ ցածր է, ինչը պայմանավորված է նաև ավագանու նիստին մասնակցելու իրավունքից համայնքի բնակիչների անտեղյակությամբ:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ապահովել ՏԻՄ-երի իրական անկախությունը և ինքնուրույնությունը:</li> <li>• Սահմանել ՏԻՄ-երի բյուջեի ձևավորման և օգտագործման առավել օպտիմալ կարգ:</li> <li>• Ապահովել մասնակցային կառավարումը ՏԻՄ-երում:</li> <li>• Բարձրացնել ավագանու դերը համայնքային նշանակության հարցերը լուծելիս:</li> </ul>



**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՌԱՋԱՏԱՐ ԽՈՒՄԲ**

Վարդանանց փ. 14/2, բն. 7  
0010 Երևան, Հայաստան  
Հեռ.՝ +374 10 564136, +374 91 300748  
Էլ.փոստ՝ [aprgroup@gmail.com](mailto:aprgroup@gmail.com)  
Վեբկայք՝ [www.aprgroup.org](http://www.aprgroup.org)

*Վաճառքի ենթակա չէ՝*